ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ Դ. ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎ. ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

4 (86). 2015

**«ԱՅԼԵ՛Վ ԵՐԲԵՔ.
ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»**

**«НИКОГДА БОЛЕЕ.
АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»**

**«NEVER AGAIN.
ARMENIA CAN NOT AFFORD TO LOSE ANY WAR»**

ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

РАЗВИТИЕ БОЕВЫХ ВОЗМОЖНОСТЕЙ

THE DEVELOPMENT OF COMBAT CAPABILITIES

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության բարձրագույն ղեկավարությունը
ՀԱՊԿ-ի հավաքական անվտանգության խորհրդի նիստում.
ձախից աջ՝ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան,
Նախագահ Սերժ Սարգսյան,
Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյան

Մոսկվա, 2015 թ. դեկտեմբերի 21



Հայաստանի և Ադրբեջանի նախագահների բանակցությունները՝
արտգործնախարարների, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների
և ԵԱՀԿ գործող Նախագահի անձնական ներկայացուցչի մասնակցությամբ

Բեռն, 2015 թ. դեկտեմբերի 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

4 (86). **2015**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քոթանջյան Հ. Ս.
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր, ՌԴ Ռազմական գիտությունների ակադեմիայի ընտրված իսկական անդամ, հակաահաբեկչության գծով գիտական փորձագետ (ԱՄՆ) (նախագահ)

Չիլինգարյան Դ. Ս.
(գլխավոր խմբագիր)

Ալեքսանյան Ա. Ջ.
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ապրիամով Է. Ա.
Ավետիսյան Վ. Ն.
Դավթյան Ա. Մ.
Իսախանյան Մ. Ռ.
Խաչատրյան Տ. Վ.
Խաչատուրով Յու. Գ.
Ղահրամանյան Ա. Բ.
Մարգարյան Վ. Հ.
Մարտիրոսով Լ. Ա.
Միրզաբեկյան Ա. Ռ.
Մուրադյան Կ. Ռ.
Յալանուզյան Ա. Կ.
(գլխ. խմբագրի տեղակալ)
Յոլչյան Ն. Ի.
Նազարյան Ա. Ս.
Շիրինյան Մ. Ա.
Սեդրակյան Ս. Գ.
Վարդանյան Ա. Գ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Տոնոյան Դ. Է.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Յու. Գ. Խաչատուրով, ՀՀ ԶՈՒ-ի մարտական կարողությունների զարգացման հիմնական ուղղություններն ու մեթոդները 9

Տ. Վ. Խաչատրյան, ՀՀ Զինված ուժերում զորքերի մարտական պատրաստության համակարգի կատարելագործումը՝ որպես մարտական կարողությունների զարգացման միջոց 20

Ա. Ջ. Ալեքսանյան, Զինվորական ստորաբաժանումներում ԲՀԱ գործընթացի կատարելագործումը՝ մարտական կարողությունների զարգացման համատեքստում 27

Մ. Ա. Չիլինգարյան, Սպառազինությամբ ու տեխնիկայով զինված ուժերի ապահովման խնդիրները մարտական կարողությունների զարգացման հեռանկարում 37

Ա. Մ. Դավթյան, Զորքերի մարտական կարողությունների արդյունավետ կիրառման պրոբլեմայնությունը 42

Ա. Բ. Ղահրամանյան, Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում կրթության համակարգի կատարելագործման հարցը՝ զորքերի մարտական կարողությունների մեծացման հայեցակետից . 49

Ս. Ռ. Գալստյան, ՀՕՊ-ի և ավիացիայի զարգացման հեռանկարները մարտական կարողությունների կատարելագործման համատեքստում . . . 58

Ա. Գ. Մարդոյան, Ա. Ա. Կոստանյան, Հրթիռային զորքերի և հրետանու զարգացման հեռանկարները դրանց մարտական կարողությունների մեծացման համատեքստում 64

ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Տեր Մովսես աբեղա Սարգսյան, Աստվածաշունչը պատերազմի և զինվորական ծառայության մասին 70

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գ. Մ. Արշակյան, ՀՀ–Թուրքիա հարաբերությունները ԼՂ հակամարտության լույսով. 1991–1994 թվականներ 78

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ա. Մ. Շահվերդյան, Բլոգ-կայքերը որպես սոցիալական համախմբման գործիք . . . 87

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հ. Յ. Սայադյան, Հա. Յ. Սայադյան, Հայաստանի Հանրապետության անտառային զանգվածների պահպանումը և ընդարձակումը՝ որպես ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոն 95

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Կ. Յալանուզյան, Ս. Գ. Սարդարյան, Հայոց ցեղասպանության որոշ էթնոհոգեբանական առումներ 106

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ. Ի. Գևորգյան, Բնակելի տարածության օգտագործման իրավունքի իրավական բնույթը 116

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հ. Մ. Գրիգորյան, Զինված հակամարտության բնույթը և դրա նշանակությունը միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կիրառման ծավալի որոշման համար 124

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ռ. Վ. Աղուզումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Լ. Ս. Արզումանյան, բանասիրական գիտությունների դոկտոր,
Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ս. Ա. Գալստյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ս. Գ. Գալստյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Կ. Ս. Դանիելյան,* կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր,
Բ. Ն. Հարությունյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Հ. Մաթևոսյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Ա. Հ. Մանթաշյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Մ. Մ. Մարգարյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Կ. Ս. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Յու. Ս. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Յ. Սայադյան,* աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ռ. Ա. Սաֆրաստյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ա. Հ. Սիմոնյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Հ. Ս. Սիսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 4 (86)**. 2015**
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С., доктор политических наук (РФ), профессор, действительный избранный член Академии военных наук РФ, научный эксперт по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Аветисян В. Н.*, *Айвазян Л. Г.*, *Айдинян Р. А.*, *Алексанян А. Дж.*, *Априамов Э. А.*, *Варданян А. Г.*, *Давтян А. М.*, *Елчян Н. И.*, *Исаханян М. Р.*, *Каграманян А. Б.*, *Маргарян В. Г.*, *Мартиросов Л. А.*, *Мирзабекян А. Р.*, *Мурадян К. Р.*, *Назарян А. С.*, *Седракян С. Г.*, *Тер-Григорьянц Н. Г.*, *Тоноян Д. Э.*, *Хачатрян Т. В.*, *Хачатуров Ю. Г.*, *Ширинян М. А.*, *Яланузян А. К.* (зам. глав. ред.)

СОДЕРЖАНИЕ

РАЗВИТИЕ БОЕВЫХ ВОЗМОЖНОСТЕЙ

Ю. Г. Хачатуров. Основные направления и методы развития боевых возможностей ВС РА . . . . . 9 (16)*

Т. В. Хачатрян. Совершенствование системы боевой подготовки войск в Вооруженных силах РА как средство развития боевых возможностей 20 (26)

А. Дж. Алексанян. Совершенствование процесса морально-психологического обеспечения в воинских подразделениях в контексте развития боевых возможностей 27 (35)

М. А. Чилингарян. Задачи обеспечения ВС вооружением и военной техникой в перспективе развития боевых возможностей 37 (40)

А. М. Давтян. Проблемность эффективного применения боевых возможностей войск 42 (47)

А. Б. Каграманян. К вопросу совершенствования системы образования в Военном институте им. В. Саргсяна с точки зрения увеличения боевых возможностей войск 49 (55)

С. Р. Галстян. Перспективы развития ПВО и авиации в контексте совершенствования боевых возможностей 58 (63)

А. Г. Мардоян, А. А. Костанян. Перспективы развития ракетных войск и артиллерии в контексте повышения их боевых возможностей 64 (68)

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ДУХОВНАЯ БЕЗОПАСНОСТЬ

Иеромонах Мовсес Саргсян. Священное писание о войне и военной службе 70 (76)

ИСТОРИЯ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

Г. М. Аршакян. Отношения между Арменией и Турцией в контексте Нагорно-Карабахского конфликта. 1991–1994 гг. 78 (86)

ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ

А. М. Шахвердян. Блоги как инструмент социального сплочения . . . 87 (94)

ЭКОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

О. Я. Саядян, А. Я. Саядян. Сохранение и расширение лесных массивов Республики Армения как важный фактор обеспечения национальной безопасности 95 (104)

ПОЛИТИЧЕСКАЯ ПСИХОЛОГИЯ

А. К. Яланузян, С. Г. Сардарян. Некоторые этнопсихологические аспекты Геноцида армян 106 (114)

ПРАВОВЕДЕНИЕ

А. И. Геворгян. Правовой характер права пользования жилым помещением 116 (123)

МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО

Г. М. Григорян. Характер вооруженного конфликта и его значение для определения объема применения норм международного гуманитарного права 124 (129)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

Р. В. Агузумцян, кандидат психологических наук, профессор;

Н. У. Аракелян, академик НАН РА;

Л. С. Арзуманян, доктор филологических наук;

Б. Н. Арутюнян, доктор медицинских наук, профессор;

В. М. Арутюнян, академик НАН РА; *Г. Е. Багдасарян,* академик НАН РА;

С. А. Галстян, доктор филологических наук, профессор;

С. Г. Галстян, доктор медицинских наук, профессор;

Г. А. Геворкян, академик НАН РА; *К. С. Даниелян,* кандидат биологических наук, доктор географических наук; *А. А. Манташян,* академик НАН РА;

М. М. Маргарян, доктор политических наук, профессор;

Г. Г. Матевосян, член-корреспондент НАН РА;

Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;

М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор;

К. С. Мосоян, доктор технических наук, профессор;

Р. А. Сафрастян, академик НАН РА, *О. Я. Саядян,* доктор геогрофических наук, профессор, *А. Г. Симонян,* член-корреспондент НАН РА,

А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор;

Ю. С. Чилингарян, академик НАН РА

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 4 (86)**. 2015**
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Science (RF), Professor, Elected Member of the Academy of Military Sciences (RF), Counterterrorism Fellow (USA) (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J., Apreamov E. A., Avetisyan V. N., Ayvazyan L. G., Davtyan A. M., Idinyan R. A., Isakhanyan M. R., Kaghramanyan A. B., Khachatourov Yu. G., Khachatryan T. V., Margaryan V. H., Martirossov L. A., Mirzabekyan A. R., Muradyan K. R., Nazaryan A. S., Sedrakyan S. G., Shirinyan M. A., Ter-Grigoryants N. G., Tonoyan D. E., Vardanyan A. G., Yalanuzyan A. K.* (Deputy Editor-in-Chief), *Yolchyan N. I.*

CONTENTS

THE DEVELOPMENT OF COMBAT CAPABILITIES

Yu. G. Khachatourov. The main directions and methods of developing the combat capabilities of the RA Armed Forces . . . . . 9 (18)*

T. V. Khachatryan. The improvement of the system of troops combat training in the RA Armed Forces as a means of developing combat capabilities 20 (26)

A. J. Aleksanyan. The improvement of the process of moral and psychological support in military units in the context of developing combat capabilities 27 (36)

M. A. Chilingaryan. The tasks of supporting the Armed Forces with weapons and military equipment in the perspective of developing combat capabilities 37 (41)

A. M. Davtyan. The challenge of the efficient use of troops combat capabilities 42 (48)

A. B. Ghahramanyan. To the issue of improving the education system in V. Sargsyan Military Institute in terms of increasing the troops combat capabilities 49 (56)

S. R. Galstyan. The perspectives of developing Air Defense and Aviation in the context of improving the combat capabilities 58 (63)

A. G. Mardoyan, A. A. Kostanyan. The perspectives of developing Rocket Forces and Artillery in the context of increasing their combat capabilities 64 (68)

SPIRITUAL SECURITY

Celibate Priest Movses Sargsyan. The Holy Writ about war and military service 70 (77)

* Numbers in brackets mean the page of the text in English.

HISTORY OF INTERNATIONAL RELATIONS

G. M. Arshakyan. Relations between Armenia and Turkey in the context of the Nagorno-Karabakh conflict. 1991–1994 . . . . . 78 (86)

INFORMATION SECURITY

A. M. Shahverdyan. Blogging as a tool of social cohesion 87 (94)

ECOLOGICAL SECURITY

Hov. Y. Sayadyan, Ham. Y. Sayadyan. The preservation and expansion of the woodlands of the Republic of Armenia as an important factor of ensuring national security 95 (105)

POLITICAL PCYCHOLOGY

A. K. Yalanuzyan, S. G. Sardaryan. Some ethnopsychological aspects of the Armenian Genocide 106 (115)

JURISPRUDENCE

H. I. Gevorgyan. The legal nature of the right to use living accommodation 116 (123)

INTERNATIONAL HUMANITARIAN LAW

H. M. Grigoryan. The nature of armed conflict and its significance for determining the scope of administrating the norms of the International Humanitarian Law 124 (130)

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

R. V. Aghouzoumtsian, Candidate of Psychological Sciences, Professor;
N. H. Arakelian, Full Member, NAS RA;
L. S. Arzumanyan, Doctor of Philology;
G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA;
Yu. S. Chilingarian, Full Member, NAS RA;
K. S. Danielyan, PhD in Biology, Doctor of Geography;
S. A. Galstyan, Doctor of Philology, Professor;
S. G. Galstyan, Doctor of Medical Sciences, Professor;
H. A. Gevorkian, Full Member, NAS RA;
B. N. Harutyunyan, Doctor of Medical Sciences, Professor;
V. M. Haroutyounian, Full Member, NAS RA;
A. H. Mantashian, Full Member, NAS RA;
M. M. Margaryan, Doctor of Political Sciences, Professor;
H. H. Matevosyan, Corresponding Member, NAS RA;
E. G. Minasyan, Doctor of Historical Sciences, Professor;
M. M. Miridjanian, Doctor of Medical Sciences, Professor;
K. S. Mossoyan, Doctor of Technical Sciences, Professor;
R. A. Safrastyan, Full Member, NAS RA;
Hov. Y. Sayadyan, Doctor in Geography, Professor;
A. H. Simonyan, Corresponding Member,
NAS RA; *H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor

ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

РАЗВИТИЕ БОЕВЫХ ВОЗМОЖНОСТЕЙ

THE DEVELOPMENT OF COMBAT CAPABILITIES

ՀՀ ԶՈՒ-Ի ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Յու. Գ. ԽԱՉԱՏՈՒՐՈՎ, գեներալ-գնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ պետ

ՀՀ և ԼՂՀ անվտանգության համար գլխավոր սպառնալիքը Ղարաբաղյան հակամարտությունը ոչ թե խաղաղ բանակցությունների եղանակով, այլ զինված ուժի կիրառմամբ լուծելու Ադրբեջանի ձգտումն է, որը դրսևորվում է սպառազինությունների մրցավազքի սանձազերծման, հրադադարի ռեժիմի անընդհատ խախտումների ձևով, ընդսմին վերջիններս հաճախ ուղեկցվում են դիվերսիոն խմբերի հանկարծագրոհներով, հրետանու կիրառմամբ, ինչպես նաև «տարբեր միջազգային հարթակներում հարևան պետության ղեկավարի շուրթերով հնչեցված անթաքույց սպառնալիքներով ու տարածքային նկրտումներով»[1]: ՈՒստի այդ սպառնալիքն ունի անմիջական և իրական բնույթ ու կարող է Ադրբեջանին հարմար ցանկացած պահի վերածվել ռազմական ագրեսիայի: Ընդսմին վերջին շրջանի զինված հակամարտությունների փորձը ցույց է տալիս, որ Ադրբեջանի հետ բախումը, ամենայն հավանականությամբ, ևս կլինի կարճատև և կուղեկցվի ինչպես մարտական, այնպես էլ ոչ մարտական միջոցների կիրառմամբ[2]: Ըստ այդմ՝ ՀՀ Զինված ուժերը, անկասկած, պետք է միշտ պատրաստ լինեն ռազմաքաղաքական իրադրության ցանկացած պայմաններում հետ մղելու ՀՀ ու ԼՂՀ անկախության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության դեմ ուղղված ցանկացած ագրեսիա: Այսինքն՝ ՀՀ-ում ԶՈՒ-ի շինարարության և զարգացման նպատակն է «պետության այնպիսի պաշտպանական ներուժի ապահովումը, որն անհրաժեշտ է հետ մղելու որևէ ագրեսիա՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի ֆիզիկական գոյությունը, ինքնիշխանությունն ու անկախությունը, պետության տարածքային ամբողջականությունը պաշտպանելու նպատակով»[3]:

ՀՀ ԶՈՒ-ի ներկայիս վիճակի, դրանց հետագա զարգացման ու մարտական կարողությունների մեծացման հարցերի ուսումնասիրությունը և լուծումների որոնումը մի մշտական առանցքային գործընթաց են, որը ԶՈՒ-ի ղեկավարությունն ու ՀՀ Կառավարությունն իրագործում են մեր պետության պաշտպանական համա-

[1] Տես *Ս. Մ. Օհանյան*, ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման էությունը և նպատակները: «ՀԲ», 2015, հմ. 3:

[2] Տես *Игорь Попов.* Военные конфликты: взгляд за горизонт (http://www.avnrf.ru/index.php/vse-novosti-sajta/527-voennye-konflikty-vzglyad-za-gorizont):

[3] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 24:

կարգի, կամ Պաշտպանության, հզորացման ու արդյունավետության մեծացման կազմակերպման շրջանակներում: Ընդսմին այդ խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես համաշխարհային և տարածաշրջանային աշխարհաքաղաքական ու ռազմաքաղաքական իրադրությունն ու դրա փոփոխման դինամիկան, պետության տնտեսական իրավիճակը՝ համընդհանուր տնտեսական փոփոխությունների հարաբերակցմամբ, ՌԳԹ առանձնահատկությունները, զինված ուժերի մարտական կարողությունների զարգացման՝ ռազմական գիտությամբ առանձնացվող ընդհանուր միտումները, օրինաչափությունները և հիմնական ուղղություններն ու մեթոդները, այնպես էլ մեր ազգային առանձնահատկությունները, հասարակական, բարոյահոգևոր և իրավական գիտակցության զարգացածության աստիճանը, տիրող միջանձնային մշակույթի յուրահատկությունները և այլն: Ըստ այդմ փորձենք վերլուծել, թե որոնք են մարտական կարողությունների զարգացման ներկայիս առաջավոր միտումները՝ մեր պայմաններին կիրարկմամբ[*]:

Հայտնի է, որ ԶՈՒ-ի հիմնական բնութագրիչներից մեկը հակառակորդին խոցելու ունակությունն է: Դրա մեծությունը, կամ չափը, գնահատելու, յուրային և հակառակորդի ուժերը համեմատելու, դրա հիման վրա այդ ուժերի կիրառման հետ կապված գործնական խնդիրներ լուծելու, այդ ուժերի օգտագործման արդյունավետությունը որոշելու նպատակով ռազմական գիտության մեջ կիրառվում է «մարտական կարողություններ (հնարավորություններ)» հասկացությունը:

Մարտական կարողությունը այն քանակական ու որակական ցուցիչների համախումբն է, որոնք բնութագրում են տրված ժամանակում և կոնկրետ իրադրության պայմաններում մարտական խնդիրը կատարելու՝ ստորաբաժանումների (զորամասերի, միավորումների, ԶՈՒ-ի) ունակությունը[4]:

Մարտական կարողությունները լինում են ընդհանուր և մասնակի: Ընդհանուր մարտական կարողությունները ստացված մարտական խնդրի կատարման ուղղությամբ ԶՈՒ-ի բոլոր զորամիավորումների (զորամասերի), ուժերի ու միջոցների կարողություններն են, որոնք հաշվարկում է ավագ պետը իրադրության կոնկրետ պայմաններում զորամիավորմանը (զորամասին) հիմնավորված մարտական խնդիր առաջադրելու համար: Մասնակի մարտական կարողությունները զորամիավորման (զորամասի), ուժերի ու միջոցների հնարավորություններն են՝ մարտական խնդիր ստանալու դեպքում: Զորատեսակների այն զորամասերի (ստորաբաժանումների) մարտական կարողությունները, որոնք գտնվում են տվյալ ուժերի կազմում կամ լրակցվել են որպես ուժեղացում, արտահայտվում են կրակային, հակազրահաօբյեկտների և ավիացիայի դեմ պայքար վարելու, տա-

[*] Որպես այդպիսիք պետք է առաջի հերթին նկատի ունենալ ՌԳԹ աշխարհագրական առանձնահատկությունները՝ լեռնային և լեռնաանտառային տեղանքը: Նման տեղանքում մարտի կազմակերպումը և՛ հարձակման, և՛ պաշտպանություն ունի էական յուրահատկություններ (տես *И. Н. Воробьев.* Тактика–искусство обороны. «Военная мысль» («ВМ»), 2003, № 8):

[4] Տես «Боевые возможности». «Военный энциклопедический словарь», т. 1. М., 2001, с. 201:

ռաշարժ կատարելու և այլ հնարավորություններ արտացոլող ցուցիչների միջոցով:

Մարտական կարողությունների ցուցիչները տարբեր զորատեսակների համար տարբեր են: Ցամաքային զորքերի համար դրանք են՝

– հակառակորդի այն խմբավորման մեծությունը, որի հարվածը կարող է հետ մղվել պաշտպանությունում, կամ որը կարող է ջախջախվել հարձակման ժամանակ (հանդիպական մարտում),

– պաշտպանության այն գոտու (շրջանի) ճակատի լայնությունը, որը հնարավոր է պահել պաշտպանության ժամանակ,

– այն տարածքի չափերը, որը հնարավոր է գրավել հարձակման ժամանակ (հանդիպական մարտում),

– ճեղքման հատվածի լայնությունը,

– հակառակորդի թիկունք թափանցման (մարտական խնդրի) խորությունը,

– այն ժամանակը, որում հնարավոր է կատարվել մարտական խնդիրը,

– հարձակման միջին արագությունը, որն անհրաժեշտ է հարձակողական օպերացիայում (հանդիպական մարտում) մարտական խնդիրը կատարելու համար,

– յուրային և հակառակորդի զորքերի այն կորուստները, որոնք այդ զորքերը կարող են կրել իրենց մարտական խնդիրները կատարելիս,

– մեկ կիլոմետր ճակատի վրա յուրային ուժերի և միջոցների տրված խտության ստեղծման ունակությունը և այլն[5]:

Այլ կերպ ասած՝ տվյալ ստորաբաժանման (զորամասի, միավորման, ԶՈՒ-ի) մարտական կարողությունը այն առավելագույն վնասն է, որը նա կարող է տրված ուժերով և միջոցներով, տրված ժամանակում, կոնկրետ իրադրության պայմաններում և նվազագույն կորուստներով հասցնել հակառակորդին:

Մարտական կարողությունները հաստատուն չեն և կախված են մի շարք գործոններից, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի.

ա) *քանակական գործոններ.* զինված պայքարի համար անհրաժեշտ անձնակազմի, սպառազինության ու ռազմական տեխնիկայի, զինամթերքի, վառելիքի, այլ նյութական միջոցների քանակը,

բ) *որակական գործոններ.* զինված պայքարի համար կիրառվող միջոցների մարտավարատեխնիկական բնութագրերը, զորքերի մարտունակությունը (մարտական պատրաստման մակարդակը, անձնակազմի բարոյահոգեբանական վիճակն ու մարտական փորձը, ստորաբաժանումների մարտական ներդաշնակության աստիճանը), զորքերի կառավարման, հետախուզության, ռադիոէլեկտրոնային պայքարի և մարտի համակողմանի ապահովման արդյունավետությունը, մարտական խնդիրների լուծման եղանակները,

գ) *ֆիզիկաաշխարհագրական գործոններ.* տեղանքը, եղանակը, օրվա ժամանակահատվածը և այլն[6]:

---

[5] Տես նույն տեղում:

[6] Տես *А. В. Гирин*. Организационно-штатная структура объединений, соединений и частей Сухопутных войск (http://samlib.ru/a/aleksandr_walerxewich_girin/struktura_glava_3.shtml):

Ռազմական գիտության գործնական խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ է գտնել զորախմբի (միավորման, ԶՈՒ-ի) մարտական կարողությունները թվային մեծությամբ բնութագրելու համապիտանի եղանակ: Այդ անհրաժեշտությունն առաջ է գալիս հետևյալ երկու հիմնական խնդիրների լուծման ժամանակ. ա) զինված ուժերի շինարարության ու զարգացման վերաբերյալ որոշումների հիմնավորում, բ) օպերացիայում (մարտում) կոնկրետ իրադրությունում ուժերի և միջոցների մարտական կիրառման վերաբերյալ որոշումների հիմնավորում: ԶՈՒ-ի կարողությունների զարգացման առնչությամբ անհրաժեշտ է.

– ԶՈՒ-ի սպառազինության տեսակների և քանակների, սպառազինման համակարգի զարգացման ուղղությունների և դրա առանձին տարրերի կատարելագործման գերակայությունների որոշում,

– ԶՈՒ-ի կազմակերպվածքի օպտիմալ տարբերակի ընտրություն,

– ռազմավարական, օպերատիվ և մարտավարական մակարդակներում ԶՈՒ-ի կիրառման և մարտական գործողությունների վարման ամենաարդյունավետ ձևերի ու եղանակների որոշում:

Այս խնդիրների լուծումը հավասարազոր է տվյալ համակարգի (ԶՈՒ-ի) այն վիճակի բնութագրիչների (սպառազինության քանակ և որակ, կազմակերպվածք, մարտավարություն և այլն) որոշման, որում համակարգի մարտական կարողություններն ունեն առավելագույն արժեք: Հետևաբար՝ ըստ այդ արժեքների կարելի է որոշել ԶՈՒ-ի մարտական կարողությունների զարգացման ամենաօպտիմալ (մարտական կարողությունների առավելագույն արժեքին հանգեցնող) ուղղությունները, ինչը ռազմական գիտության կարևոր խնդիրներից մեկն է:

Ինչպե՞ս քանակապես բնութագրել այն զորախմբի (միավորման, ԶՈՒ-ի) մարտական կարողությունը, որը կազմված է տարասեռ ստորաբաժանումներից (ինչպես վերը նշել ենք, յուրաքանչյուր զորատեսակի մարտական կարողությունների ցուցիչները տարբեր են): Այս հարցի լուծման նկատմամբ կան տարբեր մոտեցումներ: Մասնագիտական գրականության մեջ[7] առաջարկվող մոտեցումներից մեկն էլ այն է, որ զորախմբի (միավորման, ԶՈՒ-ի)՝ որպես համակարգի արդյունավետության միասնական բնութագիր է դիտվում նրա մարտական կարողությունը, որի թվային արժեքը սահմանվում է որպես մարտական խնդիրների կատարման ընթացքում այդ համակարգի կողմից հակառակորդին հասցված վնասի, իսկ ավելի ճշգրիտ՝ հակառակորդի խմբավորման խոցված օբյեկտների (դրանց կարևորության աստիճանի հաշվառմամբ) թվի մաթեմատիկական սպասում:

Հաշվարկումներում համակարգի ներկայիս վիճակը ընդունվում է որպես չափանմուշ, և ապագայում հնարավոր վիճակներին համապատասխանող մարտական կարողությունների արժեքները համեմատվում են միմյանց և չափանմուշի մարտական կարողության արժեքի հետ՝ առավելագույնը գտնելու նպատակով: Այդ հաշվարկումների համար անհրաժեշտ են ռազմատեխնիկական և օպերատիվ-մարտավարական ելակետային տվյալներ, որովհետև մարտական կարողությունները հաշվարկվում են կոնկրետ մարտական խնդրի լուծման համար, իսկ

[7] Տես *А. А. Бобриков*. Методика оценки боевых возможностей группировок войск в целях обоснования решений по строительству и применению ВС. «ВМ», 2009, № 12:

վերջինս կարող է ձևակերպվել միայն հնարավոր զինված հակամարտությունում կանխատեսվող օպերացիաների (մարտերի) հանգամանալից սցենարների հիման վրա: Սա չափազանց բարդ խնդիր է*, և հավանական հակառակորդի ու հնարավոր մարտական գործողությունների բնույթի մասին անհրաժեշտ տվյալները գործնականում ստացվում են ավելի պարզեցված եղանակով՝ միայն նրա ունեցած և հեռանկարում ունենալիք սպառազինության համակարգերի հատկությունների և հնարավորությունների վերլուծության հիման վրա՝ այն ենթադրությամբ, որ դրանք կիրառվում են օպտիմալ կազմակերպվածք ունեցող ԶՈՒ-ի կողմից, օպտիմալ եղանակով և մարտական գործողությունների բնութագրական դրվագներում, որոնք կարող են տեղ գտնել զինված հակամարտության ընթացքում: ՈՒստի մասնագիտական գրականության մեջ[8] առաջարկվում է օպերատիվ-մարտավարական ելակետային տվյալների որոշման համար մշակել մարտական գործողությունների մոդել, որը կարտացոլի հետազոտվող համակարգի մարտական գործողությունների բնույթը այն պատերազմում, որի համար այդ համակարգը ստեղծվում է (որում կիրառվելու է): Այդ մոդելը պետք է ներառի հակառակորդի բոլոր հնարավոր օբյեկտները, որոնք ենթակա են խոցման, հետազոտվող համակարգի (յուրային ԶՈՒ-ի) բոլոր խոցման միջոցները, զորքերի կիրառման կանխատեսվող ձևերն ու մարտական գործողությունների վարման եղանակները:

Պարզ համակարգերի (փոքր ստորաբաժանումների) դեպքում բոլոր այն գործոնների վերլուծմամբ, որոնցից կախված են մարտական կարողությունները, կարելի է գտնել դրանց մեծացման հիմնական ուղղությունները, այն է՝

– զորքերի մարտունակության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ կազմակերպվածքի և սպառազինման թիկունքային և այլ տեսակի ապահովման համակարգերի կատարելագործում, անձնակազմի լրահամալրում և այլն,

– զորքերի մարտական պատրաստման և հրամանատարական կազմի պատրաստման կատարելագործում,

– զորքերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացում,

– զորքերի կառավարման համակարգի կատարելագործում,

– մարտական գործողություններին զորքերի համակողմանի պատրաստմանն ուղղված միջոցառումների իրագործում,

– մարտական գործողությունների վարման ժամանակակից հնարների ու եղանակների կիրառում[9]:

ՀՀ ԶՈՒ-ի մարտական կարողությունները մեծացվում են միաժամանակ բոլոր վերոնշյալ ուղղություններով կատարվող անընդհատ ու հետևողական աշխա-

* Մասամբ այն լուծվում է ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման ընթացքում (տես *Դ. Է. Տոնոյան*, ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման սկզբունքներն ու մեթոդները: «ՀԲ», 2015, հմ. 3):

[8] Տես *Ա. Ա. Բոբրիկով*, Նշ. աշխ:

[9] Տես *Ա. Վ. Գիրին*, Նշ. աշխ.:

տանքի շնորհիվ: Մեծ ուշադրություն է դարձվում նաև սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով համալրմամբ ԶՈՒ-ի մարտական կարողությունների մեծացմանը: Խոսքն առաջին հերթին վերաբերում է ռազմավարական և օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիրներով, ժամանակակից համազարկային կրակի ռեակտիվ համակարգերով (ՀԿՌՀ) սպառազինմանը և համապատասխան մասնագետների պատրաստմանը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ առավել հեռանկարային է ԶՈՒ-ի սպառազինումը խոցման մեծ խորություն, մեծ հեռահարություն, կրակային և տարաշարժային մեծ հնարավորություններ ունեցող հրթիռային համակարգերով, ինչպիսիք են՝ «Սմերչ», «ՈՒրագան», «Սկատ» ՀԿՌՀ-ները: Միևնույն ժամանակ, կարևոր միջոց է նաև սպառազինության առկա համակարգերի արդիականացումը, ինչն արդյունավետ կերպով իրագործվում է Հայաստանում: Դրա վառ օրինակն են իրենց հուսալիությունը փորձով ապացուցած «8K14-1» հրթիռով «Սկատ 9K-72» հրթիռային համալիրները, որոնց արդիականացման շնորհիվ էապես մեծացել է թիրախի խոցման արդյունավետությունն ու նվազել է արձակմանը հրթիռի պատրաստման և արձակման ժամանակը:

Առաջատար երկրների փորձի վերլուծությունը վկայում է, որ ՀՕՊ-ի զորքերի և ավիացիայի մարտական կարողությունների մեծացման արդյունավետ միջոցներ են՝

– փոքր հեռահարության ժամանակակից զենիթային կրակային միջոցների և ՌԷՊ-ի միջոցների հիման վրա օբյեկտային ՀՕՊ-ի արդյունավետ համակարգի ստեղծումը,

– ավիացիայի զինումը հեռանկարային կառավարման* ավտոմատացված համակարգերով, ինչը հնարավորություն կտա անկախ եղանակային և լուսավորության պայմաններից հայտնաբերելու և ոչնչացնելու գերճշգրիտ զենքերը, ռազմավարական և օպերատիվ-մարտավարական հրթիռներն ու թռչող ապարատները,

– եղած անօդաչու թռչող ապարատների (ԱԹԱ) արդիականացումը, ինչը բազմապատիկ էժան է, քան արտասահմանում արտադրված ԱԹԱ-ների գնումը:

Օդում գերազանցության հասնելու համար կարևոր նշանակություն ունի տարբեր հեռահարությամբ հակաօդային համալիրների խելամիտ համակցումը, մասնավորապես՝ ՀՕՊ-ի զորքերի զինումը հեռագործ, մերձագործ ու կրովի զենիթահրթիռային համալիրներով, գործողության տարբեր շառավիղներով ռադիոտեղորոշումային կայանքներով: ՀՕՊ-ի համակարգում նպատակահարմար է կի-

* Հեռանկարային կառավարման ելակետն այն ենթադրությունն է, որ կառավարման օբյեկտը զարգանալու է անցյալում կատարված փոփոխությունների արտարկման (էքստրապոլյացիայի) հիման վրա, այսինքն՝ օբյեկտի (երևույթի) մի մասի (անցյալի) դիտարկմամբ ստացված եզրակացությունները տարածվում են դրա մյուս մասի (ապագայի) վրա (տես *М. В. Черняков, Г. В. Столяров*. Перспективы развития автоматизированных систем управления полетами, навигации, посадки и связи государственной авиации. «Научный вестник Московского государственного технического университета гражданской авиации», 2010, № 152 (http://cyberleninka.ru/article/n/perspektivy-razvitiya-avtomatizirovannyh-sistem-upravleniya-poletami-navigatsii-posadki-i-svyazi-gosudarstvennoy-aviatsii)):

րառել ավտոմատ կառավարման համակարգով հեռանկարային կառավարմամբ զենիթահրթիռային զենքի միասնական համակարգ, ինչը հնարավորություն է տալիս հայտնաբերելու և ոչնչացնելու հակառակորդի մարտական հրթիռներն ու թռչող ապարատները: Ընդ որում, այդ խնդիրը լուծվում է առավելապես տարաշարժուն ուժերով ու միջոցներով, որոնք ունակ են փոփոխելու իրենց դիրքը, ինչի շնորհիվ կտրուկ նվազում է թևավոր հրթիռներով դրանց խոցման հավանականությունը: ՀՕՊ-ի միջոցներին հակառակորդի հարվածների արդյունավետությունը նվազեցնելու տեսակետից անհրաժեշտ է լայնորեն կիրառել ռադիոտեղորոշումային ճառագայթման շարժական նմանարկիչներ: Թռիչքի վերջնական տեղամասում ուղղորդման պասիվ ջերմացուցային համակարգերով հրթիռներին հակազդեցության համար հաճախ ստեղծվում են կեղծ ջերմային թիրախներ, ինչը օպերատիվ քողարկման միջոցառումների իրագործման հետ մեկտեղ նվազեցնում է իրական օբյեկտի խոցման հավանականությունը:

Հայաստանի նման աշխարհագրական դիրք ու բնակլիմայական պայմաններ ունեցող տարածքների համար նպատակահարմար են հատուկ նախանշանակման ստորաբաժանումների դերի ու մարտական կարողությունների մեծացումը, նշանառուների և իջազորային (դեսանտային) ստորաբաժանումների պատրաստման մակարդակի բարձրացումը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ նման ձեռնարկումները հնարավորություն են տալիս հակառակորդի տարածքի օպերատիվ խորությամբ լուծելու մի շարք մարտական խնդիրներ: Չեն կորցրել իր նշանակությունը նաև զորքերի մարտական կարողությունների մեծացումը օպերատիվ ուղղությունների վրա, ամբողջ առաջնային գծում նորագույն ԱԹԱ-ների լայն և բազմանպատակային կիրառումը, ինչպես նաև ստեղծել ռադիոտեղորոշումային և տեսահսկման դաշտեր՝ հակառակորդի դիվերսիոն-հետախուզական գործողությունները բացառելու համար: Այդ նպատակով կիրառվում են նոր ֆիզիկական սկզբունքներով* գործող հայտնաբերման և զատորոշման համակարգերով:

ԶՈՒ-ի մարտական կարողությունների մեծացմանն ուղղված նման քայլերը ենթադրում են առաջատար մասնագետների պատրաստում, ինչը նույնպես մարտական կարողությունների մեծացման միջոց է: Այսպես. ՀՀ ԶՈՒ-ն ներկայումս լրահամալրվում է պայմանագրային զինծառայողներով, որոնց մի մասը, դաշտային ուսումնական կենտրոններում համապատասխան պատրաստում անցնելով կամ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի հենքի վրա ավարտելով 6-

* «Նոր ֆիզիկական սկզբունքները» պայմանական տերմին է, որով անվանում են սովորական զինատեսակներում (սառը զենք, հրազեն) կամ զանգվածային ոչնչացման զենքերում (միջուկային, քիմիական, մանրէաբանական) նախկինում չօգտագործված ֆիզիկական երևույթները: Այս սկզբունքների կիրառման վրա հենվող զենքերի մի մասը գոյություն ունի, մյուսը մշակվում է, երրորդը՝ դեռ երևակայական (վարկածային) բնույթ ունի: Նման զինատեսակներից են լազերային, ռադիոհաճախականային, փնջային, երկրաֆիզիկական, գենետիկական զենքերը և այլն (տես «Оружие на новых физических принципах». «Война и мир в терминах и определениях». Военно-политический словарь под общей редакцией Д. Рогозина. М., 2011–2013 (http://voina-i-mir.ru/article/505)):

ամսյա դասընթաց, ծառայության է անցնում հատուկ նախանշանակման ստորաբաժանումներում կամ մարտական հերթապահություն կատարող զորամասերում:

Քանի որ ԶՈՒ-ի մարտական կարողությունների մեծացումը կախված է նաև զորքերի կառավարման որակից, նպատակահարմար է ստեղծել հեռանկարային կառավարման համակարգեր: Շնորհիվ մշտապես թարմացվող տվյալների վերլուծության՝ հրամանատարին կարճ ժամանակամիջոցում ավտոմատ կերպով կներկայացվեն զորքերի գործողությունների ու կրակի կառավարման մի շարք կշռադատված տարբերակներ, որոնցից նա կընտրի իր պատկերացմամբ ամենաօպտիմալը: Այս առումով անհրաժեշտություն է առաջանում ստեղծելու օպերատիվ-մարտավարական հաշվարկումների արդիական ծրագիր, որում հաշվի առնվեն մարտական գործողությունների վրա ազդող կարևոր գործոնները, մարտի ընթացքն ու արդյունքները:

ՀՀ ԶՈՒ-ի ղեկավարությունը, նկատի ունենալով վերը շարադրվածը, հետևողական ու բազմակողմանի աշխատանք է կատարում ԶՈՒ-ի մարտական կարողությունների մեծացման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա բարդ անվտանգային միջավայրի պայմաններում էապես բարձրացնելու Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության մակարդակը:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ И МЕТОДЫ РАЗВИТИЯ БОЕВЫХ ВОЗМОЖНОСТЕЙ ВС РА

Ю. Г. ХАЧАТУРОВ, генерал-полковник, Начальник ГШ ВС РА

РЕЗЮМЕ

Боевые возможности – это совокупность количественных и качественных показателей, характеризующих способность подразделений, частей, соединений по выполнению определенных боевых задач в установленные сроки и в конкретных условиях обстановки. Боевые возможности зависят от ряда количественных (численности л/с и ВВТ и др.), качественных (уровни боевой подготовки, морально-психологического состояния л/с, эффективность управления и др.) и физико-географических факторов.

Повышение боевых возможностей ВС является одной из главных задач государства. Определение оптимальных путей увеличения боевых возможностей является непрерывным процессом, требующим учета как глобальной, так и региональной геополитической и военно-политической обстановки, динамики ее изменения, экономической ситуации в государстве, особенностей ТВД, достижений военной науки в области развития методов совершенствования боевых возможностей, а также национальных особенностей, уровней общественного, морально-духовного и правового сознания, особенностей культуры межличностного общения и т. д.

В расчетах существующее состояние системы (ВС) принимается за базовое. Для определения максимального значения боевых возможностей

все значения, соответствующие возможным состояниям системы, сравниваются между собой и с базовым. Эти расчеты производятся на основе военно-технических и оперативно-тактических исходных данных, для определения которых разрабатывается модель боевых действий, учитывающая вероятный характер действий системы в будущей войне.

Как показывает анализ, повышению боевых возможностей ВС способствуют: оснащение ВС современными образцами вооружения и военной техники; модернизация наличного ВВТ в целях возрастания их эффективности; повышение боеспособности войск за счет повышения их боевой выучки и подготовки командного состава; поддержание высокого морально-психологического состояния л/с; совершенствование системы управления войсками и системами оружия; проведение мероприятий по всесторонней подготовке общевойсковых формирований к ведению боевых действий; применение современных тактических приемов и способов ведения боевых действий.

В Вооруженных силах РА ведется непрерывная, последовательная работа по всем упомянутым направлениям. Большое внимание уделяется увеличению боевых возможностей ВС посредством их оснащения вооружением и военной техникой. Согласно международному опыту, наиболее перспективным является оснащение ВС современными реактивными системами залпового огня, ракетными комплексами стратегического и оперативно-тактического назначения, а также модернизация имеющихся на вооружении систем в целях повышения их эффективности.

Действенными средствами повышения боевых возможностей войск ПВО и авиации в целях достижения превосходства в воздухе являются создание эффективной системы объектовой ПВО на основе современных зенитных огневых средств малой дальности и средств РЭБ, укомплектование авиации автоматизированными системами перспективного управления (АСПУ), модернизация имеющихся на вооружении беспилотных летательных аппаратов нового образца, оснащение войск ПВО противовоздушными и радиолокационными комплексами дальнего, среднего и ближнего действия, создание единой системы зенитного ракетного оружия с АСПУ.

В природно-климатических условиях Армении, согласно рекомендациям военной науки в данной сфере, целесообразно также осуществлять мероприятия по повышению уровня подготовки подразделений спецназа, снайперов и десантных подразделений, увеличению боевых возможностей войск на оперативных направлениях, модернизации и применению новейших беспилотных летательных аппаратов по всему переднему краю РА, созданию поля видеонаблюдения и радиолокации в целях исключения диверсионно-разведывательных действий противника.

В рамках данных мероприятий предусматриваются совершенствование системы подготовки классных специалистов и системы управления войсками, в частности, подготовка военнослужащих по контракту в полевых учеб-

ных центрах и создание автоматизированной системы перспективного управления войсками.

Таким образом, руководство ВС РА ведет последовательную и многоплановую, основанную на достижениях современной военной науки и военного искусства работу по увеличению боевых возможностей ВС с нацелом на повышение уровня военной безопасности РА в условиях сложной безопасностной среды с трудно прогнозируемой динамикой ее изменений.

THE MAIN DIRECTIONS AND METHODS OF DEVELOPING THE COMBAT CAPABILITIES OF THE RA ARMED FORCES

Yu. G. KHACHATOUROV, Colonel General, Chief of the Main Staff, RA Armed Forces

SUMMARY

Combat capabilities are a set of quantitative and qualitative indicators defining the ability of sub-units, units, and formations to carry out certain combat missions meeting deadlines and in specific environments. Combat capabilities are dependent on a number of quantitative (manpower strength and quantity of Weapons and Military Equipment, etc.), qualitative (levels of combat training, moral and psychological condition of the personnel, control efficiency, etc.) and physiographic factors.

The improvement of combat capabilities of the Armed Forces is one of the main objectives of the state. The identification of the best ways to increase combat capabilities is a continuous process requiring consideration of both global and regional geopolitical and military-political background, dynamics of its change, economic situation in the state, peculiarities of the theatre of operations, achievements of military science in the development of improvement methods of combat capabilities, as well as national features, levels of social, moral-spiritual and legal awareness, peculiarities of the culture of interpersonal communication, etc.

The current state of the system (of the Armed Forces) is taken as a base in the calculations. To determine the maximum value of combat capabilities, all the values corresponding to the possible states of the system are compared with each other and with the basic one. These calculations are made based on the military-technical and operational-tactical initial data, which are identified through the development of a model of combat actions, taking into account the possible nature of actions of the system in a future war.

As the analysis shows, the increase of combat capabilities of the Armed Forces is furthered by: equipping the Armed Forces with modern samples of weapons and military equipment; modernizing the available weapons and military equipment to raise their effectiveness; enhancing troops' fighting efficiency through the improvement of their combat skills and training of the

command staff; maintaining high moral and psychological condition of the personnel; improving the command and control system and weapons systems; making arrangements for comprehensive training of combined arms formations to conduct warfare; applying modern tactical techniques and methods of conducting warfare.

Continuous, consistent work in all of the mentioned directions is carried out in the RA Armed Forces. Great attention is paid to the increase of combat capabilities of the Armed Forces by equipping them with weapons and military equipment. According to the international experience, the most perspective is the equipment of the Armed Forces with the contemporary reactive systems of volley fire, missile complexes of strategic and operational-tactical purpose, as well as the upgrade of the existing systems to promote their efficiency.

The effective means of developing combat capabilities of the troops of Air Defense and Aviation for achieving air superiority are the establishment of an effective system of on-site Air Defense based on the modern anti-aircraft fire means of short range and means of electronic warfare, the replenishment of the aviation with Perspective Automated Control Systems (PACS), the modernization of the existing unmanned aerial vehicles of a new model, the equipment of the Air Defense troops with anti-aircraft and radar complexes of far, medium and short range, the creation of an integrated system of anti-aircraft missile armaments with PACS.

In Armenia's natural-climatic conditions, according to the recommendations of military science in this sphere, it is also expedient to undertake activities to raise the level of the training of special forces units, snipers and landing units, to increase troops combat capabilities in the operational directions, to upgrade and employ the latest unmanned aerial vehicles along the RA forefront, to create the field of video surveillance and radiolocation to prevent the enemy's subversive and reconnaissance actions.

These activities include improving the training of top-class specialists and the command and control system, particularly, the training of contract servicemen in field training centers and creating perspective automated control system.

Thus, the leadership of the RA Armed Forces conducts consistent and multi-aspect work based on the achievements of modern military science and military art to increase combat capabilities of the Armed Forces with the aim of raising the level of the RA military security in a complex security environment with the hard-to-predict dynamics of its changes.

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԶՈՐՔԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Տ. Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, գնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի մարտական պատրաստության[*] վարչության պետ

Զինված պայքարի միջոցների ու եղանակների մշտական զարգացումը և ժամանակակից համազորային մարտում տեղի ունեցող համապատասխան փոփոխությունները, մեր տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրության դժվար կանխատեսելիությունը, ՀՀ և ԼՂՀ սահմաններում Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի մշտական խախտումները, նրա վարած ռազմատենչ քաղաքականությունն ու արագ տեմպերով սպառազինումը մեծացրել են ՀՀ ԶՈՒ-ում մարտական պատրաստությանը ներկայացվող պահանջները: Ըստ այդմ առաջադրվել են մարտական պատրաստության նոր՝ ավելի բարդ խնդիրներ, որոնց լուծումը, համապատասխանաբար, պահանջում է ավելի բարդ մեթոդներ, ճիշտ պլանավորում, մարտական պատրաստության ժամանակ զորքերի ուսումնավարժեցման հմուտ օպերատիվ ղեկավարում և մշտական կատարելագործում:

Մարտական պատրաստությունը անձնակազմի ռազմական ուսումնավարժեցման ու դաստիարակության, ստորաբաժանումների, զորամասերի, զորամիավորումների ու դրանց կառավարման մարմինների մարտական ներդաշնակեցմանը նպատակաուղղված կազմակերպված գործընթաց է՝ մարտական խնդիրների կատարման և ըստ իրենց նախանշանակման մարտական գործողությունների վարման ապահովման նպատակով[1]:

Մարտական պատրաստությունը զորքերի, դրանց կառավարման մարմինների (շտաբների) և հրամանատարների ամենօրյա գործունեության հիմնական բովանդակությունն է, որն իրականացվում է ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ պատերազմի ժամանակ և նպատակ ունի պետությունն ապահովելու

---

[*] Սույն հոդվածում հեղինակի պնդմամբ *подготовка* և *готовность* ռուսերեն ռազմագիտական տերմինների դիմաց մեր հանդեսում ընդունված և հայերենի նորմերին համապատասխանող *«պատրաստում»* և *«պատրաստություն»* տերմինների փոխարեն համապատասխանաբար օգտագործված են պաշտպանության համակարգում տարածում ստացած *«պատրաստություն»* և *«պատրաստականություն»* սխալ տերմինները:– *Խմբ.*:

[1] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ա. Ե. Սարգսյան,* Պաշտպանական–անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն բառարան: Ե., 2012, էջ 354:

իրենց առաջադրված խնդիրների արդյունավետ կատարմանը պատրաստ զինված ուժերով[2]: Մարտական պատրաստությունն ուղղված է զորքերի մարտունակության ու մարտական պատրաստականության մակարդակների բարձրացմանը, ինչով մեծապես պայմանավորված է ԶՈՒ-ի մարտական կարողությունների զարգացումը:

Մարտական պատրաստության գործընթացում կարելի է առանձնացնել երկու բաղադրիչ. բովանդակային (ի՞նչ սովորեցնել) և մեթոդական (ինչպե՞ս սովորեցնել): Այս երկու բաղադրիչներն էլ մշտապես առկա են մարտական պատրաստության յուրաքանչյուր տարրում, որոնք են.

1. մարտական պատրաստության պլանավորում,
2. զինծառայողների անհատական պատրաստություն,
3. ստորաբաժանումների, զորամասերի ու միավորումների պատրաստություն (ներդաշնակեցում),
4. հրամանատարների մեթոդական պատրաստություն,
5. գործընթացի ուսումնանյութական ապահովում,
6. գործընթացի վերահսկում և ենթականերին օգնության ցուցաբերում: Ինքնին հասկանալի է, որ մարտական պատրաստության արդյունավետությունը պայմանավորված է յուրաքանչյուր տարրի արդյունավետությամբ: ՈՒստի դիտարկենք ամեն մի տարրի արդյունավետության մեծացման մեր կարծիքով առավել օպտիմալ ուղղությունները:

Մարտական պատրաստության գործընթացի պլանավորումը հրամանատարի, նրա տեղակալների, շտաբի, զորատեսակների ու ծառայությունների պետերի կոլեկտիվ աշխատանքն է, որը նպատակաուղղված է սպաների, ղեկավարման մարմինների և զորքերի՝ մարտական գործողություններ վարելու հմտությունների ուսուցման տրամաբանական հաջորդականության որոշմանը, գրաֆիկական պատկերմանը, մարտում հաստիքային ՍՌՏ կիրառման եղանակների ուսումնասիրմանը: Ըստ միջազգային փորձի վերլուծության՝ այս տարրի կատարելագործման առաջնային և արդյունավետ քայլերից է «Մարտական պատրաստության ավտոմատ կառավարման համակարգի» (ՄՊԱԿՀ) ներդրումը: Դրա շնորհիվ կրճատվում է պլանավորման համար անհրաժեշտ ժամանակը, աշխատանքները իրականացվում են կենտրոնացված, այսինքն՝ սեղմ ժամկետներում վերահսկվում է պլանավորումն ստորաբաժանումներից մինչև զորամիավորումներ: ՄՊԱԿՀ-ն վերադասին հնարավորություն է տալիս դեռ պլանավորման փուլում շտկելու ենթակա ստորաբաժանումների թույլ տված վրիպումներն ու սխալները: Այլ կերպ ասած՝ մարտական պատրաստության պլանավորման կատարելագործմամբ կատարելագործվում են նաև այդ գործընթացի վերահսկման և ենթականերին օգնության ցուցաբերման մեխանիզմները:

ԶՈՒ-ի մարտական պատրաստության բովանդակության որոշման հարցում կարևոր գործոն է հնարավոր զինված բախման հավանական բնույթի որոշումը, որովհետև մարտական պատրաստության հիմնական սկզբունքներից է «զորքե-

[2] Տես «Боевая подготовка». «Военный энциклопедический словарь», Т. 1. М., 2001, с. 192:

րին ուսուցանել այն, ինչն անհրաժեշտ է մարտի դաշտում»[3]: Այս սկզբունքով նախատեսվում է զինծառայողների և ստորաբաժանումների ուսումնավարժեցում մարտական իրադրությանը առավելագույն չափով մոտեցված պայմաններում՝ գործնականում ժամանակակից զենքերի ու ռազմական տեխնիկայի օգտագործմամբ: Բացի համապատասխան գիտելիքներից ու հմտություններից, դա նաև նպաստում է զինծառայողների հոգեկան ու ֆիզիկական տոկունության, պատերազմական զրկանքները կրելու ունակությունների ձևավորմանը: Ըստ այդմ մարտական պատրաստության պլանավորման ժամանակ առանձնահատուկ կարևորություն է տրվում ուսուցման նոր ծրագրերի, ուսուցման կազմակերպման ու իրականացման արդի մեթոդների ներդրմանը, ժամանակակից վարժասարքերի և այլ ուսումնանյութական բազայի կիրառմանը:

ՀՀ ԶՈՒ-ում մեծ կարևորություն է տրվում զինծառայողների անհատական պատրաստությանը, նրանց ճիշտ ուսումնավարժեցմանը: Զինծառայողների անհատական պատրաստությունը ԶՈՒ-ի երիտասարդ շարքային զինվորների ուսումնառությունն է՝ մարտում իրենց պարտականությունները կատարելու, զենքի, ռազմական տեխնիկայի հետ վարվելու և ամենօրյա ծառայություն կատարելու համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ձեռքբերման նպատակով[4]:

Անհատական պատրաստությունը ձևավորում է մարտում արագ կողմնորոշվելու, հաստիքային զենքից, ստորաբաժանման ռազմական տեխնիկան գրագետ շահագործելու և կրակ վարելու, առաջադրված խնդիրը հստակորեն կատարելու հմտություններ ու վարպետություն:

Ժամանակակից մարտը զինվորից պահանջում է բարձր մակարդակի բարոյահոգեբանական կայունություն ու ֆիզիկական պատրաստություն, ինչպես նաև՝

– վարպետություն. զինծառայողը պետք է հասնի գործողությունների կատարման ավտոմատացմանը, ձեռք բերի ինքնավստահություն և խնդրի կատարման հաստատակամություն,

– հնարամտություն. զինծառայողը պետք է պատրաստ լինի ժամանակակից մարտում ոչ ստանդարտ գործողությունների, որոնց արդյունքը հակառակորդի ապակողմնորոշումն ու շփոթեցումն են,

– հանդգնություն, որի շնորհիվ հակառակորդի կամքը կընկճվի, իսկ յուրային զինվորների մարտական ոգին էլ ավելի կբարձրանա:

ՈՒստի զինծառայողը պետք է լինի հոգեպես ուժեղ, բարոյապես կոփված, ունենա հաղթանակի հասնելու անսասան կամք, լինի ֆիզիկապես պատրաստված և ընդունակ՝ հաղթահարելու ցանկացած դժվարություններ ու զրկանքներ:

Այս հատկությունները ձևավորելու նպատակով մարտական պատրաստության ծրագրերում կատարվում են համապատասխան փոփոխություններ: Այժմ շեշտը դրվում է դաշտային վարժվածության աստիճանի մեծացման, նյութի մատչելիության ապահովման և առարկաների համալիր ուսուցման սկզբունքի (այն է՝ մի քանի առարկաների դասավանդումը որպես մեկ առարկա) կիրառման վրա: ՀՀ ԶՈՒ-ի մարտական պատրաստության վարչությունում կատարելագործ-

[3] Տես նույն տեղում:

[4] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ա. Ե. Սարգսյան,* նշ. աշխ., էջ 353:

վում են նաև ենթասպաների, պայմանագրային սերժանտների, ուսումնական զորամասերի պատրաստության ծրագրերը:

Ստորաբաժանումների և զորամասերի մարտական պատրաստության նպատակը ցանկացած պայմաններում ըստ իրենց նախանշանակման մարտական գործողությունների վարմանը մշտական պատրաստականության ապահովումն է: Այս գործընթացը նպատակաուղղված է մարտական իրադրությանը առավելագույնս մոտեցված պայմաններում ստորաբաժանումների և զորամասերի ու դրանց կառավարման մարմինների ներդաշնակեցմանը:

Ժամանակակից պատերազմների և, մասնավորապես, Արցախյան պատերազմի վերլուծությունը ցույց է տալիս, որ մեր տարածաշրջանում ներկայիս ուժերի հարաբերակցության պայմաններում ՀՀ ԶՈՒ-ի հնարավոր ռազմական գործողությունների օպտիմալ եղանակը կարող է լինել «խելամիտ պաշտպանությունը», որը ենթադրում է ռազմական զսպման մեխանիզմների կիրառում, զբաղեցրած դիրքերի պահպանման օպերացիաների ձեռնարկում՝ «Փոքր ուժերով մեծ խնդիրների»[5] կատարման սկզբունքով: Այս սկզբունքը ենթադրում է բարձր մակարդակի մարտական պատրաստության, խելացի ռազմական մտահղացումների շնորհիվ փոքր ստորաբաժանումներով տարատեղված և ապակենտրոնացված գործողությունների վարում: Հետևաբար կարևորվում է ստորաբաժանումների ինքնավարությունը, այսինքն՝ գլխավոր ուժերից տևական կտրվածության պայմաններում ըստ իրենց նախանշանակման խնդիրները հաջող կատարելու կարողություն[6]:

Ստորաբաժանումների ինքնավարությունն ապահովելու համար ՀՀ ԶՈՒ-ում մշտապես իրականացվում են ոչ միայն անհատական պատրաստություն և ստորաբաժանումների ներդաշնակեցում, այլև դասակների շուրջօրյա մարտավարական պարապմունքներ:

Որպես ներդաշնակեցման արդյունք՝ ստորաբաժանումները ձեռք են բերում մարտի վարման, համակողմանի ապահովման, ենթակա ստորաբաժանումների կայուն ղեկավարման, այլ զորատեսակների ստորաբաժանումների հետ փոխգործության ունակություններ և հմտություններ: Ստորաբաժանումների ներդաշնակեցմամբ ապահովվում են ստացվող տեղեկույթի արագ հաղորդումը, ընդհանրացումը, վերլուծումը, հիմնավորված որոշումների ժամանակին ընդունումը, մարտական խնդիրների հստակ առաջադրումը, փոխգործությունը, իրադրության հնարավոր ընթացքի վերաբերյալ կանխատեսումների կատարումը, համաձայնեցված համատեղ գործողությունների վարումը:

Ինչ վերաբերում է շուրջօրյա պարապմունքներին, ապա դրանք անցկացվում են հարձակման կամ պաշտպանության թեմաների մշակման եզրափակիչ փուլում և հետապնդում են դասակի մարտական ներդաշնակության և հրամանատարների՝ տեղանքում մարտի կազմակերպման, կրակի կառավարման հմտությունների կատարելագործման նպատակներ:

---

[5] Տես *Ս. Ս. Օհանյան,* ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման էությունը և նպատակները: «ՀԲ», 2015, հմ. 3:

[6] Տես «Sustainability». «NATO Glossary of Terms and Definitions (English and French)». NATO, 2010, P. 206:

Ստորաբաժանումների ինքնավարության տեսանկյունից կարևոր է նաև փոքր խմբերով գրոհային գործողությունների վարման սկզբունքների ուսուցումը: Դրանց հիմքում հակառակորդի մարտակարգերի թիկունք ներթափանցումն է, հաճախակի գրոհներով հակառակորդի ուժերի ներդաշնակության խափանումն ու կաշկանդումը, նրա կառավարման համակարգի աշխատանքի խաթարումը, հակառակորդի տարածքում լայնամասշտաբ մարտական գործողությունների ծավալումը:

Մարտադաշտում հակառակորդին գերազանցելու համար անհրաժեշտ է, որ մեր ստորաբաժանումներն ունենան մարտի դաշտում հանդիպող գրեթե բոլոր հնարավոր իրավիճակների համար «պատրաստի արձագանքների» տարբերակներ: Աշխատանք է տարվում նաև այս ուղղությամբ:

Անհատական և կոլեկտիվ (ստորաբաժանումների) պատրաստության համակարգի կատարելագործման նպատակով ներդրվում են նաև խմբային գործողությունների վարժասարքեր, ինչը հրամանատարներին հնարավորություն է տալիս զարգացնելու որոշումների կայացման իրենց հմտությունները:

Հրամանատարների մեթոդական մասնագիտական պատրաստությունն իրականացվում է հրամանատարական հավաքների, պլանային պարապմունքների, մարտավարական (մարտավարամասնագիտական), հրամանատարաշտաբային զորավարժությունների և ինքնապատրաստման միջոցով: ՀՀ ԶՈՒ-ում ներդրվել է մարտավարական օղակի սպաների, ենթասպաների և սերժանտների մասնագիտական գիտելիքների պարտադիր նվազագույն պաշարի ապահովման սկզբունքը: Դրանով խթանվում են հրամանատարական կազմի ինքնակատարելագործումն ու ինքնապատրաստումը:

ՀՀ ԶՈՒ-ի, ԳՇ-ի վարչություններ և առանձին բաժիններ յուրաքանչյուր առարկայի համար մշակել և զորքերին են տրամադրել հարցաշարեր՝ համապատասխան հրամանատարական պաշտոնների հավակնորդներին ներկայացվող պահանջների հաշվառմամբ: Հարցաշարերի ներդրումը հնարավորություն է տալիս օբյեկտիվ կերպով որոշելու ԶՈՒ-ի հրամանատարական կազմի պատրաստության աստիճանը և պարզելու այն ուղղություններն ու մեթոդները, որոնք կնպաստեն ԶՈՒ-ի հրամանատարական կազմի ռազմամասնագիտական իրազեկության մակարդակի բարձրացմանը:

Այս նպատակով ՀՀ ԶՈՒ-ի ստուգումների կանոնակարգով նախատեսված՝ հրամանատարական պատրաստության աստիճանի գնահատման չափորոշիչներում կատարվել են փոփոխություններ, իսկ ԶՈՒ-ի տարբեր վարչությունների, զորամիավորումների հրամանատարությունների հետ, փոխգործությամբ ՀՀ ԶՈՒ-ի Մարտական պատրաստության վարչությունում նոր մոտեցումների կիրառմամբ լրամշակվել է «ԶՈՒ-ի հրամանատարական պատրաստության ծրագիրը», որով նախատեսված է նաև նոր առարկաների ուսումնասիրում:

Հրամանատարական պատրաստության համակարգի կատարելագործման նպատակով ծրագրվում է նաև «Մարտական պատրաստության ավտոմատ կառավարման համակարգում» ստեղծել էլեկտրոնային գրադարան:

Մարտական պատրաստության արդյունավետության ապահովման համար պահանջվում է ունենալ լիարժեք ուսումնանյութական բազա, այն է՝ անձնակազ-

մի, կառավարման մարմինների, ստորաբաժանումների, զորամասերի ու զորամիավորումների ուսուցման համար անհրաժեշտ նյութական միջոցների և տեխնիկական սարքավորանքի, ինչպես նաև տեղանքի կահավորված շրջանների համալիր:

Հաշվի առնելով ԶՈՒ-ի անձնակազմի ուսումնավարժեցման կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների ծախսման ծավալը՝ նախատեսում ենք գործնական աշխատանքների մի մասն անցկացնել լսարանային պայմաններում՝ վարժասարքերի օգտագործմամբ: Դա հնարավորություն կտա կատարելագործելու, մասնավորապես, զրահատեխնիկայի անձնակազմի՝ նշանակետի հետախուզման, բոլոր զինատեսակներով (այդ թվում և կառավարվող արկերով) շարժվող վրագետնյա և օդային նշանակետերի կրակային խոցման, զրահատեխնիկայի շահագործման հմտությունները:

ՀՀ ԶՈՒ-ում առկա էլեկտրոնային վարժասարքերը հիմնականում նախատեսված են զինծառայողների անհատական պատրաստության, նշանառության, զենքի և ռազմական տեխնիկայի հետ վարվելու կարգը ուսուցանելու համար: Նոր համալիր վարժասարքերի ներդրումը դասակի հրամանատարին հնարավորություն կտա լսարանում կրակային և մարտավարական պարապմունքների ժամանակ անցկացնելու դասակի կազմով կրակի կառավարման վարժանքներ, ջոկի, դասակի կազմով՝ կատարելագործելու հրաձգության հմտությունը ինչպես ցերեկային, այնպես էլ գիշերային պայմաններում:

ՈՒսումնանյութական բազայի կարևոր կատարելագործում էր զորամասերում մարտավարական ստուգողական գոտիների (ՄՍԳ) ստեղծումը: Դրանք կահավորվեցին ՀՀ ԶՈՒ-ի մարտական պատրաստության վարչությունում մշակված «Վահագն» մեթոդական ձեռնարկի պահանջներին համապատասխան[7]: «Վահագնի» հիմնական նպատակներից մեկը «Փոքր ուժերով՝ մեծ խնդիրների կատարման» սկզբունքն իրագործելու համար «Մարտի գլխավոր դաշտի» գաղափարի ներդրումն է:

ՄՍԳ-ները կահավորվում են տվյալ պարապմունքի թեմային բնորոշ տեղանքի, մարտավարական իրադրության, ձայնային, դիտողական և այլ տարրերով՝ անձնակազմին հնարավորություն տալով ավելի հստակ պատկերացում կազմելու, թե ինչ է ժամանակակից մարտը:

Անձնակազմին իրական մարտին հոգեբանորեն նախապատրաստելու համար ՀՀ ԶՈՒ-ում կառուցվում են նաև հոգեբանական արգելագոտիներ, որոնք անձնակազմին հնարավորություն են տալիս մարտի տարբեր իրադրություններում հոգեբանորեն պատրաստ լինելու տարբեր դժվարությունների հաղթահարմանը:

Այսպիսով՝ մարտական պատրաստության համակարգի կատարելագործմամբ և արդյունավետության մեծացմամբ ապահովվում է ԶՈՒ-ի ամենակարևոր բաղադրատարրի՝ առանձին զինծառայողի և ամբողջ անձնակազմի մարտական կարողությունների մեծացումը:

[7] Տես ««Վահագն» արգելագոտիների հաղթահարման և վճռական գործողությունների ու նորմացույցների ուսուցման համակարգ»: Ե., 2013:

СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ БОЕВОЙ ПОДГОТОВКИ ВОЙСК В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА КАК СРЕДСТВО РАЗВИТИЯ БОЕВЫХ ВОЗМОЖНОСТЕЙ

Т. В. ХАЧАТРЯН, полковник, Начальник Управления боевой подготовки ВС РА

РЕЗЮМЕ

Одним из основных путей повышения боевых возможностей ВС является обеспечение высокой боеспособности войск, достигаемой, в частности, за счет совершенствования процесса боевой подготовки.

Международный опыт показывает, что для этого действенным инструментом является «Система автоматического управления боевой подготовкой». Особое внимание следует уделять и вопросам обучения подразделений навыкам ведения длительных боевых действий в условиях отрыва от главных сил, устойчивому руководству подчиненными подразделениями, обеспечению слаженности взаимодействия с подразделениями других видов войск, что позволяет реализовать в войсках принцип решения «Больших задач малыми силами». Повышение эффективности процесса боевой подготовки обусловлено также совершенствованием учебно-материальной базы, в частности, созданием в войсковых частях тактических контрольных зон путем внедрения идеи «Главного поля боя».

THE IMPROVEMENT OF THE SYSTEM OF TROOPS COMBAT TRAINING IN THE RA ARMED FORCES AS A MEANS OF DEVELOPING COMBAT CAPABILITIES

T. V. KHACHATRYAN, Colonel, Chief, Department of Military Preparedness, RA Armed Forces

SUMMARY

One of the main ways of increasing the Armed Forces combat capabilities is the provision of troops high combat effectiveness, which is in particular achieved by improving the combat training process.

The international experience shows that the powerful tool in this process is the “Automatic Combat Training Control System”. Particular attention should be also paid to the issues of training sub-units in conducting long-term combat actions in conditions of isolation from the main forces, of subordinate sub-units’ sustainable management, of ensuring coherence of interaction with sub-units of other armed services, and that allows to implement the principle of “Solution of Big Problems with Small Forces” in the troops. The increase in the efficiency of the combat training process also rests on the improvement of educational and material base, notably, the establishment of tactical control zones in military units by introducing the idea of “The Main Battlefield”.

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ԲՀԱ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ՝ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ա. Զ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ԶՈՒ-ի ԱՀՏԱ վարչության պետ

Նոր ռազմական տեխնիկայի ու սպառազինության կիրառման արդյունավետությունը, ռազմական գործողությունների ընթացքն ու ելքը, չնայած համատարած ավտոմատացմանը, այսօր ևս մեծապես պայմանավորված են մարդկային գործոնով, այսինքն՝ կախված են մարդու հոգեբանաֆիզիոլոգիական հնարավորություններից, ուստի և հակամարտող կողմերի բարոյահոգեբանական պատրաստության աստիճանից: Այդ են վկայում վերջին մի քանի տասնամյակներում տեղի ունեցած պատերազմների փորձը (Իրաք, Աֆղանստան, Չեչնիա, հայ-ադրբեջանական, վրացաբխազական զինված հակամարտություններ) և զինված պայքարի ուժերի, միջոցների ու եղանակների զարգացման արդի միտումները:

Այսպես, Արցախյան ազատամարտում վճռորոշ դեր ունեցավ բարոյամարտական ոգին, և մենք կարողացանք հաղթել՝ «**հայրենասիրությունն ու նվիրումը հակադրելով հակառակորդի մեծաթիվ քանակին ու հարուստ սպառազինությանը**»: Նույն անվեհեր ոգեղենության, մեր հրամանատարների ու զինվորների սառնասիրտ ու արհեստավարժ գործողությունների, կարգապահության ու անձնական խիզախության շնորհիվ ձախողվեցին 2014 թ. հուլիս–օգոստոս ամիսներին հակառակորդի ձեռնարկած և առ այսօր չդադարող բոլոր դիվերսիոն գործողությունները և այլ ոտնձգություններ, որոնց ժամանակ թշնամին, կրելով տասնյակ անգամ մեծ կորուստներ, հետ շպրտվեց ելման դիրքեր: Լավագույնս դրսևորվեց հակառակորդի նկատմամբ անկախության սերնդի հայ մարտիկի բարոյահոգեբանական գերազանցությունը՝ «**Հաղթողի հպարտությունը, հաղթողի վստահությունը, հաղթողի հոգեբանությունը և արագ համախմբվելու կարողությունը**», ու երիցս հաստատվեց այն ճշմարտությունը, որ պատերազմի ժամանակ «**ճակատագիրն ամփոփված է զինվորի պատրաստվածության և հոգեկան ուժի մեջ**»:

Նման հատկություններ, առանց որոնց չի կարող ապահովված լինել մարտական կարողությունների կայունությունը, ձևավորվում են շնորհիվ բարոյահոգեբանական ապահովման (ԲՀԱ): ԲՀԱ-ն ռազմական (մարտական) գործողությունների ապահովման հիմնական տեսակն է, ԶՈՒ-ի մարտական կարողությունները պայմանավորող հիմնական գործոններից մեկը: Դա միջոցառումների համալիր է, որոնք ուղղված են անձնակազմի մարտական ոգու, կայուն բարոյահոգեբանական վիճակի (ԲՀՎ) և բարձր մակարդակի կարգապահության, զինվորական իրավակարգի ձևավորմանն ու պահպանմանը, զինվորական կոլեկտիվների ներ-

դաշնակեցմանը և հակազդմանը հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությանը[1]: ԲՀԱ-ն զորքերի կառավարման մարմինների ու հրամանատարական կազմի կողմից պլանավորվում, կազմակերպվում և իրագործվում է զորքերի ամենօրյա կենսագործունեության և բոլոր տեսակների մարտական գործունեության ժամանակ (զորքերի մարտական պատրաստում, մարտական հերթապահություն, պահակային ծառայություն, բերում բարձր աստիճանների մարտական պատրաստության, մարտական գործողությունների նախապատրաստում, մարտական գործողությունների վարում):

Պատահական չէ, որ մարտական պատրաստման հիմնական նպատակային խնդիրների թվում ներառված են նաև այնպիսիք, որոնք, մյուսների հետ անխախտ միասնության մեջ լինելով հանդերձ, գերազանցապես վերաբերում են բարոյահոգեբանական ապահովմանը, այն է՝ զինծառայողների վսեմ բարոյամարտական հատկանիշների, հայրենասիրության, զինվորական պարտքի կատարմանը նվիրվածության, իրավագիտակցության, հոգեբանական կայունության, զգոնության, ընկերասիրության, կատարողական կարգապահության, ֆիզիկական և հոգեկան ծանրաբեռնվածությունը հաղթահարելու ունակության, հակառակորդի տեղեկատվության նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորմանը: Ընդսմին ԲՀԱ-ի միջոցառումները զինծառայողների հետ տարվող ուսումնադաստիարակչական միասնական գործընթացի անբաժանելի մասն են: Այսպիսով՝ ԲՀԱ-ի միջոցառումների շնորհիվ ձևավորվում է ակտիվ գործողություններին զինծառայողի պատրաստությունը արտացոլող հոգեկան երևույթների համախումբ՝ բարոյահոգեբանական վիճակը: Այն կապված է զինծառայողի անձի շարժառիթավորման ոլորտի զարգացման հետ: Բարոյահոգեբանական վիճակը անձնավորության, կոլեկտիվի որակական որոշակիությունն է, որը բնութագրում է հոգեկան պրոցեսների, կոլեկտիվում միջանձնային հարաբերությունների ուղղվածությունն ու դինամիկան, հանդես է գալիս որպես բանակի հոգևոր ներուժի և բարոյական ոգու կոնկրետ ձևի դրսևորում և իրացում, զորքերի մարտական կարողությունների կարևոր բնութագիր[2]: ԲՀԱ-ի բաղկացուցիչներն են՝ **տեղեկատվական-դաստիարակչական, հոգեբանական, սոցիալ-իրավական աշխատանք, մշակութաժամանցային, տեղեկատվահոգեբանական աշխատանքները:** Ընդսմին տվյալ ուղղություններով կատարվող աշխատանքները պետք է մշտապես կատարելագործվեն ըստ բովանդակության ու կառուցվածքի, մեթոդների ու կիրառվող միջոցների՝ ոչ միայն առկա իրողությունների, այլև գիտականորեն հիմնավորված կանխատեսումների հաշվառմամբ[3]:

Տեղեկատվական-դաստիարակչական աշխատանքը մարտական պատրաստման ընթացքում ներազդում է զինծառայողի գիտակցության վրա, նրան զինում փիլիսոփայական, քաղաքական, տնտեսական, ռազմապատմական, ռազմատեխնիկական և այլ գիտելիքներով, որոնք անհրաժեշտ են Հայրենիքի պաշտ-

[1] Տես «Военный энциклопедический словарь». М., 2002, с. 808:

[2] Տես նույն տեղում:

[3] Տես *Ա. Զ. Ալեքսանյան,* ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմի բարոյահոգեբանական ապահովման խնդիրները պաշտպանական բարեփոխումների համատեքստում: «ՀԲ», 2009, հմ. 1–2:

պանի աշխարհայացքը, համոզմունքները, բարոյական և վարքային չափանիշները ձևավորելու համար: Այլ խոսքով՝ տեղեկատվական-դաստիարակչական աշխատանքը պայմանավորում է մարտական պատրաստման ԲՀԱ-ի բովանդակությունը՝ ներառելով դաստիարակության բոլոր տեսակները՝ **ռազմահայրենասիրական-բարոյական, հոգևոր, իրավական, տնտեսական, բնապահպանական, գեոռազմական, ֆիզիկական, սեռական**:

Յուրաքանչյուր պետություն վարում է իր պետական քաղաքականությունը՝ նպատակաուղղված իր շահերի առաջմղմանը*, և բանակը՝ որպես պետական հաստատություն, պետության ատրիբուտ, այդ շահերի պաշտպանն է: Խաղաղ ժամանակ նա կատարում է հավանական ագրեսորներին զսպելու դեր, պատերազմի ժամանակ՝ միայն իրեն հատուկ միջոցներով պաշտպանում է պետության շահերը, ապահովում պետական քաղաքականության շարունակականությունը:

Մեզ համար հատկապես անընդունելի է բանակի «**ապագաղափարայնացման**» թեզը: Իհարկե, կարելի է և պետք է բանակը զերծ պահել «քաղաքականացումից», այսինքն՝ որևէ կուսակցության կողմից քարոզվող գաղափարախոսության ընդունումից, բայց զինվորականությանը կտրել հասարակության մեջ գերիշխող գաղափարներից ու ազգային արմատներից, կործանարար է, քանի որ կնշանակի սեպ խրել բանակի և հասարակություն–ժողովրդի միջև: Աշխարհաքաղաքական մերօրյա իրողությունները և հայ ազգի ու նրա պետականության առջև ծառացած մարտահրավերները առաջ են քաշել ՀՀ Զինված ուժերի որակական առավելության ամրապնդման և դրա մշտական բազմապատկման պահանջ: Ռեսուրսների սահմանափակության հանգամանքը պարտադրաբար առաջին պլան է մղում «**Փոքր ուժերով՝ մեծ խնդիրներ**» սկզբունքը, մարդկային գործոնի օգտագործումը կատարելության հասցնելու անհրաժեշտությունը, իսկ այս հույժ բարդ խնդիրներն անհնար է լուծել առանց ազգային գաղափարախոսության՝ ազգի անդամներին (այդ թվում՝ զինվորականությանը) իրար հոգեպես ու գիտակցաբար շաղկապող, ազգի ավանդական հոգեկերտվածքից բխող նպատակները, վարքը և գործունեությունը սահմանող գաղափարների ու արժեքների համակարգի:

Մեր զինվորականության արժեհամակարգի առանցքը հայրենիքին ու ժողովրդին անմնացորդ ծառայելու գաղափարն է: Հայրենասիրությունը և ազգապահպանության խորքային ընկալումը հայ զինվորականի գլխավոր առանձնահատկություններից են, և դրանցով են մեծապես պայմանավորված զինծառայողների մարտական կարողությունների զարգացումը, զինված ուժերի մարտունակությունն ու առաջադրված խնդիրների կատարման արդյունավետությունը: Արցախյան ազատամարտն ասվածի վառ ապացույցներից է, քանի որ միակ բանը, որի պակասն այդ ժամանակ չունեինք, **հայրենասիրությունն էր**: Այսօր անհրաժեշտ է իմաստավորել այս իրողությունը և զորքերում արմատավորել այն գիտակ-

* Եթե պետությունը ժողովրդավարական է կամ հռչակել է հավատարմություն զարգացման ժողովրդավարական ուղուն, ապա այդ շահերը հիմնականում համընկնում են ազգային շահերի հետ: Մենք այստեղ խոսում ենք նման պետությունների մասին, ինչպիսին է և Հայաստանի Հանրապետությունը:

ցությունը, որ մենք այլևս իրավունք չունենք պարտվելու և ոչ մի պատերազմում, որ նոր **հաղթանակներ կերտելու գլխավոր գրավականը հայրենապաշտությունն է**: Տեղեկատվական-դաստիարակչական արդյունավետ աշխատանքը հենց դրան է ուղղված, քանի որ լավագույնս ծառայում է հայրենիքի պաշտպանության գաղափարի շուրջ անձնակազմի համախմբման, իր ժողովրդին ու հայրենիքին նվիրվածության ոգով նրա դաստիարակության նպատակին:

Բանակի մարտական կարողությունների զարգացմանը՝ որպես տեղեկատվական-դաստիարակչական աշխատանքի տարատեսակ, լուրջ նպաստ է բերում հոգևոր դաստիարակության կազմակերպումը[4]:

Փոքր ուժերով մեծ խնդիրների կատարմանն ունակ ստորաբաժանումներով տարատեղված և ապակենտրոնացված գործողություններ վարելն այսօր դարձել է կենսական անհրաժեշտություն, քանի որ մենք չունենք մեծ թվով անձնակազմ ու նյութական միջոցներ և այդ տեսակետից չենք կարող ոտք մեկնել հավանական հակառակորդի հետ: Ահա թե ինչու 2015 թվականից ՀՀ պաշտպանական համակարգի հրամանատարական ու կառավարման բոլոր, հատկապես՝ օպերատիվ-մարտավարական մակարդակներում սկսվեց «Առաջադրանքային ղեկավարում»՝ **«Հրամանատրում՝ առաջադրանքով»** հայեցակարգի ներդրման գործընթացը[5]: Այն նպատակաուղղված է ենթակաների նախաձեռնողականության մակարդակի բարձրացմանը, նրանց ազատությանը առաջադրանքի կատարման եղանակն ընտրելու և համապատասխան որոշումներ կայացնելու հարցում: Հայեցակարգի ներդրման վերջնանպատակը ՀՀ պաշտպանության նախարարի բնորոշմամբ՝ **«մարտական գործողությունների պլանավորման, նախապատրաստման, վարման էությունը հանդիսացող «դիտարկում–կողնորոշում–որոշում–գործողություն» շրջափուլում հակառակորդից մշտապես մեկ քայլ առաջ գտնվելն է՝ վերջինիս ստիպելով ոչ թե գործել, այլ արձագանքել միայն»**[6]: Անշուշտ, բարոյահոգեբանական ապահովումն այստեղ իր ծանրակշիռ դերը պետք է ունենա, քանզի հայեցակարգի ներդրումը ենթադրում է զինվորականության շրջանից բռի ու անհարգալից վերաբերմունքի վերացում, ենթակաների նկատմամբ վստահության և արդար մոտեցման դրսևորում, ընդհանրապես՝ բարեկրթության կանոնների պահպանում և ամրապնդում[7]:

Բարոյահոգեբանական ապահովման գործում հաջողության հասնելու կարևոր նախադրյալներից է **անհատական դաստիարակչական աշխատանքը,** որը զինծառայողների բարոյամարտական որակների և վարքի ձևավորման բարդ,

[4] Տես *Արշեն աբեղա Սանոսյան,* Բանակային քահանաների հաստատությունը ՀՀ Զինված ուժերում: «ՀԲ», 2001, հմ. 1–2, *նաև՝ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյան, Ռաֆայել սարկավագ Պետրոսյան,* Արատավոր բարքերի խոցումն աստվածաբանական տեսանկյունից: «ՀԲ», 2014, հմ. 3–4:

[5] Տես *Ս. Մ. Օհանյան,* ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման էությունը և նպատակները, *նաև՝ Դ. Է. Տոնոյան,* ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման սկզբունքներն ու մեթոդները: «ՀԲ», 2015, հմ. 3:

[6] Տես «ՀՀ Պաշտպանության Նախարար Սեյրան Օհանյանի 2015 թվականի տարեմուտի ուղերձը»: Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարություն, 2015, էջ 14:

[7] Տես նույն տեղում, էջ 14–15:

ստեղծագործական, զորքերում կենսականորեն անհրաժեշտ գործ է, առանց որի անհնար է պատկերացնել հրամանատարի՝ ենթականերին ղեկավարելու աշխատանքը: Անհատական դաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար հրամանատարը պարտավոր է ուսումնասիրել և հաշվի առնել ենթակաների անձնային, հոգեկան հատկությունները և դրանց հաշվառմամբ միայն ընտրել ներգործության համապատասխան մեթոդներ ու միջոցներ[8]: Անհատական դաստիարակչական աշխատանքը նպաստում է զինծառայողների գիտակցության մեջ իր և զինվորական կոլեկտիվի նպատակներին հասնելու տրամադրվածության ստեղծմանը, հնարավորություն է տալիս դրական փոփոխություններ կատարելու զինծառայողների մտավոր, ֆիզիկական և այլ հատկանիշներում՝ ձևավորելով բացասական հատկանիշները վերացնելու ձգտում, կանոնադրական վարքականոնից չշեղվելու և խախտումներ չկատարելու հաստատուն դիրքորոշում: Այս համատեքստում կարևոր նշանակություն են ձեռք բերում **հրամանատարի անձնական օրինակի** և ենթակաների ծառայողական գործունեության **օբյեկտիվ ու արդարացի գնահատման** գործոնները: Ըստ այդմ հրամանատարը պարտավոր է միշտ լինել անհրաժեշտ բարձրության վրա, ըստ արժանվույն պետք է գնահատի յուրաքանչյուրի աշխատանքը: Զինծառայողի անձը կարևորելը, ժամանակին ու տեղին գովելն ու խրախուսելը անպայմանորեն նրան կմղեն նոր և ավելի ակնառու հաջողությունների:

Սոցիալ-հոգեբանական աշխատանքների շարքում հարկ է նշել՝

– անձնակազմի հոգեբանական բնութագրերի ուսումնասիրությունը և վերլուծությունը,

– զինծառայողների հոգեկանի և վարքագծի վրա մարտական պատրաստման ազդեցության վերաբերյալ գիտելիքների ուսուցանումը,

– կոնկրետ ուսումնամարտական և մարտական խնդիրների կատարման համար զինծառայողների նպատակային հոգեբանական նախապատրաստումը,

– զինվորական կոլեկտիվներում տեղ ունեցող հոգեբանական գործընթացների և զինծառայողների վարքագծի դրսևորումների կանխատեսումը,

– զենքին և ռազմական տեխնիկային վարպետորեն տիրապետելու, մարտական գործողություններին հոգեբանորեն նախապատրաստելու համար գործնական պարապմունքների և մարզումների անցկացումը, մարտական հնարավոր կորուստների նվազեցմանն ու անձնակազմի մարտական ակտիվության պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

– նյարդահոգեբանական անկայունություն ունեցող զինծառայողների հետ հոգեբանական վերականգնողական աշխատանքների իրականացումը, օպերատիվ հոգեբանական օգնության կազմակերպումը,

– զինվորական կոլեկտիվներում հոգեբանական գործընթացների արդյունավետ կառավարման վերաբերյալ առաջարկությունների և խորհրդատվության տրամադրումը:

Պատերազմների պատմությունը վկայում է, որ ամենալավ սպառազինութ-

[8] Տես *Վ. Հ. Մարգարյան,* Զինծառայողների անհատական առանձնահատկությունների հաշվառման հարցի շուրջ: «ՀԲ», 2005, հմ. 1:

յունն ու ռազմական տեխնիկան անգամ չեն կարող փոխարինել զինվորների և սպաների թույլ հոգեբանական կայունությանը: Այսպես՝ 1942 թ. Թոբրուկ քաղաքի շրջանում գերմանական զորքերի առաջին իսկ հարվածներից խուճապի է մատնվել ու փախուստի դիմել նոր ամերիկյան տանկերով համալրված բրիտանական բանակի 7-րդ զրահատանկային դիվիզիան: Դիվիզիան հոգեբանական առումով այնքան պատրաստ չէր մարտերին, որ ուսադիրները պոկելով գերի հանձնվեցին նույնիսկ զորամիավորման հրամանատարն ու շտաբի պետը՝ հրամանատարական գրեթե ամբողջ կազմով հանդերձ[9]: Նման օրինակները բազմաթիվ են և հաստատում են, որ առանց բարոյահոգեբանական կայունության ոչ մի զինծառայող չի կարող լիարժեք և արդյունավետ կերպով կատարել իր գործառութային պարտականությունները՝ լինի դա մարտական պատրաստման ժամանակ, թե հատկապես՝ մարտական իրավիճակներում:

Սոցիալ-իրավական աշխատանքը բարոյահոգեբանական ապահովման մյուս կարևոր ուղղություններից է, որի օբյեկտիվ անհրաժեշտությունը պայմանավորված է առաջին հերթին զինված ուժերի կառավարման մարմինների և բոլոր պաշտոնատար անձանց կողմից զորքերի գործունեության սոցիալ-իրավական ռեժիմի ապահովման օրենսդրությամբ սահմանված պարտականությամբ: Այն ներառում է.

– անձնակազմի իրավական ուսուցումն ու իրավական դաստիարակությունը, սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում նրան օգնության ցուցաբերումը,

– զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության նորմատիվային բազայի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների պատրաստումը,

– բավարարման սահմանված նորմերը զինծառայողներին լիովին հասցնելու նկատմամբ մշտական գործնական վերահսկողությունը,

– զինծառայողների խախտված իրավունքների և պահանջների վերականգնման համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը:

Խորհրդային տարիներին երկու գաղափարախոսությունների, երկու սոցիալ-տնտեսական համակարգերի հակամարտության պայմաններում զինված ուժերի անձնակազմի բարոյահոգեբանական ապահովումն իրականացվում էր կոմունիստական գաղափարախոսության դրույթների հիման վրա: Ներկայումս շատ կարևոր է ոչ միայն ազգային գաղափարով տոգորված և վսեմ բարոյամարտական հատկանիշներով օժտված Հայրենյաց պաշտպանի ձևավորումը, այլև ժողովրդավարական երկրի քաղաքացու դաստիարակությունը, զինծառայողի, որն ունակ է դիմակայելու ոչ միայն արտաքին, այլև ներքին մարտահրավերներին:

Սոցիալ-իրավական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևերից են՝ անձնակազմին սոցիալ-իրավական հարցերով կոլեկտիվ և անհատական խորհրդատվությունը, հրամանատարական և հասարակական-պետական պատրաստման համակարգերում սոցիալ-իրավական թեմաներով դասախոսությունների, սեմինարների, զրույցների անցկացումը, հարցուպատասխանի երեկոների, իրավական տեղեկատվության, «Իրավական գիտելիքների միասնական օրվա»,

[9] Տես «Вторая мировая война месяц за месяцем. Июнь 1942 года». ИА «РИАНОВОСТИ», 01.06.2012 (http://ria.ru/analytics/20120601/662299015.html):

սոցիոլոգիական հարցումների կազմակերպումը, զինծառայողների իրավունքների և արտոնությունների պահպանման հարցերի լուծման, իրավասոցիալական բնույթի դիմումների, նամակների, բողոքների կապակցությամբ տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և ծնողների հետ համատեղ աշխատանքը:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել մարդու իրավունքների պաշտպանությանը: Չպետք է մոռանալ, որ զինված ուժերը ժողովրդավարական պետության և հասարակության բաղկացուցիչ մասն են: Զինծառայողներն իրենց պարտականությունները կատարելու ընթացքում պարտավոր են հարգել մարդու իրավունքները և պահպանել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Բայց դրան հասնելու առաջնային պայմանը զինվորական կառույցի ներսում նույն այդ զինծառայողների (համազգեստով քաղաքացիների) իրավունքների պաշտպանության ապահովումն է, ինչն այսօր համարվում է Հայոց բանակի զարգացման կարևոր նախապայմաններից մեկը: «Ազգային բանակի զինծառայողները, չվարակվելով հակառակորդի՝ անճարակին, թույլին բնորոշ մարդատեցությամբ, պետք է **ասպետաբար հետևեն մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներին**՝ բանակը դարձնելով **մարդակենտրոն կառույց»,** նշված է ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի 2015 թվականի տարեմուտի ուղերձում[10]:

Հակառակորդի **տեղեկատվահոգեբանական ազդեցությունից** զորքերի պաշտպանությունը նույնպես կարևոր դեր ունի բարոյահոգեբանական ապահովման գործում: Հրամանատարական կազմը պետք է քաջ գիտակցի, որ հակառակորդին հաղթելու համար բավարար չէ զինվորներին ֆիզիկապես պահպանելը, և ոչ միշտ է թշնամու զինվորների ոչնչացումը համարվում հաղթելու ամենաարդյունավետ միջոց:

Տեղեկատվահոգեբանական ազդեցության հնարների մեծ մասը ամենևին էլ նոր չէ, սակայն դրանց նշանակությունը ներկայումս կտրուկ կերպով աճել է, ինչը բացատրվում է ավելի կապակցված, թափանցիկ աշխարհի ձևավորմամբ և այդ հնարների ամբողջության համալիր կիրառմամբ՝ սկսած հակառակորդի մարտական կառավարման համակարգի ֆիզիկական ոչնչացումից մինչև համակարգչային վիրուսների, ինչպես նաև գիտակցությամբ ձեռնածությունները, հոգեմետ՝ հոգեխոցիչ միջոցների գործածությունը: Տեղեկատվական-հոգեբանական ներգործությունն իրականացվում է ոչ միայն պատերազմական, այլև խաղաղ ժամանակ, ինչը նշանակում է, որ դրա կանխման կամ զինծառայողների ու զինվորական կոլեկտիվների վրա ազդեցության աստիճանի նվազեցման ուղղությամբ միջոցառումները պետք է ձեռնարկվեն մշտապես, այդ թվում, բնականաբար, մարտական պատրաստման ընթացքում: Դա պայմանավորված է մարտի ժամանակ մարդու ամենաուժեղ՝ ինքնապահպանման բնազդի դեմ պայքարելու անհրաժեշտությամբ: Այդ բնազդը մարտից խուսափելու ձգտում է առաջացնում, ինչի առաջն առնելու ամենահզոր միջոցներից են հայրենասիրության, անձնազոհու-

[10] Տես «ՀՀ Պաշտպանության Նախարար Սեյրան Օհանյանի 2015 թվականի տարեմուտի ուղերձը», էջ 18:

թյան, արիության դաստիարակությունը, յուրային զորքի ռազմական հզորության նկատմամբ վստահության սերմանումը: Սակայն արդյունավետ հակազդեցություն գործելու համար դրանք պետք է վերածվեն համոզմունքների, արմատավորվեն անձի ենթագիտակցականի մակարդակում, իսկ դրա համար անհրաժեշտ է երկարատև աշխատանք, անգամ՝ սերունդների կտրվածքով: ՈՒստի հրամանատարներից պահանջվում է մարտական և ամենօրյա գործունեության ընթացքում զինծառայողների տեղեկատվական-հոգեբանական բացասական ազդեցության **կանխատեսման, կանխարգելման**, **խափանման** (թուլացման), **հետևանքների վերացման** նպատակաուղղված համալիր աշխատանք[11]:

Այսպիսով՝ ԲՀԱ-ի համակարգը ներառում է՝ տարածաշրջանում, երկրում և զորքի տեղաբաշխման շրջանում տեղեկատվական ու բարոյահոգեբանական վիճակի վերլուծություն, հակառակորդի հոգեբանական ազդեցությունից և քարոզչությունից, հոգեխոցիչ միջոցներից անձնակազմի կորուստների հնարավոր աստիճանի կանխատեսում, անձնակազմին հակառակորդի ազդեցության իրական նպատակների, խնդիրների, թեմատիկայի, մեթոդների, տեխնիկական միջոցների, ինչպես նաև հնարավոր հետևանքների մասին անընդմեջ օբյեկտիվ, հոգեբանորեն նպատակային տեղեկույթի հաղորդում և պարզաբանում, ստորաբաժանումներում ընկերական փոխաջակցության և հոգեբանական օգնության կազմակերպում, յուրային զորքերի և բնակչության վրա տեղեկատվահոգեբանական ազդեցությունից պաշտպանության նյութատեխնիկական բազայի ամրապնդում, հակառակորդի ներգործության նկատմամբ զինծառայողների ընկալունակության նվազեցման միջոցառումների իրականացում, նրա տեղեկատվահոգեբանական ներգործությանը հակազդեցություն և այլն: Այս բոլոր աշխատանքների արդյունավետությունը մեծ է այն դեպքում, երբ դրանք պլանավորվում և իրականացվում են անընդհատ ու համալիր կերպով՝ հակառակորդի տեղեկատվահոգեբանական ներգործության առանձնահատկությունների, զորքերի իրական բարոյահոգեբանական վիճակի մարդու կողմից տեղեկատվության ընկալման ընդհանուր հոգեբանական օրինաչափությունների հաշվառմամբ:

Մշակութաժամանցային աշխատանքը կատարվում է զինվորական գործունեության բոլոր ոլորտներում: Փորձը ցույց է տալիս, որ բարեկիրթ և լայն մտահորիզոնով զինծառայողը ծառայողական ու մարտական խնդիրները կատարելու համար ծախսում է մյուսների համեմատությամբ ավելի քիչ ժամանակ, ուժ ու միջոցներ, առաջադրանքները կատարում է ավելի բարձր որակով: Մեծ թվով բարեկիրթ հրամանատարներ ու պետեր մշակութաժամանցային միջոցառումները հմտորեն ծառայեցնում են ուսումնամարտական խնդիրների լուծմանը՝ հասկանալով, որ մշակույթն ու արվեստը վիթխարի նշանակություն ունեն անձնակազմի հոգում վսեմ բարոյամարտական հատկություններ ձևավորելու, զինծառայողների հոգեկան-զգացմունքային վիճակն անհրաժեշտ մակարդակում պահելու գործում, ինչը նպաստում է մարտական առաջադրանքները հաջողությամբ կատարելուն:

Անկասկած, ԲՀԱ-ի արդյունավետությունն զգալի չափով պայմանավորված է **դաստիարակության տեխնիկական միջոցներով** (ԴՏՄ) ապահովվածությամբ:

[11] Տես *Ա. Զ. Ալեքսանյան,* Նշ. աշխ.:

ԴՏՄ-ն ներառում է զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային և տպագիր միջոցները, ձայնասփյուռ կայանները, կինոխցիկները, ռադիոհեռուստատեսային և կինոնկարահանման ու տեսագրման սարքավորանքը, ֆոտոտեխնիկան, երաժշտական գործիքները, սեղանի խաղերը և այլն:

Այսպիսով՝ բարոյահոգեբանական ապահովումը, ներազդելով զինծառայողների հոգեկանի վրա, մեկ միասնական ամբողջության մեջ է միավորում մարդու ֆիզիկական, մտավոր և կամային հնարավորությունները, դրանք վերածում մարտական կարողությունների, և դրանով իսկ զգալի նպաստ բերում զորքերի մարտունակության մեծացմանը:

СОВЕРШЕНСТВОВАНИЕ ПРОЦЕССА МОРАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ В ВОИНСКИХ ПОДРАЗДЕЛЕНИЯХ В КОНТЕКСТЕ РАЗВИТИЯ БОЕВЫХ ВОЗМОЖНОСТЕЙ

А. Дж. АЛЕКСАНЯН, генерал-майор, Начальник Управления по работе с личным составом ВС РА

РЕЗЮМЕ

Морально-психологическое обеспечение (МПО) войск является одним из основных видов обеспечения боевых действий, от которого во многом зависит увеличение и стабильность боевых возможностей ВС. Поскольку эффективность применения вооружения и военной техники, течение и исход военных действий в значительной мере определяются степенью морально-психологической готовности конфликтующих сторон, мероприятия по МПО в ВС РА нацелены на поддержание и развитие в воинских коллективах устойчивого морально-психологического состояния, высокой дисциплины, воинского правопорядка, способности рассудочного реагирования на негативное информационно-психологическое воздействие со стороны противника.

Осуществляемые в рамках МПО информационно-воспитательные, психологические, социально-правовые, культурно-досуговые, информационно-психологические работы способствуют повышению боевых возможностей ВС РА. Методы этих работ совершенствуются и обосновываются научными исследованиями и анализом опыта передовых стран.

THE IMPROVEMENT OF THE PROCESS OF MORAL AND PSYCHOLOGICAL SUPPORT IN MILITARY UNITS IN THE CONTEXT OF DEVELOPING COMBAT CAPABILITIES

A. J. ALEKSANYAN, Major General, Chief, Moral and Welfare Department, RA Armed Forces

SUMMARY

Moral and psychological support (MPS) of the troops is one of the main ways of ensuring combat operations, which largely stipulates the increase and stability of the Armed Forces combat capabilities. Since the effectiveness of using armaments and military equipment, the course and outcome of military actions is largely determined by the degree of moral and psychological readiness of the conflicting parties, so the measures taken in military staffs for the MPS in the RA Armed Forces are targeted at maintaining and developing sustainable moral and psychological condition, high discipline, military law and order, the ability of rational response to negative information and psychological impact by the enemy.

The information and educational, psychological, social and legal, cultural and recreational, information and psychological activities implemented in the framework of the MPS promote the increase of the RA Armed Forces combat capabilities. The methods of these activities are being improved and substantiated by the academic studies and analysis of the experience of advanced countries.

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՄԲ ՈՒ ՏԵԽՆԻԿԱՅՈՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ

Մ. Ա. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ԶՈՒ-ի Սպառազինության պետ–վարչության պետ

Արդի ժամանակաշրջանում առկա և հնարավոր սպառնալիքների փոփոխման դինամիկայի հաշվառմամբ Հայաստանի Հանրապետության անվտանգության կարևորագույն երաշխիքն են մշտապես մարտական կիրառմանը պատրաստ վիճակում պահվող Զինված ուժերը: Ընդսմին դրանք պետք է ունակ լինեն ոչ միայն կասեցնելու հավանական հակառակորդի ագրեսիան, այլև անընդունելի վնասներ պատճառելու սպառնալիքով զսպելու նրա ռազմատենչ նկրտումները: Հայաստանի Հանրապետությունում առկա ռեսուրսների հաշվառմամբ անհրաժեշտ է ունենալ մեծ արդյունավետությամբ գործող Զինված ուժեր, ուստի մշտապես զարգացնել նրանց մարտական կարողությունները՝ ԶՈՒ-ն հագեցնելով նոր ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով, առկա սպառազինությունն ու ռազմական տեխնիկան պահպանելով մարտական վիճակում, արդիականացնելով ու կատարելագործելով զենքի համակարգերն ու համալիրները:

ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը 2015 թվականը հայտարարել է «Մարտական կարողությունների զարգացման տարի»՝ շեշտը դնելով «Խելամիտ պաշտպանության» միջոցով «Փոքր ուժերով մեծ խնդիրների կատարման վրա»[1], այսինքն՝ բավարար ռազմական հզորության ապահովման գործում կարևորվում են ոչ այնքան քանակական պարամետրերը, որքան՝ որակական, ինչը ենթադրում է հավանական ռազմական գործողությունների բնույթի հաշվառմամբ իրականացնել ՍՌՏ համալրման, նորոգման, պահպանման ու արդիականացման խնդիրների լուծմանը նպատակաուղղված բոլոր հնարավոր միջոցառումներն ու օգտագործել բոլոր միջոցները՝ կարևորելով հատկապես ինքնապահովումը, որի աղբյուրը ՀՀ ռազմական արդյունաբերությունն է[2]:

Ըստ այդմ ընդունվել և գործում է Հայաստանի Հանրապետության սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագիրը, որի կատարումն ուղղված է առկա միջոցների մարտական հնարավորությունների մեծացմանն ու մարտական հզորության ավելացմանը: Ներկայիս տեխնիկական և

[1] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի 2015 թվականի տարեմուտի ուղերձը», 2015, էջ 13–14:

[2] Տես *Ս. Մ. Օհանյան,* ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը որպես պաշտպանական բարեփոխումների առաջնային խնդիր: «ՀԲ», 2011, հմ. 3:

տեխնոլոգիական բուռն առաջընթացը, մեծ թվով պետությունների սպառազինության մեջ նոր զինատեսակների, այդ թվում՝ ճշգրիտ խոցման միջոցների ներառումը կենսականորեն կարևոր պահանջներ են դնում մեր ԶՈՒ-ի ՍՌՏ-ի առջև[3]:

ՀՀ Զինված ուժերի մարտական կարողությունների զարգացման համար նպատակաուղղված և հաստատուն քայլերով փուլ առ փուլ կատարվում է սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիական նմուշներով համալրում: Այն ներառում է, մասնավորապես, հետախուզական ստորաբաժանումների կրակային խոցման միջոցների կատարելագործում և դրանց կրակային հզորության մեծացում, գիշերային ու ցերեկային պայմաններում դիտարկման և նշանառման բարձրորակ համակարգերի մշակում ու ներդրում, հեռահար ռեակտիվ հրետանային և հրթիռային ճշգրիտ միջոցներով համալրում:

Միևնույն ժամանակ, նորագույն ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով ԶՈՒ-ի ապահովումը կապված է մեծ ծախսերի հետ, ուստի անհրաժեշտ է լուծել նաև առկա սպառազինության և ռազմական տեխնիկայի պահպանման հույժ կարևոր խնդիրը, այն է՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման ու վերականգնման հնարավորինս ճիշտ կազմակերպումն ու իրականացումը:

Սպառազինության և ռազմական տեխնիկայի մշակման, արտադրության, մարտական կիրառման երկարատև փորձի հիման վրա համաշխարհային ռազմաշինության մեջ աստիճանաբար ձևավորվել են ցուցանիշներ, ըստ որոնց գնահատվում են ինչպես սպառազինության և ռազմական տեխնիկայի առանձին նմուշներ, այնպես էլ կատարվում են տարբեր նմուշների միջև համեմատական վերլուծություններ: Այդ ցուցանիշները պայմանականորեն բաժանվում են 2՝ մարտական (մարտավարական) և տեխնիկական (շահագործական) դասի: Սպառազինության և ռազմական տեխնիկայի ընդհանրացված հիմնական մարտական ցուցանիշներն են՝ կրակային հզորությունը, շարժունությունը և պաշտպանվածությունը: Ցուցանիշների քանակական արժեքները բերվում են համապատասխան սպառազինության և տեխնիկայի մարտական ու մարտավարական բնութագրերում:

Սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկական (շահագործական) ցուցանիշները բնութագրում են ըստ իրենց նախանշանակման մարտական կիրառմանը սպառազինության և ռազմական տեխնիկայի պատրաստության աստիճանը: Հիմնական շահագործական ցուցանիշներն են.

– նախապատրաստելիությունը մարտական կիրառմանը (մարտական կիրառման համար անհրաժեշտ աշխատանքների կատարման ծավալը և ժամկետները՝ տարբեր պայմաններում),

– շահագործման նյութերի խնայողականությունը,

– սպասարկելիությունը (սպասարկման աշխատանքների ծավալների, ժամկետների կատարման և պարբերականության պահպանումը),

[3] Այդ պահանջներն ավելի հանգամանորեն տես *Յու. Գ. Խաչատրով,* Ռազմական գործողությունների օպերատիվ, բարոյահոգեբանական, տեխնիկական և թիկունքային ապահովման հիմունքները. ՀՀ ԶՈՒ-ի ապահովման համակարգի կատարելագործման հիմնական ուղղությունները: «ՀԲ», 2010, հմ. 3:

– էրգոնոմիական ցուցանիշները (անձնակազմի կողմից երկարատև մարտական շահագործման տեսակետից հարմարավետությունը),

– շահագործման տարբեր պայմաններին հարմարվողականությունը (կլիմայական, տեղանքի),

– հուսալիությունը, որը համալիր ցուցանիշ է և բնութագրվում է անխափանությամբ, երկարակեցությամբ և նորոգապիտանիությամբ[4]:

Հայտնի է, որ սպառազինության և ռազմական տեխնիկայի որակական ցուցանիշների մի մասը շահագործման ընթացքում մնում է հաստատուն, իսկ մյուս մասը փոխվում է, ընդսմին շահագործում ասելով հասկանում ենք ոչ միայն տեխնիկայի օգտագործումը, այլև պահումը:

Մարտական կարողությունների զարգացման նպատակով անհրաժեշտ է նաև իրականացնել որոշակի միջոցառումներ՝ նպատակաուղղված տեխնիկայի հուսալիության ցուցանիշների պահպանմանը մարտական կիրառման համար թույլատրելի սահմաններում: Այդպիսի միջոցառումներից են.

1) շահագործող և նորոգող անձնակազմերի պատրաստման համակարգի կատարելագործումը,

2) սպառազինության և ռազմական տեխնիկայի մարտական կիրառման օպտիմալ եղանակների մշակումը,

3) շահագործման, նորոգման և պահման համակարգերի կատարելագործումը,

4) համալրումը շահագործման, նորոգման և պահման արդիական միջոցներով,

5) սպառազինության և ռազմական տեխնիկայի տարբեր համակարգերի արդիականացումը, որը պետք է իրագործվի հիմնական նորոգումների ընթացքում,

6) ռազմաարդյունաբերական և ռազմատեխնիկական համագործակցության ոլորտներում սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացմանն ուղղված համատեղ ձեռնարկությունների ստեղծումը, գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացումը,

7) միջազգային համագործակցության շրջանակներում սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման ու պահպանման առաջավոր փորձի ուսումնասիրությունը և կիրառումը:

Զինված ուժերի զարգացման հիմնական ուղղություններից է առկա սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացումը, որի շնորհիվ հնարավոր է ոչ միայն պահպանել, այլև մեծացնել ստորաբաժանումների մարտական արդյունավետությունը: Արդիականացման ընդհանուր խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է ցուցաբերել համակարգված մոտեցում, ինչը ենթադրում է սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման ժամանակ հաշվի առնել տվյալ տեսակի կարևորությունը, փաստացի վիճակը, յուրային ուժերով կամ միջազգային կոոպերացիայով արդիականացման արդյունավետությունը, կատարման մոտավոր ժամկետները և ընդհանուր արժեքը:

[4] Տես, օրինակ, *Nicholas J. Avdellas, Joseph L. Berry, Michael D. Disano, David M. Oaks, Earl R. Wingrove*. Future Capabilities of DOD Maintenance Depots. Report LG901M2. LMI. February 2011:

Պատերազմական ժամանակաշրջանում սպառազինությունը և ռազմական տեխնիկան վերականգնելու համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան նյութական միջոցներ և, եթե ավտոմոբիլային տեխնիկայի համար պահեստամասերի ձեռքբերումը լուծելի է, ապա զրահատանկային տեխնիկայի և հրթիռահրետանային սպառազինության նորոգման կազմակերպման համար անհրաժեշտ պահեստամասերի ներկրումը կապված կլինի որոշակի դժվարությունների հետ: Այս խնդիրը որոշակի չափով լուծելի է արդիականացման կամ նոր կոնստրուկտիվ փոփոխությունների շնորհիվ: Դրան են ուղղված հրթիռահրետանային սպառազինության և զրահատանկային ծառայությունների կողմից կազմակերպված և իրականացվող մի շարք նորարարական աշխատանքներ:

Այսպես. ձեռնարկվել են հրաձգային զենքի կատարելագործում և որոշ մասերի արտադրություն, ուսումնական ռազմամթերքի մշակում և արտադրություն, Տ-72 տանկի որոշ մասերի նորոգում: Մշակվել և կազմակերպվել է ՀՄՄ-1-ի տեխնիկայի արդիականացում, որի շնորհիվ պետք է ապահովվի ՀՄՄ-2-ի կրակային հզորություն:

Կատարված աշխատանքների ամփոփման և գալիք խնդիրների վերլուծության արդյունքներով մշակվում է 2016–2020 թթ. ՁՈՒ-ի սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման ծրագիր, որով նախատեսվում է առկա խնդիրների լուծման նկատմամբ մշակել ավելի ընդհանուր և համակողմանի մոտեցումներ, այդ թվում նաև սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկական ապահովման ոլորտում: Դա, անշուշտ, կնպաստի մեր Զինված ուժերի մարտական կարողությունների էլ ավելի մեծացմանը:

ЗАДАЧИ ОБЕСПЕЧЕНИЯ ВС ВООРУЖЕНИЕМ И ВОЕННОЙ ТЕХНИКОЙ В ПЕРСПЕКТИВЕ РАЗВИТИЯ БОЕВЫХ ВОЗМОЖНОСТЕЙ

М. А. ЧИЛИНГАРЯН, генерал-майор,
Начальник Вооружения – Начальник Управления ВС РА

РЕЗЮМЕ

Важнейшим гарантом безопасности РА являются ВС, находящиеся в постоянной готовности к эффективному боевому применению, что требует постоянного повышения их боевых возможностей. Одним из действенных способов решения данной задачи является оснащение ВС современным вооружением и военной техникой (ВВТ), обеспечение боевой готовности наличествующего ВВТ, модернизация и совершенствование систем и комплексов вооружения.

ВС РА поэтапно оснащаются современными образцами ВВТ, в частности, средствами огневого поражения разведывательных подразделений, высококачественными системами наблюдения и прицеливания в любых погодных условиях и при любом освещении, дальнобойными высокоточными реактивными артиллерийскими и ракетными средствами.

Для решения задачи правильной организации и осуществления эксплуатации и ремонта ВВТ необходимо постоянное осуществление следующих мероприятий: совершенствование системы подготовки эксплуатирующего и ремонтирующего личных составов; разработка оптимальных способов применения ВВТ; совершенствование систем ремонта и хранения ВВТ; оснащение технических служб современными средствами ремонта и хранения ВВТ; модернизация систем ВВТ в ходе капитального ремонта с нацелом на повышение эффективности их применения; создание в рамках военно-промышленного и военно-технического сотрудничества совместных предприятий по модернизации ВВТ и осуществление опытно-конструкторских работ; в рамках международного сотрудничества изучение и применение передового опыта эксплуатации и сохранения ВВТ.

THE TASKS OF SUPPORTING THE ARMED FORCES WITH WEAPONS AND MILITARY EQUIPMENT IN THE PERSPECTIVE OF DEVELOPING COMBAT CAPABILITIES

M. A. CHILINGARYAN, Major General,
Chief of the Armament – Chief of the Department, RA Armed Forces

SUMMARY

The most important guarantor of the RA security are the Armed Forces in constant readiness for effective combat employment, which requires constant upgrade of their combat capabilities. One of the efficient ways of solving this problem is the equipment of the Armed Forces with modern weapons and military equipment (WME), ensuring combat readiness of the available WME, modernization and improvement of armament systems and complexes.

The RA Armed Forces are step by step equipped with modern samples of WME, in particular, with means of fire for effect of reconnaissance units, high-quality surveillance and sighting systems in all weather conditions and in any light, long-range high-precision artillery and rocket means.

The constant implementation of the following measures is necessary to carry out the tasks of proper organization and implementation of operating and repairing WME: improving the training system of the exploiting and repairing personnels; developing optimal methods of using WME; enhancing the systems of repair and storage of WME; equipping technical services with modern means of repair and storage of WME; modernizing the systems of WME in the course of a complete overhaul targeted at the increase of the effectiveness of their use; creating joint ventures for modernizing WME and implementing research and development works within the framework of defense-industrial and military-technical cooperation; studying and applying the best practices of the employment and storage of WME within the framework of international cooperation.

ԶՈՐՔԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԻՐԱՌՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Մ. ԴԱՎԹՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ օպերատիվ վարչության պետ

Ներկայիս համաշխարհային և տարածաշրջանային ռազմաքաղաքական իրավիճակը անմիջական ազդեցություն է գործում Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի զարգացման պլանների և թվաքանակի վրա:

Դրան գումարվում է և այն հանգամանքը, որ մի շարք պետությունների համար ռազմական ուժի ցուցադրումը քաղաքական խնդիրների լուծման առավել իրական եղանակներից է: ՈՒստի ՀՀ Զինված ուժերի հետագա զարգացումը ներկայումս պետության կարևոր խնդիրն է:

Արդի պայմաններում, երբ աշխարհաքաղաքական և տնտեսական իրավիճակը հույժ բարդ է և դժվար կանխատեսելի, մեր պետության անվտանգության ապահովումը դառնում է պատերազմի բացառման, ահաբեկչության դեմ պայքարի, հավանական հակառակորդի նկատմամբ տեղեկատվական ու մարտական կարողությունների գերազանցության ձեռքբերման առումով ավելի բարդ և համակցված խնդիր: ՈՒստի և պետության ուշադրության կենտրոնում է Զինված ուժերի մարտական հնարավորությունների անընդհատ զարգացումը, քանի որ մեր Զինված ուժերը պետք է մշտապես պատրաստ լինեն կասեցնելու ցանկացած տեսակի ագրեսիա՝ ուղղված ՀՀ անկախության, ամբողջականության և նրա տարածքի անձեռնմխելիության դեմ:

Զինված ուժերի զարգացումը մի շարունակական գործընթաց է, որը նպատակահարմար է պլանավորել մի շարք պետությունների առաջավոր փորձի հաշվառմամբ: Տարածաշրջանում տնտեսական ու քաղաքական ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունների հետևանքով անհրաժեշտ է ձևավորել արդյունավետ ռազմավարական զսպման հուսալի համակարգ, որը պահանջում է մշտական կատարելագործում, նորագույն զինատեսակներ, վաղ հայտնաբերման, նախազգուշացման և նշանացուցման արդյունավետ համակարգեր, հարվածային (խոցման) միջոցներ, բազմաֆունկցիոնալ տարեղանակային ավիացիոն ուժեր, զանազան տեսակների հատուկ նախանշանակման ռազմական տեխնիկայի նմուշներ, որոնց համահունչ կատարվում է զինված ուժերի կառուցվածքի արդիականացում, ինչի շնորհիվ աճում են դրանց մարտական հնարավորությունները և կիրառման արդյունավետությունը:

Ժամանակակից օպերացիաների (մարտական գործողությունների) ղեկավարման գործում մեծացել է կառավարման, կապի և հետախուզության ավտոմատացված համակարգերի դերը, բազմազան են դարձել այն խնդիրները, որոնք առաջին

հերթին ուղղված են պետության անվտանգության ապահովման նպատակով պետական կառավարման բոլոր մարմինների և ուժային կառույցների համագործակցության սերտացմանը: Զինված ընդհարումների համաշխարհային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս ռազմական հակամարտությունները կրում են կարճատև բնույթ և ուղեկցվում են ռազմական և ոչ ռազմական միջոցների կիրառմամբ:

Վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ առանձնացնում ենք մի շարք առանցքային խնդիրներ:

Այսպես. համաձայն առաջատար պետությունների փորձի՝ ՁՈՒ-ի մարտական կիրառման արդյունարարությունը, զորքերի մարտական հնարավորությունները ըստ օպերատիվ ուղղությունների մեծացնելու, օպերացիաներում (մարտում) առաջադրվող խնդիրները կարճ ժամանակամիջոցում արդյունավետ կերպով կատարելու համար անհրաժեշտ են համալիր միջոցառումներ, մասնավորապես՝ պետք է ձեռք բերել ռազմավարական և օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիրներ, համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր, նորագույն թռչող սարքեր, հակաօդային պաշտպանության համակարգեր, զորքերի կառավարման արդիական համակարգեր, պատրաստել բարձր տեխնոլոգիական ՍՌՏ-ն գրագետ կերպով շահագործելու ունակ մասնագետների, բարձրացնել անձնակազմի մարտական պատրաստման մակարդակը, կատարելագործել ռազմական ենթակառուցվածքները, լուծել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովման խնդիրները և այլն:

Ժամանակակից համազորային մարտում հակառակորդի կրակային խոցման գործում առաջնային դերը պատկանում է օդուժին, հրթիռային զորքերին և հրետանուն, որոնք պետք է ապահովեն տվյալ կրակային խոցման խնդիրների 50–60 %-ը: Դա նշանակում է, որ ՀՀ դեպքում, որպեսզի հրթիռային զորքերը և հրետանին կատարեն իրենց առաջադրվող խնդիրները, դրանք պետք է լրահամալրվեն ռազմավարական և օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիրներով, ժամանակակից համազարկային կրակի ռեակտիվ համակարգերով, արդիական հետախուզական սարքերով և համապատասխան մասնագետներով:

Միևնույն ժամանակ, զինված պայքարի միջոցների և եղանակների զարգացման արդիական միտումները ցույց են տալիս, որ ՍՌՏ յուրաքանչյուր նմուշի արդյունավետությունն էապես աճում է, երբ դրանք միավորվում են կառավարման մեկ միասնական համակարգի մեջ: Օրինակ՝ ԱՄՆ-ում գործում է զրահատեխնիկայի բոլոր նմուշներն ընդգրկող համակարգչային ցանց՝ միջզրահատեխնիկական համակարգչային տեղեկատվական համակարգ[1] *(Intervehicular information system, IVIS)*, որը ժամանակի ռեալ մասշտաբում ցույց է տալիս տվյալ նմուշի գտնվելու վայրը, առկա վառելիքի և մարտապաշարի քանակությունը և այլն: Ըստ այդմ նպատակահարմար ենք համարում առկա խոցման և հետախուզական միջոցների կառավարման համակարգերի համակցմամբ ստեղծել հայտնաբերման և ազդարարման արդյունավետ համակարգ, որը հետախուզական միջոցներով

[1] Տես, օրինակ, *R. Gary Diaz*. Intervehicular information system (IVIS): The Basis for a Tactical Information System. SAE Technical Paper 940982, 1994 (papers.sae.org/940982/):

կկատարի հակառակորդի օդային և ցամաքային տարածքի շուրջօրյա հսկողություն ամբողջ խորությամբ, զորքերի, տեխնիկայի տեղաշարժերի հայտնաբերման տվյալների փոխանցում խոցման ուժերին, ինչպես նաև խոցման արդյունավետության գնահատում:

Հակառակորդի նկատմամբ օդում գերազանցության հասնելու համար կարևոր նշանակություն ունի վաղ հայտնաբերման, ազդարարման և նշանացուցման համակարգի ստեղծումը, ինչպես նաև զորքերի համալրումը զենիթահրթիռային համակարգերով (համալիրներով), նոր սերնդի ռադիոտեղորոշումային և ռադիոտեխնիկական հետախուզական համալիրներով, բազմաֆունկցիոնալ տարեղանակային ինքնաթիռներով, մեծ թռիչքային ընթացապաշարով բազմանպատակային անօդաչու թռչող ապարատներով, գերճշգրիտ խոցման միջոցներով և ՀՕՊ-ի կառավարման հեռանկարային ավտոմատացված համակարգերով, որոնք հնարավորություն կտան պատճառելու անընդունելի կորուստներ:

Կարելի է յուրային զորքերի մարտական կարողությունները* և հզորությունները դնել հակառակորդի կարողությունների և հզորությունների հետ ուղիղ համեմատության մեջ, բայց դա չի կարող տալ բավարար պատասխան, եթե հաշվի չառնենք տեղանքը, զորքերի բարոյահոգեբանական վիճակը, զենքին տիրապետելու վարպետությունը, կառավարման համակարգի աշխատունակությունը, պաշտպանվածությունը և այլ գործոններ:

Ձինված ուժերի մարտական հզորությունը մեծապես կախված է զորքերի կառավարման արդյունավետությունից, որի գրավականներն են ըստ օպերատիվ ուղղությունների՝ կառավարման և հետախուզական-տեղեկատվական հեռանկարային համակարգերի ստեղծումը, ինչը հնարավորություն կտա արդի պայմաններում ժամանակ առ ժամանակ թարմացվող տվյալների վերլուծության արդյունքների հիման վրա ավտոմատ կերպով հրամանատարին տրամադրելու զորքերի գործողությունների և կրակի կառավարման մի շարք օպտիմալ եղանակների կիրառելի տարբերակներ: Գիտականորեն կատարված եզրահանգումների և գիտական աջակցության շնորհիվ հնարավոր է կրճատել կառավարման ցիկլը, բարձրացնել հրամանատարների և շտաբների իրազեկության մակարդակը, ինչն իր հերթին զգալիորեն կմեծացնի զորքերի մարտական կարողությունները:

Ներկայիս մարտական գործողությունների արագընթացության և դինամիկության պայմաններում օպերացիաների ու մարտերի պլանավորման ժամանակ անհրաժեշտ է սեղմ ժամկետներում ընդունել որոշումներ, տալ մարտական առաջադրանքներ, իսկ դրանք ժամանակին և ճիշտ կատարելու համար անհրաժեշտ է ունենալ օպերատիվ-մարտավարական հաշվարկումների ծրագիր, որը հնարավորինս ճշգրիտ կերպով կարտացոլի պլանավորման ընթացքը և արդյունքը: Ծրագիրը պետք է տեղանքի բնույթի և մարտական գործողությունների վրա ազդեցության

* Մարտական կարողությունները (հնարավորությունները) քանակական ու որակական ցուցիչների ամբողջություն են, որոնք բնութագրում են ստորաբաժանման, զորամասի, միավորման ունակությունը՝ տրված ժամկետում և իրադրության պայմաններում կատարելու որոշակի մարտական խնդիր (տես «Боевые возможности». «Военный энциклопедический словарь». т. 1. М, 2001, с. 201):

հաշվառմամբ ապահովի սպառազինության և ռազմական տեխնիկայի որակական ու քանակական տվյալների և հնարավորությունների անսխալ գնահատումը, պաշտպանությանը (հակահարձակմանը) պատրաստության աստիճանը, կրակային հակազդեցության ժամանակ կողմերի ուժերի և միջոցների կորուստների մաթեմատիկական սպասումը, ուժերի և միջոցների առավել արդյունավետ բաշխումը:

Դեռ հնագույն ժամանակներից զորավարներին մտահոգել են մարտական գործողությունների արդյունավետության մեծացման, մարտական կարողությունների լիարժեք օգտագործման պրոբլեմները. Այս դժվարին խնդրի լուծման երկարատև որոնումները զորավարներին հանգեցրել են վճռական տեղամասը կռահելու, այդտեղ ուժերն ու միջոցները կենտրոնացնելու միանգամայն տրամաբանական գաղափարին[2]:

Նորագույն տեխնիկայով և սպառազինությամբ համալրումը զգալիորեն կմեծացնի զորքերի մարտական կարողությունները և հնարավորություն կտա հաղթանակի հասնելու հանկարծակիության, գործադրվող ջանքերի կենտրոնացման, գործողությունների բարձր տեմպի և վճռականության ապահովման շնորհիվ:

Զորքերի իրական մարտունակությունն ստուգելու նպատակով անցկացվում են մարտական պատրաստման պարապմունքներ, տարատեսակ զորավարժություններ, զորամասերում ու ստորաբաժանումներում մշտապես ձեռնարկվում են համապատասխան աշխատանքներ, վերադաս շտաբների կողմից իրականացվում է հսկողություն և օգնության ցուցաբերում, մարտական պատրաստության հանկարծակի ստուգումներ: Այս ամենը հնարավորություն է տալիս ստանալու ըստ կոնկրետ մարտական խնդիրների զորքերի՝ հնարավորությունների օբյեկտիվ պատկերը և օպերատիվ կերպով վերացնելու հայտնաբերված թերությունները:

Նպատակահարմար է նաև մեծացնել հատուկ նախանշանակման և դեսանտային ստորաբաժանումների դերը, պլանավորել հետախուզական ստորաբաժանումների՝ օպերատիվ և ռազմավարական խորությամբ արդյունավետ հատուկ գործողություններ:

ՁՈՒ-ի մարտական կարողությունների մեծացման կարևոր նախապայման է արդիական տեխնոլոգիաներով պատրաստված զինատեսակների հմուտ կիրառման ու շահագործման համար բարձրակարգ մասնագետների պատրաստումը գիտակրթական և ուսումնական կենտրոններում՝ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների արդյունքների վրա հիմնված ծրագրերով:

Անձնակազմի համալրումը համապատասխան պատրաստում ստացած պայմանագրային զինծառայողներով նույնպես զորքերի մարտական կարողությունների մեծացման կարևոր եղանակներից մեկն է:

Մարտական կարողությունների մեծացման կարևոր գործոններից է զինծառայողների բարոյականային հատկանիշների բարելավմանը, բանակի դերի ու նշանակության մեծացմանը, բանակ–ժողովուրդ կապի ամրապնդմանը նպատակաուղղված միջոցառումների պլանավորումն ու իրականացումը:

[2] Տես «Главный удар». «Война и мир в терминах и определениях». Военно-политический словарь. Под общей редакцией Дмитрия Рогозина. М., 2011 (http://www.voina-i-mir.ru/article/265):

Սակայն ռազմական արվեստի զարգացման փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ անգամ շատ բարձր քանակական ու որակական ցուցանիշները չեն կարող ապահովել ցանկալի արդյունք, եթե չկան զարգացած ռազմական միտք, լայն մտահորիզոն ունեցող զորահրամանատարներ: Ահա թե ինչու մարտական կարողությունների մեծացման համար պետք է բարձրացնել հրամանատարական պատրաստման մակարդակը:

Հրամանատարական պատրաստումը ուսումնական-դաստիարակչական միջոցառումների մի համակարգ է, որն անցկացվում է օպերատիվ օղակի սպաների գիտելիքների խորացման, մասնագիտական հմտությունների ձևավորման ու զարգացման, հրամանատարական ունակությունների կատարելագործման նպատակով: «ՁՈՒ-ի օպերատիվ օղակի սպաների հրամանատարական պատրաստմամբ լուծվում են հետևյալ հիմնական խնդիրները՝ գեներալների և սպաների կողմից հավանական պատերազմին, բանակին վերաբերող տեսական գիտելիքների յուրացում, ռազմական գիտության և արվեստի, ռազմական գործի վերաբերյալ պետության հայեցակարգային մոտեցումների խորը և համակողմանի ըմբռնման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծում, գործնական ունակությունների կատարելագործում»[3]:

Ձինված ուժերում օպերատիվ օղակի սպաների հրամանատարական պատրաստման հիմնական ձևերն են ինքնուրույն (անհատական) պատրաստումը և համատեղ պատրաստումը:

Ինքնուրույն պատրաստման ժամանակ ուսումնասիրվում է ռազմական արվեստի տեսությունը, կատարելագործվում են գործնական ունակությունները:

Համատեղ պատրաստման ձևերից են հրամանատարական պատրաստման պարապմունքները և օպերատիվ (օպերատիվ-մասնագիտական) հավաքները: Հրամանատարական պատրաստման պարապմունքների բովանդակությունն ու անցկացման կարգը որոշվում են սպաների պատրաստման տարեկան ուսումնական ծրագրով և ըստ ամիսների դասացուցակով: Օպերատիվ (օպերատիվ-մասնագիտական) հավաքները, որոնք սովորաբար կազմակերպվում են ուսումնական տարվա սկզբին կամ ընթացքում՝ մինչև 4-5 օր տևողությամբ, նպատակաուղղված են բարձրացնելու օպերատիվ շտաբների գեներալների, սպաների գիտելիքների մակարդակը և կատարելագործելու ռազմավարությանն ու օպերատիվ արվեստին առնչվող նրանց ունակությունները[4]:

Հաշվի առնելով վերը նշված խնդիրները և դրանց լուծման առաջարկվող եղանակները, արդի ժամանակաշրջանի ռազմական հակամարտությունների ու պատերազմների փորձը՝ հանգում ենք այն գաղափարին, որ զորքերի մարտական կարողությունները մեծացնելու և արդյունավետ կերպով կիրառելու համար անհրաժեշտ է ունենալ ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով համալրված զորամիավորումներ, զորամասեր, ստորաբաժանումներ, բարձր բարոյականային հատկանիշներ ունեցող, լավ պատրաստականությամբ

[3] Տես *Ա. Մ. Դավթյան*, Զորքերի օպերատիվ պատրաստման որոշ հարցեր զորային կառույցի բարեփոխումների տեսանկյունից: «ՀԲ», 2011, հմ. 1–2:

[4] Տես նույն տեղում:

անձնակազմ, որին կառավարման ճկուն համակարգի միջոցով կղեկավարեն ռազմական բնագավառի ամենաթարմ գիտելիքներով զինված, այդ գիտելիքները գործնականում արդյունավետ կերպով կիրառելու կարողությամբ օժտված հմուտ հրամանատարները:

ПРОБЛЕМНОСТЬ ЭФФЕКТИВНОГО ПРИМЕНЕНИЯ БОЕВЫХ ВОЗМОЖНОСТЕЙ ВОЙСК

А. М. ДАВТЯН, генерал-майор, Начальник Оперативного управления ГШ ВС РА

РЕЗЮМЕ

В современных геополитических и экономических условиях обеспечение безопасности РА напрямую связано с решением таких задач, как исключение войны, борьба против терроризма, достижение превосходства в боевых возможностях и информационного превосходства над противником. Повышение боевых возможностей ВС обеспечивается осуществлением тщательно спланированных и взаимно увязанных комплексов мероприятий по различным направлениям. Одним из таких важных направлений является повышение боевых возможностей и эффективности применения ракетных войск и артиллерии, способных решать огневые задачи в требуемом объеме. В соответствии с международной практикой оптимальным путем решения данной проблемы является наличие современных стратегических и оперативно-тактических ракетных комплексов, соответствующих разведывательных средств, а также подготовка необходимых специалистов. Анализ локальных войн показывает, что создание единой системы управления для нескольких образцов ВВТ способствует повышению эффективности применения каждого из образцов. Объединение систем поражения и управления разведывательными средствами в единую систему обнаружения и оповещения позволит осуществлять круглосуточный контроль над воздушным пространством и территорией противника по всей глубине, передавать артиллерийским подразделениям данные о передвижениях войск и техники противника, а также давать оценку эффективности поражения.

Огневая мощь ВС в значительной степени зависит от эффективности управления войсками, поэтому необходимо создать разведывательно-информационные системы перспективного управления, что даст командиру возможность выбирать оптимальные варианты боевого управления огнем и действиями войск из автоматически разрабатываемых на основе периодически обновляемых данных. Соответствующая программа должна учитывать особенности местности, на основе количественных и качественных характеристик оценивать возможности ВВТ, степень готовности к наступлению и обороне, математическое ожидание величины потерь в силах и средствах, эффективно распределять силы и средства.

Соответственно решению этих и других проблем совершенствуется структура ВС, что также способствует повышению их боевых возможностей и эффективности применения.

THE CHALLENGE OF THE EFFICIENT USE OF TROOPS COMBAT CAPABILITIES

A. M. DAVTYAN, Major General, Chief, Operative Department, Main Staff, RA Armed Forces

SUMMARY

Ensuring the RA security in current geopolitical and economic conditions directly relates to the solution of such problems as the elimination of war, combating terrorism, achieving superiority in combat capabilities and information superiority over the enemy. The Armed Forces combat capabilities improvement is ensured by the implementation of carefully designed and interrelated sets of activities in various fields. The increase of combat capabilities and of the efficiency of the employment of rocket forces and artillery capable of solving the fire missions to the required extent is one of those important areas. In accordance with the international practice, the best way to solve this problem is the availability of modern strategic and tactical missile complexes, appropriate reconnaissance facilities, as well as the training of the necessary specialists. The analysis of local wars shows that establishing an integrated control system for some samples of the Weapons and Military Equipment (WME) contributes to the increase in the efficiency of employing each of the samples. The integration of the destruction system and the control system of reconnaissance means into a common system of detection and reporting will allow to exercise twenty-four-hour control over the enemy’s airspace and territory throughout the depth, transmit data on the movements of enemy's troops and equipment to the artillery units, as well as assess the destruction efficiency.

The firepower of the Armed Forces greatly depends on the effectiveness of troops control, thus it is necessary to establish reconnaissance and information systems of prospective control, which will give the commander an opportunity to choose optimal versions of the combat control of fire and troops actions from the data periodically updated on the basis of the automatically developed ones. The corresponding program should take into account the peculiarities of the terrain, assess the capabilities of the WME, the degree of readiness to attack and defense, the mathematical expectation of losses in strength and materiel, based on the quantitative and qualitative characteristics, and, accordingly, efficiently distribute the means and resources.

The structure of the Armed Forces is in the process of improvement according to the solution of these and other problems, and that also furthers the enhancement of their combat capabilities and employment efficiency.

ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Մ. Օհանյանը
և ՌԴ Պաշտպանության նախարար Ս. Կ. Շոյգուն
ՀՕՊ-ի տարածաշրջանային միացյալ համակարգի ստեղծման
Համաձայնագրի ստորագրման արարողության ժամանակ

Հայրենական արտադրության «Կռունկ անօդաչու թռչող ապարատ

ՀՀ ԶՈՒ-ի արդիական ռազմական տեխնիկայի նմուշներ

Պայմանագրային զինծառայողներով համալրված գնդի
հարձակողական զորավարժություն

Ռազմամասնագիտական պարապմունք
Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում

Դրվագներ ՀՀ ԶՈՒ-ի
ցուցադրական մարտավարական զորավարժությունից

Վ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԸ՝ ԶՈՐՔԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԻՑ

Ա. Բ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի պետ

Վերջին տարիներին փոխվում են պատերազմների բնույթը, ձևերը և վարման եղանակները: Մշտապես կատարելագործվում են զինված պայքարի միջոցները, ստեղծվում են սպառազինության և մարտական գործողությունների ապահովման սկզբունքորեն նոր համակարգեր, մարտական գործողությունները դառնում են ավելի դինամիկական[1], ռազմական գործողությունների վարման պրակտիկայում ավելի ու ավելի լայն կիրառում են ստանում քաղաքական-դիվանագիտական, տեղեկատվական-քարոզչական, ֆինանսատնտեսական ու ռազմական համալիր միջոցառումները՝ որպես կանոն հատուկ օպերացիաների ուժերի ներգրավմամբ, այսպես կոչված «հիբրիդային օպերացիաները»[2], և այլն: Ընդ որում, նոր սերնդի սպառազինության, ռազմական ու հատուկ տեխնիկայի մարտական կարողությունների (հնարավորությունների)[*] մեծացման տեմպը հաճախ էապես գերազանցում է զորքերի մարտական պատրաստման մակարդակի և մարտական կառավարման արդյունավետության աճման տեմպերին[3]:

Հետևաբար խիստ պահանջներ են ներկայացվում սպայական կադրերի պատրաստմանը: Պաշտպանական բարեփոխումների կարևոր ուղղություններից մեկը զինվորական, այդ թվում՝ սպայական, կադրերի պատրաստման համակարգի կատարելագործումն է[4], ինչը անմիջականորեն նպաստում է ԶՈՒ-ի մարտական կարողությունների մեծացմանը:

---

[1] Տես *С. Репин, А. Травкин, В. Шмигельский*. Повысить качество подготовки личного состава. «Воздушно-космическая оборона», 2007, № 4 (http://www.vko.ru/koncepcii/povysit-kachestvo-podgotovki-lichnogo-sostava):

[2] Տես *В. А. Киселев, И. Н. Воробьев.* Гибридные операции как новый вид военного противоборства. «Военная мысль», 2015, № 5:

[*] Մարտական կարողությունները այն քանակական և որակական ցուցանիշների համախումբն է, որոնք բնութագրում են նշված ժամանակում և կոնկրետ իրադրության պայմաններում որոշակի մարտական խնդիրներ կատարելու՝ ստորաբաժանումների, զորամասերի և զորամիավորումների ունակությունը (տես «Боевые возможности». «Военный энциклопедический словарь», т. 1. М., 2001, с. 201):

[3] Տես *Ս. Ռեպին, Ա. Տրավկին, Վ. Շմիգելսկի,* Նշ. աշխ.:

[4] *Մ. Ն. Կարապետյան, Ա. Ս. Մելքոնյան,* Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի խնդիրները և զարգացման հեռանկարները պաշտպանական բարեփոխումների համատեքստում: «ՀԲ», 2010, հմ. 1:

Իսկապես. մարտական կարողությունները կախված են՝ անձնակազմի թվաքանակից, սպառազինության ու ռազմական տեխնիկայի, զինամթերքի, վառելիքի, այլ նյութական միջոցների քանակից, զինված պայքարի համար կիրառվող միջոցների մարտավարատեխնիկական բնութագրերից, զորքերի մարտունակությունից, զորքերի կառավարման, հետախուզության, ռադիոէլեկտրոնային պայքարի և մարտի համակողմանի ապահովման արդյունավետությունից, մարտական խնդիրների լուծման եղանակներից, տեղանքից, եղանակային պայմաններից, օրվա ժամանակահատվածից և այլն[5]: Զորքերի մարտական կիրառման արդյունավետության վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ գործոններից հիմնականն են՝

– մարտական կառավարման համակարգի արդյունավետությունը,

– անձնակազմի մարտական պատրաստության մակարդակը,

– սպառազինության և ռազմական տեխնիկայի քանակական ու որակական բնութագրերը (մարտական կարողությունները)[6]:

Առաջին երկուսը անմիջականորեն կախված են հրամանատարական կազմի արհեստավարժությունից, հետևաբար՝ ռազմական կրթության համակարգի արդյունավետությունից, և մասնավորապես՝ բարձրագույն ռազմաուսումնական հաստատություններում կրթության մակարդակից: «ՈՒստի պատահական չէ, որ պետությունների՝ ռազմարվեստի ժամանակակից տեսության վրա հիմնվող զինված ուժերում ռազմական կրթության և ընդհանրապես անձնակազմի կառավարման ոլորտը համարվում է պաշտպանական համակարգի արդյունավետության և ԶՈՒ-ի մարտունակության ապահովման առաջնային գործոն»[7]:

Պաշտպանական համակարգի արդյունավետության և ԶՈՒ-ի մարտունակության մեծացման նախապայմանը զինվորական կադրերի անընդհատ կատարելագործումն է: ՀՀ Նախագահ, ՀՀ ԶՈՒ-ի Գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանի խոսքով, «ժամանակակից աշխարհում չկա ուսումնառության ավարտ հասկացություն: Կա միայն անընդհատ կատարելագործում: Ռազմաուսումնական հաստատություն կամ դասընթաց կամ նույնիսկ ակադեմիաներ ավարտելն իհարկե կարևոր է և պարտադիր, բայց դա բավարար չէ: Ե՛վ տեսական, և՛ գործնական ուսումնառությունը չընդհատվող գործընթաց է»[8]: ՈՒստի ՀՀ բարձրագույն ռազմաուսումնական հաստատություններում կրթության համակարգը պետք է լինի այնպիսին, որ հրամանատարական կազմի արհեստավարժության մակարդակի բարձրացմամբ և ինքնակատարելագործման մեթոդների

[5] Տես «Военный энциклопедический словарь», т. 1, с. 202:

[6] Տես *Ս. Ռեպին, Ա. Տրավկին, Վ. Շմիգելսկի,* Նշ. աշխ.:

[7] Տես *Ս. Մ. Օհանյան*, Ռազմական կրթության համակարգի զարգացումը՝ որպես ՀՀ պաշտպանական համակարգի արդյունավետության մեծացման գործոն: «ՀԲ», 2012, հմ. 3:

[8] Տես «Նախագահը մասնակցել է ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի և ռազմաուսումնական հաստատությունների շրջանավարտների ավարտական միջոցառմանը», 02.08.2015 (http://www.president.am/hy/press-release/item/2015/08/02/President-Serzh-Sargsyan-graduation-of-military-educational-institutions-alumni/):

ուսուցմամբ ապահովվեն սպայակազմի անընդհատ կատարելագործման նախադրյալներ:

ԶՈՒ-ի մարտական կարողությունների մեծացումը պայմանավորված է ապագա հրամանատարների մեջ մասնագիտական կառավարչական որակների ձևավորմամբ: Հետևաբար անհրաժեշտ է, որ կուրսանտները՝

• գիտակցեն հասարակության մեջ զինվորական մասնագիտության դերի կարևորությունը և ուսուցման ընթացքում դրսևորեն նպատակասլացություն,

• տիրապետեն զինվորական մասնագիտությանը և կառավարման մեթոդներին ու եղանակներին,

• որպես ապագա սպաներ տիրապետեն ենթականերին դաստիարակելու, ուսուցանելու, համախմբելու և ղեկավարելու համար անհրաժեշտ ունակություններին ու գործնական հմտություններին,

• զինվորական գործունեության առանձնահատկությունների հաշվառմամբ շարունակաբար կատարելագործեն իրավիճակի վերլուծման, գնահատման և գործունեության նոր ուղիներ գտնելու կարողությունները:

ՈՒսումնասիրությունները (այդ թվում՝ հետխորհրդային պետությունների փորձը) ցույց են տալիս, որ բարձրագույն ռազմաուսումնական հաստատություններում սպաների պատրաստումը կապված է մի շարք պրոբլեմների հետ: Դրանցից է հետևյալը. ապագա զինվորական մասնագետների (սպաների) արհեստավարժության ու բանիմացության մակարդակի նկատմամբ պահանջներն ավելի արագ են մեծանում ու խստանում, քան աճում են բարձրագույն ռազմաուսումնական հաստատություններում կրթական հնարավորությունները[9]: Խոսքն այն հնարավորությունների մասին է, որոնք կապված են ինչպես ուսումնանյութական բազայի, այնպես էլ ռազմամասնագիտական պատրաստման ավանդական եղանակների և ուսումնական գործընթացի կատարելագործման, դասախոսական անձնակազմի մասնագիտական ու մանկավարժական որակների զարգացման հետ:

Նշված պրոբլեմի լուծումը ենթադրում է կրթության որակի բարելավմանն ուղղված համակողմանի աշխատանք: Բարեփոխված կրթական համակարգը, «ՀՀ ռազմական կրթության հայեցակարգի» համաձայն, պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

– համապատասխանություն ՀՀ պետական կրթական չափորոշիչներին,

– համապատասխանություն միջազգային չափորոշիչներին (եվրոպական բարձրագույն կրթության տարածքին լիարժեք կերպով ինտեգրվելու ունակություն՝ Բոլոնիայի գործընթացում ՀՀ ներգրավվածության շրջանակներում),

– կրթության փուլայնություն (եռաստիճանություն),

– կրթության շարունակականության ապահովում,

– ռազմակրթական ծրագրերում միջազգային առաջավոր փորձի հաշվառում և գիտության նվաճումների ներառում,

[9] Տես *И. В. Овсянников*. Формирование профессиональных компетенций у курсантов военных командных вузов. Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук. М., 2011 (http://ens.mil.ru/science/publications/more.htm?id=10377894@cmsArticle):

– համահունչություն սպայական ու ենթասպայական կազմերի պաշտոնեական առաջխաղացման փուլերին և ընթացակարգերին,

– որակապես նոր դասախոսական կազմի ներգրավում[10]:

ՀՀ ռազմական կրթության հայեցակարգի միջոցառումների ծրագրով 2013 թ. ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում վերակազմավորման միջոցով ՀՀ ԶՈՒ-ի կրտսեր սպայական և հրամանատարական կազմերի համար ապահովվեց բուհական առաջին (բակալավրիատ) ու երկրորդ (մագիստրատուրա) աստիճանի և լրացուցիչ (հատուկ դասընթացներ) կրթությունը: Ստեղծվեց նաև հրամանատարաշտաբային ֆակուլտետ: Դրա կազմում ընդգրկվեց սպայական կադրերի որակավորման բարձրացման կենտրոնը (ՍԿՈԲԿ), որի հենքի վրա կազմակերպվում են վաշտի (մարտկոցի) և գումարտակի (դիվիզիոնի) հրամանատարների, համապատասխանաբար, 12- և 25- շաբաթյա դասընթացներ: Վերակազմավորման շնորհիվ ռազմական ինստիտուտն սկսեց ապահովել ռազմական կրթության շարունակականությունը՝ պատրաստելով «ռազմական կառավարման բակալավրի» և «ռազմական կառավարման մագիստրոսի» որակավորում ունեցող կադրեր:

ՀՀ պաշտպանության նախարարի հրամանի համաձայն՝ ռազմական ինստիտուտի բակալավրիատի շրջանավարտը մինչև մագիստրատուրա դիմելը պետք է պարտադիր ծառայություն անցնի զորքերում (ինչը նույնպես ուսում է), ծառայության ընթացքում մասնակցի վերապատրաստման դասընթացների, ծառայողական առաջխաղացմամբ նշանակվի մայորի պաշտոնում և, եթե այդ պահին նրա տարիքը չի գերազանցում 35 տարեկանը, կարող է կրթությունը շարունակել ռազմական ինստիտուտում՝ «ռազմական կառավարման մագիստրոսի» որակավորում ստանալու համար, ինչը նրան հնարավորություն է ընձեռում նշանակվելու զորամասի, զորամիավորման հրամանատարի կամ հավասարազոր պաշտոնում:

Ինչ վերաբերում է ռազմական կրթության երրորդ աստիճանին (ասպիրանտուրա), ապա այն ապահովվում է միջազգային ռազմական համագործակցությամբ՝ արտերկրի համապատասխան ռազմաուսումնական հաստատություններում:

Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում ՀՀ ռազմական կրթության հայեցակարգի պահանջների բավարարման ուղղությամբ աշխատանքն անմիջականորեն միտված է սպայական կադրերի արհեստավարժության աստիճանի բարձրացմանն ու կառավարչական հմտությունների ձևավորմանը և, վերջին հաշվով, ԶՈՒ-ի մարտական կարողությունների մեծացմանը: Այդ աշխատանքի ուղղություններն են.

1. **Կրթական ծրագրերի որակի կատարելագործումը**, որի հիմքում տվյալ մասնագիտության համար կրթության պետական չափորոշիչում նշված պահանջներն են: Ռազմական ինստիտուտում կրթական ծրագրերի կատարելագործումն անընդհատ գործընթաց է, որում հաշվի են առնվում կուրսանտների զորային

[10] Տես ՀՀ Կառավարության 2012 թ. մարտի 7-ի նիստի «ՀՀ ռազմական կրթության հայեցակարգը և սպայական կազմի պատրաստության փուլերի ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» հմ. 9–18 արձանագրություն (https://www.e-gov.am/protocols/item/135/):

ստաժավորումների և Ռազմական ինստիտուտի շրջանավարտների հետագա ծառայության արդյունքների վերլուծության հիման վրա զորամիավորումներից, զորամասերից, Գլխավոր շտաբի վարչություններից ստացվող առաջարկությունները:

2. **Դասավանդման մակարդակի բարձրացում,** որը ենթադրում է ուսումնական գործընթացի ճիշտ պլանավորում և մանկավարժական աշխատանքի արդյունավետության մեծացում, այսինքն՝ դասախոսական անձնակազմի արհեստավարժության աստիճանի բարձրացում: Հատկապես նախկին խորհրդային հանրապետությունների բարձրագույն ռազմաուսումնական հաստատություններին բնորոշ է հետևյալ պրոբլեմը. այն դասախոսները, որոնք զորքերում ծառայությունից հետո են անցել դասախոսական աշխատանքի, թեպետ արհեստավարժ են, սակայն հաճախ դժվարանում են իրենց գիտելիքներն արդյունավետ կերպով փոխանցել կուրսանտներին, այսինքն՝ ցածր է նրանց մանկավարժա-մեթոդական պատրաստության աստիճանը[11]: Այս խնդրի լուծումը դասախոսական անձնակազմի համար համապատասխան դասընթացների կազմակերպումն է ու նրանց վերապատրաստումը, այդ թվում և արտերկրում:

Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում մշակվում է ռազմամասնագիտական առարկաների՝ նոր կազմակերպական ձևի դասավանդում, որն ստացել է «ուսումնամեթոդական համալիր» անվանումը: Այն ներառում է նորմացուցային և ուսումնամեթոդական բոլոր փաստաթղթերը, ուսումնական պլանի համաձայն հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերի արդյունավետ իրագործման համար ուսուցման անհրաժեշտ ու բավարար միջոցները և որակի վերահսկման համակարգը: Այլ կերպ ասած՝ ուսումնամեթոդական համալիրը այն բոլոր գործիքների ամբողջությունն է, որոնք անհրաժեշտ են դասախոսին՝ տվյալ առարկան բարձր մակարդակով դասավանդելու համար:

3. **Գիտական, նորարարական, գյուտարարական աշխատանքների խթանումը,** ինչը նպաստում է ոչ միայն դասախոսական անձնակազմի մասնագիտական կատարելագործմանը, այլև շնորհալի կուրսանտների հայտնաբերմանը և գիտահետազոտական աշխատանքներում ներգրավմանը: 2012 թ. ռազմական ինստիտուտում ստեղծված գիտության բաժնի գործունեությունը նպատակաուղղված է ռազմական ոլորտում գերակա գիտական ուղղությունների որոշմանը և այդ ուղղություններով կատարվող աշխատանքներին ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցության խթանմանը:

Ներկայումս ռազմական ինստիտուտում դասախոսական անձնակազմի և կուրսանտների գիտական գործունեության հիմնական ուղղություններն են՝ կուրսանտական և մեթոդական գիտաժողովներին մասնակցությունը, ուսումնական ձեռնարկների ստեղծումը, ինչպես նաև գյուտարարական ու նորարարական աշխատանքները:

4. **ՈՒսումնանյութական բազայի կատարելագործումը**: Այսօր այդ բազան ներառում է մասնագիտական և հատուկ լսարաններ, լաբորատորիաներ, գրադարաններ, կրակադաշտեր, վարժասարքեր ու զանազան սարքավորանք, ուսումնա-

[11] Տես *Ի. Վ. Օվսյաննիկով*, Նշ. աշխ.:

մարզական ու մարզական տեխնիկա, սպառազինություն ու մարտական տեխնիկա և այլն: Ռեսուրսանյութական բազայի կատարելագործման հիմնական միջոցը այդ բազայի հագեցումն է արդիական, ինչպես անհատական, այնպես էլ խմբային պարապմունքների համար նախատեսված նմանարկիչ վարժասարքերով:

5. **Գիտելիքների գնահատման համակարգի կատարելագործումը**: Որակավորման պետական կրթական չափորոշիչների համաձայն՝ ռազմական բուհերին տրվել է կուրսանտի գիտելիքների ու հմտությունների ստուգման և գնահատման համակարգն ինքնուրույն կերպով ընտրելու, հետևաբար նաև այդ համակարգը շարունակաբար կատարելագործելու հնարավորություն: Ակնհայտ է, որ ԶՈՒ-ի զարգացումը, նոր սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով համալրումը, նոր զինվորական մասնագիտությունների ի հայտ գալը օրախնդիր են դարձնում նաև գիտելիքների գնահատման համակարգի կատարելագործումը: Անշուշտ, վերջինս պետք է իրագործվի Բոլոնյան գործընթացի հիմնարար սկզբունքներին համապատասխան, ինչը ենթադրում է ներդրել հետևյալ համակարգերը.

– կրեդիտների կուտակման և փոխանցման սկզբունքի վրա հիմնված եվրոպական կրեդիտավարկանիշային համակարգ,

– կուրսանտի գիտելիքների՝ մոդուլային սկզբունքով անընդհատ գնահատման ու վերահսկման համակարգ,

– առարկայական ուսումնական ծրագրերի կազմման կանոնակարգի և կրթության որակի կառավարման ներքին համակարգ:

Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում ռազմական կրթության նոր չափորոշիչներն ու ծրագրերը մշակելիս հատուկ ուշադրություն է դարձվել միջառարկայական կապերի ապահովմանը, անցում է կատարվել գնահատման 20 միավորանոց համակարգի:

6. **Կառավարման արդյունավետության մեծացումը**: Ռազմաուսումնական հաստատության կառավարման հիմքում միանձնյա ղեկավարման սկզբունքն է՝ զինվորական կանոնագրքերին համապատասխան: 2015 թ. ՀՀ պաշտպանական համակարգի հրամանատարական ու կառավարման բոլոր մակարդակներում սկսվեց նոր գաղափարների ու հայեցակարգերի տեղայնացումը, ինչպիսիք են «Խելամիտ պաշտպանությունը», «Փոքր ուժերով մեծ խնդիրների կատարումը» և «Հրահանգային կառավարման» փոխարեն «Առաջադրանքային կառավարման» («Առաջադրանքով հրամանատրում») մոդելի ներդրումը, որի նպատակը անձնակազմի շրջանում նախաձեռնողականության մակարդակի բարձրացումն է[12]: Ռազմական բուհի կառավարման համակարգի արդյունավետության մեծացումն անմիջականորեն նպաստում է նաև ապագա շրջանավարտների մասնագիտական ու կառավարչական հմտությունների ձևավորմանը:

Սույն թվականի հունիսի 22-ին «Զորամասերի և զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի[13] ընդունումը ևս նախադրյալներ է

[12] Տես *Ս. Մ. Օհանյան*, ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման էությունը և նպատակները: «ՀԲ», 2015, հմ. 3:

[13] Տես «Զորամասերի և զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին» ՀՀ 2015 թ. հունիսի 22-ի հմ. ՀՕ-99-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2015, հմ. 46 (1135)):

ստեղծում ռազմական ինստիտուտի կառավարման արդյունավետության մեծացման համար: Խոսքը, մասնավորապես, գույքի և ֆինանսական միջոցների կառավարման մասին է[14]:

7. **Ռազմական ինստիտուտի ու ՀՀ քաղաքացիական և օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունների համագործակցությունը**, որի նպատակն է՝ ռազմակրթական եռաստիճան համակարգի ներդրումը, գիտատեխնիկական նախագծերի մշակումը, համատեղ գիտահետազոտական աշխատանքների կատարումը, գիտամանկավարժական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը[15]:

Այսպիսով՝ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում վերը նշված ուղղություններով կատարվող աշխատանքներն անմիջականորեն նպաստում են հրամանատարական կազմի մասնագիտական գիտելիքների խորացմանն ու կառավարչական հմտությունների զարգացմանը, ինչը զորքերի մարտական կարողությունների մեծացման հիմնական գործոններից է:

---

[14] Տես *Ա. Ս. Նազարյան*, ՀՀ օրենսդրության փոփոխություններն ու լրացումները ՀՀ պաշտպանության երկրորդ ռազմավարական վերանայման համատեքստում: «ՀԲ», 2015, հմ. 3:

[15] Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության հայեցակարգ» ՀՀ Կառավարության 2012 թ. մարտի 7-ի նիստի հմ. 9 արձանագրային որոշման հավելված հմ. 1 (https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR9-18_1.pdf):

К ВОПРОСУ СОВЕРШЕНСТВОВАНИЯ СИСТЕМЫ ОБРАЗОВАНИЯ В ВОЕННОМ ИНСТИТУТЕ ИМ. В. САРГСЯНА С ТОЧКИ ЗРЕНИЯ УВЕЛИЧЕНИЯ БОЕВЫХ ВОЗМОЖНОСТЕЙ ВОЙСК

А. Б. КАГРАМАНЯН, генерал-майор, Начальник Военного института им. В. Саргсяна МО РА

РЕЗЮМЕ

Изменение характера войн, совершенствование методов их ведения и средств вооруженной борьбы предъявляют более высокие требования к системе подготовки офицерских кадров с нацелом на обеспечение повышения эффективности управления войсками, а следовательно, возрастания боевых возможностей войск.

Согласно «Концепции военного образования РА», реформированная система военного образования должна удовлетворять следующим требованиям: соответствие государственным и международным образовательным стандартам; поэтапность и непрерывность образования; использование в военно-образовательных программах международного передового опыта и достижений науки; соответствие системы образования этапам и регламенту должностного продвижения офицерского состава и прапорщиков.

В Военном институте им. В. Саргсяна были осуществлены реформы в целях его приведения в соответствие с этими требованиями. В частности, для младшего офицерского и командного составов были внедрены двуступенчатая система вузовского образования (бакалавриат и магистратура), а также программа дополнительного образования (специальные курсы). Был создан также Командно-штабной факультет.

В целях дальнейшего совершенствования системы образования, повышения эффективности учебного процесса и обеспечения высокого качества подготовки выпускников в Военном институте ведутся последовательные работы по следующим основным направлениям: совершенствование качества образовательных программ и системы оценки знаний; повышение уровня преподавания; стимулирование научных и инновационных работ как преподавателей, так и курсантов; совершенствование учебно-материальной базы; повышение эффективности управления; развитие межвузовского (в том числе международного) сотрудничества.

TO THE ISSUE OF IMPROVING THE EDUCATION SYSTEM IN V. SARGSYAN MILITARY INSTITUTE IN TERMS OF INCREASING THE TROOPS COMBAT CAPABILITIES

A. B. GHAHRAMANYAN, Major General, Head,
V. Sargsyan Military Institute, MOD, RA

SUMMARY

The change in the nature of warfare, improvement of methods of war and means of armed struggle make greater demands of the officers training system targeted at ensuring the increase of efficiency of command and control, therefore the enhancement of the troops combat capabilities.

According to the «Military Education Concept of the Republic of Armenia», the reformed military education system should meet the following requirements: compliance with state and international educational standards; phased and continuous process of education; use of international best practices and achievements of science in military educational programs; compliance of the education system with the stages and regulations of promoting officers and warrant officers.

The reforms to bring the education system into conformity with those requirements were implemented at V. Sargsyan Military Institute. In particular, two-level system of higher education (Bachelor and Master), as well as the program of extended education (specialized courses) were introduced for junior officers and command staff. The Command and Staff Department was also established.

Consistent work in the following basic directions is conducted to further improve the education system, increase the educational process efficiency and ensure high quality of training of the graduates of the Military Institute: improvement of the quality of the educational programs and the system of knowledge assessment; increase of the level of teaching; stimulation of academic and innovative works of both lecturers and cadets; enhancement of educational and material base; better management; development of inter-university (including international) cooperation.

ՀՕՊ-Ի ԵՎ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ս. Ռ. ԳԱԼՍՏՅԱՆ, գեներալ-լեյտենանտ, ՀՀ ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի պետի տեղակալ

Հավանական հակառակորդի օդային հարձակման միջոցներից (ՕՀՄ) օդային տարածքի պաշտպանության ապահովումը յուրաքանչյուր պետության զինված ուժերի գերակա խնդիրներից է: Այսօր հակաօդային պաշտպանությունը և ռազմական ավիացիան ռազմական անվտանգության ապահովման կարևոր բաղադրիչներից են: Հակաօդային պաշտպանությունը «հակառակորդի օդային հարձակման հետմղմանը և օդից հասցվող հարվածներից բնակչության, զորքերի և օբյեկտների պաշտպանությանը նպատակաուղղված միջոցառումների, ուժերի, միջոցների ու գործողությունների համախումբ է»[1]: Զորային օպերացիաներում իրենց խնդիրները հաջողությամբ կատարելու համար բոլոր օղակների ՀՕՊ-ի ուժերն ու միջոցները միավորվում են զորքերի հակաօդային պաշտպանության մեկ միասնական համակարգի մեջ:

Հետևաբար՝ ՀՕՊ-ի զորքերի մարտական կարողությունների զարգացումը ԶՈՒ-ի ընդհանուր հզորացման կարևոր բաղադրիչներից է:

ՀՕՊ-ի զորքերի մարտական կարողությունները կարելի է բնութագրել դրա երեք հիմնական ենթահամակարգերի կարողություններով՝ կրակային, հետախուզական, կառավարման, ընդսմին դրանց միջև գոյություն ունի ոչ գծային կապ:

ՀՕՊ-ի համակարգի նշված ենթահամակարգերի կատարելագործման ուղղությամբ գործնական քայլերը պետք է միտված լինեն հակառակորդի օդուժի մարտական կարողությունների հակակշռմանը և հակաօդային պաշտպանության խնդիրների համալիր լուծմանը:

Վերջին տարիներին աշխարհում տեղի ունեցող զինված հակամարտությունների փորձը ցույց է տալիս, որ ՀՕՊ-ի ժամանակակից միջոցների զարգացումը կատարվել է թռիչքաձև, և պատերազմի ընթացքն ու ելքը հիմնականում պայմանավորված են հակառակորդի օդային հարձակման կանխման, հակառակորդի օդային հարվածների հետմղման, օդային հետախուզման, ՕՀՄ-երից յուրային բնակչության և զորքի պաշտպանության, կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների հուսալի ծածկապաշտպանության, հակառակորդի կառավարման և նշանառման համակարգերի խոցման, նրա ՕՀՄ-երի ջախջախման և պաշտպանական ու հարվածային խնդիրների արդյունավետ կատարմամբ: Հետևաբար,

[1] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ա. Ե. Սարգսյան,* Պաշտպանական – անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն բառարան: Ե., 2012, էջ 257:

օդում գերազանցության հաստատումը այլևս չի կարող բնութագրվել միայն հակառակորդի ՀՕՊ-ի խոցման գոտիներում յուրային մարտական ինքնաթիռների թռիչքների իրականացման կամ տարաշարժերի կատարման հնարավորությամբ: Ժամանակակից ԶՀՀ-ների նշանակետային և հրթիռային բազմակապուղայնության (միաժամանակ մի քանի նշանակետ ուղեկցելու և խոցելու ԶՀՀ կարողությունը), մեկ հրթիռի արձակմամբ թռչող ապարատի խոցման հավանականության մեծացման (արդեն՝ մոտ 0,85), արձագանքման ժամանակի կրճատման շնորհիվ դրանց խոցման գոտում հայտնված թռչող ապարատները շատ մեծ հավանականությամբ և կարճ ժամկետում ոչնչացվում են:

ՀՕՊ-ի համակարգի կրակային հնարավորությունները, ընդհանուր առմամբ, կախված են զենիթահրթիռային, զենիթային հրետանային և կործանիչ ավիացիայի արդյունավետ կիրառումից:

Լեռնային տեղանքում լավ արդյունք է ստացվում, երբ ՀՕՊ-ի զորքերը համալրված են լեռնային տեղանքում կիրառման համար նպատակահարմար, տարբեր հեռահարությամբ այնպիսի ԶՀՀ-ներով, որոնք շարժուն են, ինքնավար: ՀՀ ԶՈՒ-ում նաև աշխատանքներ են տարվում առկա ԶՀՀ-ների մի քանի տեսակների արդիականացման ուղղությամբ:

ՀՀ ՀՕՊ-ի համակարգի հետախուզական հնարավորությունների կատարելագործման նպատակով արդիականացվում են առկա ռադիոտեղորոշումային միջոցները և փորձ է արվում հայրենական ռազմաարդյունաբերության ուժերով մշակելու լեռնային պայմաններում արդյունավետ գործող նոր սերնդի ինքնավար ավտոմատացված ռադիոտեղորոշումային կայաններ (ԻԱ ՌՏԿ), բազմաղիրքային ռադիոտեղորոշումային համակարգեր (ԲԴՌՏՀ):

ՀՀ ԶՈՒ-ի ՀՕՊ-ի զորքերի համալրումը ԲԴՌՏՀ-ով հնարավորություն է տալիս նվազեցնելու հակառակորդի կողմից յուրային զորքերի և օբյեկտների հայտնաբերման հավանականությունը, ինչպես նաև մեծացնելու հակառակորդի ՕՀՄ-երից դրանց պաշտպանության և օդային հարվածներին համարժեք կերպով հակազդեցության արդյունավետությունը:

ՀՕՊ-ի համակարգի կառավարման հնարավորությունները զարգացնելու, օդային հակառակորդին հայտնաբերման նպատակով հետախուզման տեղեկատվական միջոցները միավորելու և կառավարման համակարգը ավտոմատացման միջոցներով օժտելու հետ կապված պրոբլեմների լուծման տարբերակներից մեկը ՀՕՊ-ի զորքերի միասնական տեղեկատվական տարածքի (ՄՏՏ) ստեղծման հայեցակարգի շրջանակներում ՄՏՏ ավտոմատացման բազմօղակ միջոցների մշակումն է: Դրանք պետք է ներառեն՝

– կառավարման մարմինների ավտոմատացման միջոցների համալիրներ (ԱՄՀ),

– զենքի (ԶՀՀ-ներ, զենիթային հրետանային համալիրներ և ՌՏԿ-ներ) ավտոմատացված կառավարման մոդուլներ:

ՄՏՏ ստեղծումը կապահովի ՀՕՊ-ի բոլոր ուժերի ու միջոցների ավտոմատացված կառավարումը և այլ զորատեսակների կառավարման մարմինների հետ փոխգործությունը: Մարտավարական օղակի ՀՕՊ-ի ստորաբաժանումների

օժտումը ավտոմատացված միջոցներով և ԲԴՌՏՀ համալիրի կազմում եղած ԻԱ ՌՏԿ-ով հնարավորություն կտա զգալիորեն մեծացնելու յուրաքանչյուր ստորաբաժանման մարտական կարողությունները և, մասնավորապես, մերձահար գործողությամբ զենիթային միջոցների կրակային արդյունավետությունը, այդ թվում՝ կապահովի նաև կրովի ՋՀՀ (ԿՋՀՀ) կիրառումը ոչ միայն ցերեկային, այլև գիշերային ժամերին:

Նոր համակարգերի կիրառումը կապահովի.

– ՀՕՊ-ի զորքերի կրակային ներուժի աճում,

– հակահրթիռային պաշտպանության կազմակերպում,

– լեռնային տեղանքում ցածր և միջին բարձրություններում գործող անընդհատ ռադիոտեղորոշումային դաշտ,

– ՀՕՊ-ի միջոցների շարժունության մեծացում, ինչը կդժվարացնի հակառակորդի կողմից դրանց հայտնաբերումը և կնվազեցնի ոչնչացման հավանականությունը,

– ՀՕՊ-ի սպառազինության կիրառում՝ առանց անձնակազմի մասնակցության կամ հեռակառավարման միջոցով,

– ՀՕՊ-ի կառավարման համար պահանջվող տեղեկույթի օպերատիվ տրամադրում և որակի բարելավում:

ՀՕՊ-ի համակարգի արդյունավետության մեծացման հարցերը սերտորեն կապված են նաև կադրային քաղաքականության, ռազմական կրթության և զորքերի պատրաստման համակարգերի հետ, քանի որ օդային մարտի (օպերացիայի) տևողությունը ՀՀ տարածքի համար կկազմի մի քանի րոպե, ուստի ՀՕՊ-ի համակարգի հրամանատարները պետք է ունակ լինեն արագ կողմնորոշվելու, իրադրությունը գնահատելու և որոշում ընդունելու:

ՀՕՊ-ի կառավարման գործընթացի կատարելագործման համար անհրաժեշտ է նաև կազմակերպել ակտիվ ռազմագիտական աշխատանք և դրա արգասիքը կիրառել պրակտիկայում: Ներկայումս հաջողությամբ մշակվում են տարբեր մեթոդիկաներ ու մոդելներ՝ օպերատիվ-մարտավարական հաշվարկումների ավտոմատացման, գրաֆիկական փաստաթղթերի նոր էլեկտրոնային ձևերի ստեղծման և մարտական գործողությունների արդյունավետության գնահատման համար[2]:

Մեր երկրի տնտեսական հնարավորությունների հաշվառմամբ նպատակահարմար է ՀՕՊ-ի զորքերի վերազինումը կատարել փուլ առ փուլ՝ ըստ ՀՕՊ-ի ՍՌՏ արդիականացման, մշակման և ձեռքբերման ծրագրերի, ինչն իր հերթին կապահանջի ՀՕՊ-ի զորքերի կազմակերպական կառուցվածքի օպտիմալացում[3]:

Ժամանակակից զինված հակամարտությունների և պատերազմների վերլուծությունը ցույց է տալիս, որ օդային տարածքի հուսալի պաշտպանությունը հնա-

[2] Տես *Ա. Գ. Վարդանյան,* Պաշտպանական բարեփոխումների շրջանակներում հակաօդային պաշտպանության համակարգի արդյունավետության մեծացման հիմնական ուղղությունները: «ՀԲ», 2013, հմ. 1–2:

[3] Տես նույն տեղում:

բավոր չէ առանց ժամանակակից ռազմական ավիացիայի: ԶՈՒ-ի մարտական կարողությունների մեծացման միջոցներից մեկը օպերատիվ-մարտավարական ավիացիայի (ՕՄԱ) կատարելագործումն է: ՕՄԱ-ն ներառում է մի քանի տեսակի ավիացիա. ռմբակոծիչ (ճակատային ռմբակոծիչներ), կործանիչ, հետախուզական, հատուկ:

ՕՄԱ-ի առջև դրված են հետևյալ խնդիրները. օդում գերակայության նվաճում, հակառակորդի հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) միջոցների խոցում, հակառակորդի զորքի և օբյեկտների կրակային խոցում, ՕՀՄ-երի (ՀՕՊ-ի օդային բաղադրիչի) հարվածներից յուրային զորքերի և օբյեկտների պաշտպանություն, օպերացիաներում (մարտական գործողություններում) զորքերի (ուժերի) գործողությունների ավիացիոն աջակցություն և ապահովում, օդային հետախուզության, ռադիոէլեկտրոնային պայքարի վարում:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ հավանական հակառակորդի ՕՀՄ-երից օդային տարածքի պաշտպանության խնդիրը հաջողությամբ լուծվում է միայն համալիր եղանակով՝ Զինված ուժերի տեսակների և զորատեսակների համատեղ ջանքերով: ՕՀՄ-երին արդյունավետ հակազդեցությունը ներկայումս և մոտ ապագայում պետք է հիմնված լինի հակաօդային պաշտպանության զարգացած համակարգի ու նրա շարժունակ բաղադրիչի՝ կործանիչ ավիացիայի վրա:

Կործանիչ ավիացիայի ներուժային առավելություններն են՝ որսման մեծ բնագծերի ապահովումը, երկրի տարածքի մեծ մակերեսների ծածկապաշտպանության, առավել վտանգավոր ուղղություններում օդային հակառակորդի սպառնալիքների հետմղման համար ՀՕՊ-ի ներուժի մեծացման հնարավորություններն ու մեծ շարժունությունը, ինչը հույժ կարևոր է մեր պետության համար, եթե հաշվի առնենք երկրի գերակշռող լեռնային ռելիեֆը, բարդ և թույլ զարգացած ճանապարհային ցանցը, երբ ուժերի և միջոցների արագ տեղափոխումը մեկ ուղղությունից մյուսը կարող է բավական երկար տևել, իսկ որոշ հանգամանքների բերումով՝ դառնալ ընդհանրապես դժվար կատարելի:

Անհրաժեշտ է նշել ավիացիայի՝ որպես հակառակորդի կրակային խոցման միջոցի մարտական հատկությունները, որոնք առավել ցայտունորեն են բնութագրում նրա մարտական ներուժն այլ կրակային միջոցների համեմատությամբ: ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից պատերազմներում կրակային խնդիրների լուծմանը ավիացիայի մասնակցության բաժինը հրետանու հասանելիության գոտում (փողային՝ 20-35 կմ, ռեակտիվ՝ 40-80 կմ) կազմում է 18 %, իսկ հրետանու կրակի հասանելիության գոտուց դուրս՝ 80 %[4]:

Հնարավոր չէ ավիացիայի կարողությունների մեծացումը պատկերացնել առանց ժամանակակից պահանջներին համապատասխանող ռազմական ավիացիայի, մարտական և տրանսպորտային-մարտական ուղղաթիռների: Դրանց միջոցով կատարվում է օդային հետախուզում, տեղանքի ականապատում օդից,

[4] Տես *Ա. Վ. Մուրադյան, Ս. Ա. Գասպարյան*, Հայաստանի մարտական ավիացիան երեկ, այսօր, վաղը: «ՀԲ», 2013, հմ. 1–2:

հակառակորդի կրակային խոցում, ստորաբաժանումների տեղափոխում, վիրավորների տարահանում, զինամթերքի և պարենի մատակարարում և այլն:

Ռազմական ավիացիայի առաջնահերթ խնդիրներից է խոցման նպատակով օբյեկտների ժամանակին հայտնաբերումն ու հստակ նշանացուցումը, իսկ դա ենթադրում է նշանակետերի և դրանց կոորդինատների վերաբերյալ ճշգրիտ հետախուզական տվյալների հայթայթում: Այդ խնդիրների կատարման համար անհրաժեշտ է ունենալ հետախուզության ռադիոտեխնիկական, ռադիոտեղորոշումային և օպտիկական (ԻԿ տիրույթի) ժամանակակից միջոցներ՝ տեղակայված ինչպես անօդաչու, այնպես էլ օդաչուավոր թռչող ապարատների վրա:

ՁՈՒ-ի մարտական ներուժի մեծացումը պայմանավորված է նաև ՍՌՏ ձեռքբերմանն ուղղված կշռադատված քաղաքականության իրականացմամբ՝ ոչ միայն աշխարհագրական դիրքի, այլև հավանական հակառակորդի ՁՈՒ-ում առկա սպառազինության հաշվառմամբ: Ադրբեջանի սպառազինության մեջ առկա են 28 միավոր ՄԻԳ-29 կործանիչներ, որոնցից առնվազն 2-3-ը ուսումնական նախանշանակմամբ են և նախատեսված են վրագետնյա նշանակետերի դեմ կամ օդային մերձահար գործողությունների համար: ՄԻԳ-29-ն ունի 2 նշանակետային և 2 հրթիռային կապուղի, կարող է կրել 2 հատ Ռ-27 և 4 միավոր Ռ-73 հրթիռ, 60 կմ հեռավորությունից միաժամանակ հրթիռակոծել 2 նշանակետ: Այդ ինքնաթիռին կարելի է հակադրել «4+» սերնդի համապատասխան բազմաֆունկցիոնալ կործանիչ, որը կարող է մեծ հեռավորության վրա հայտնաբերել «կործանիչ» տեսակի նշանակետ և հրթիռակոծել միաժամանակ մի քանի նշանակետ:

ՀՀ ՁՈՒ-ի մարտական կարողությունների մեծացմանը կնպաստի նաև Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ՀՕՊ-ի տարածաշրջանային միացյալ համակարգի ստեղծման մասին Համաձայնագրի կենսագործումը[5]: ՀՕՊ-ի միացյալ համակարգը ՀՀ ՁՈՒ-ին հնարավորություն կտա կիրառելու ոչ միայն 102-րդ ռազմակայանում առկա 4-րդ սերնդի բազմանպատակային կործանիչները, զենիթային հրթիռային համակարգերը, հակաօդային և հակահրթիռային պաշտպանության, այլև կործանիչ ավիացիայի այն բոլոր նորագույն միջոցներն ու զինատեսակները, որոնք առկա են ՌԴ զինված ուժերի, օդատիեզերական զորքերի զինանոցում: Համաձայնագրի իրացմամբ կընդլայնվի նաև ռադիոտեղորոշումային և տիեզերական հետախուզման միջոցների զինանոցը, կստեղծվի միասնական տեղեկատվական դաշտ:

[5] Տես «Ռուսաստանը և Հայաստանը միավորեցին ՀՕՊ-ի համակարգերը կովկասյան տարածաշրջանում»: «ARMENPRESS», 23.12.2015 (http://armenpress.am/arm/news/830599/rusastany-ev-hayastany-miavorecin-hop-i-hamakargery-kovkasyan.html):

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ПВО И АВИАЦИИ В КОНТЕКСТЕ СОВЕРШЕНСТВОВАНИЯ БОЕВЫХ ВОЗМОЖНОСТЕЙ

С. Р. ГАЛСТЯН, генерал-лейтенант, заместитель Начальника Генерального штаба ВС РА

РЕЗЮМЕ

Надежность защиты воздушного пространства государства зависит от эффективности противовоздушной обороны и военной авиации.

Повышение боевых возможностей войск ПВО связано: с ростом эффективности огневой и разведывательной составляющих, системы управления, применения зенитно-ракетных, зенитных артиллерийских средств и истребительной авиации; модернизацией существующих радиолокационных средств; разработкой и внедрением автономных автоматизированных РЛС и многопозиционных радиолокационных систем нового поколения, многозвеньевых средств автоматизации единого информационного пространства войск ПВО.

Развитие потенциала военной авиации предполагает наличие соответствующей современным требованиям истребительной авиации, боевых и транспортно-боевых вертолетов, а также радиотехнических, радиолокационных и оптических средств разведки (размещенных как на беспилотных, так и на пилотируемых летательных аппаратах) и обеспечение непрерывности их совершенствования.

THE PERSPECTIVES OF DEVELOPING AIR DEFENSE AND AVIATION IN THE CONTEXT OF IMPROVING THE COMBAT CAPABILITIES

S. R. GALSTYAN, Lieutenant General, Deputy Chief of the Main Staff, RA Armed Forces

SUMMARY

The reliability of protecting the state airspace depends on the efficiency of the air defense and military aviation.

The increase of combat capabilities of the air defense forces relates to: the rise of efficiency of fire and reconnaissance components, the control system, the use of anti-aircraft and rocket, anti-aircraft artillery assets and fighters; the modernization of the existing radar means; the development and introduction of autonomous automated radar stations and multiposition radar systems of new generation, multi-level means of the automatization of an integrated information space of the air defense forces.

The development of the potential of military aviation implies the availability of fighters, combat and transport helicopters satisfying the modern requirements, as well as radio, radar and optical reconnaissance facilities (deployed on both unmanned and manned aerial vehicles) and ensuring their continuous improvement.

ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԴՐԱՆՑ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ա. Գ. ՄԱՐԴՈՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ԶՈՒ-ի հրթիռային զորքերի և հրետանու պետ – վարչության պետ,
Ա. Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ, փոխգնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի հրետանու ֆակուլտետի հրետանու մարտավարության և մարտական կիրառման ամբիոնի հրետանային հետախուզության և տեղաերկրաբաշխական ապահովման ցիկլի ավագ դասախոս

Վերջին ժամանակներում աշխարհի տարբեր վայրերում, մասնավորապես՝ Ուկրաինայում, տեղի ունեցող մարտական գործողությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից համազորային մարտում կարևոր տեղ ու դեր ունեն հրթիռային և հրետանային միավորումները (զորամասերը, ստորաբաժանումները): Հրթիռային զորքերի և հրետանու մարտական կարողությունների մեծացումը անընդհատ գործընթաց է, որը գնահատվում է քանակական և որակական չափորոշիչներով: Զորատեսակի մարտական կարողություններին ներկայացվող հիմնական պահանջն այն է, որ հրթիռային և հրետանային միավորումները (զորամասերը, ստորաբաժանումները) ունակ լինեն կատարելու առաջադրված խնդիրները հատկացված ժամանակահատվածում, կոնկրետ մարտական իրադրության պայմաններում, ցանկացած ֆիզիկաաշխարհագրական գործոնների ազդեցության պայմաններում: Հրթիռային զորքերի և հրետանու մարտական կարողությունները թվային մեծությամբ արտահայտելով՝ լիարժեք պատկերացում ենք կազմում զորատեսակի հնարավորությունների հեռանկարային զարգացման վերաբերյալ. զարգացումը պետք է ուղղված լինի հրթիռային և հրետանային միավորումների (զորամասերի, ստորաբաժանումների) համալրմանը մեծ հեռահարությամբ, բարձր ճշգրտությամբ, ավտոմատացված եղանակով կառավարվող (ուղղորդվող), տարաշարժման մեծ հնարավորություններով օժտված համակարգերով, ինքնագնաց համալիրներով, տարբեր նախանշանակման ու մարտավարատեխնիկական բնութագրերով հրանոթներով, ականանետներով ու հակատանկային միջոցներով, հեռահար ականադաշտերի ստեղծման միջոցներով, գերճշգրիտ և ինքնուղղորդվող մարտագլխիկներով արկերով:

Միայն վերը նշված գործոնների խելամիտ հաշվառումը և արդյունավետ օգտագործումը կարող են երաշխավորել մարտի հաղթական ելքը: Սակայն հրետանու համար առաջնահերթ է դրա մարտական կարողությունների օգտագործման հնարավորինս մեծ արդյունավետության ապահովումը: Հրետանու մարտական կարողությունների իրացման աստիճանը կախված է այն բանից, թե որքանով է նրա խմբավորումը համապատասխանում օպերացիայի (մարտի) մտահղացմանը, ինչպես են կազմակերպված կառավարումը, կրակի պլանավորումը և տարաշարժումը, որքանով են լուծված զինամթերքով և այլ նյութական միջոցներով հրթիռային և հրետանային ստորաբաժանումների ապահովման և մարտական գործողությունների ընթացքում մատակարարման հարցերը, ինչպիսիք են այն տեղանքի բնակլիմայական ու աշխարհագրական պայմաններով, որտեղ լուծվում են կրակային խոցման խնդիրները:

Այսինքն՝ ինչպես է կազմակերպված հրթիռային և հրետանային կազմավորումների մարտական կիրառումը:

Օպերացիայում (մարտում) հրթիռային զորքերի և հրետանու մարտական կիրառման արդյունավետությունը հետևյալ բաղադրիչների հանրագումար է.

1. հակառակորդի կրակային խոցման կազմակերպման արդյունավետություն,
2. հրթիռային զորքերի և հրետանու սպառազինության և մարտական տեխնիկայի արդյունավետություն,
3. հրթիռային և հրետանային միավորումների, զորամասերի և ստորաբաժանումների մարտական գործողությունների կազմակերպման արդյունավետություն,
4. հրթիռային զորքերի և հրետանու մարտական գործողությունների ապահովման կազմակերպման արդյունավետություն,
5. հրթիռային հարվածների և հրետանու կրակի ղեկավարման արդյունավետություն:

Հակառակորդի հրետանային կրակային խոցման ամենանպատակահարմար և արդյունավետ պլան կարող է համարվել այն տարբերակը, որի արդյունքը հատկացված զինամթերքով և ունեցած կրակային միջոցներով հակառակորդի խմբավորմանը հասցված առավելագույն վնասն է: Այդպիսի պլանին համապատասխանող ռեսուրսների բաշխումը (ռեսուրսների նպատակահարմար բաշխումը)* կարող է կատարվել տարբեր մեթոդներով, սակայն այդ խնդիրը լուծելիս պետք է հաշվի առնել, որ յուրային հրետանու խմբավորումը, որպես կանոն, բաղկացած է լինում տարբեր հրետանային համակարգերով զինված ստորաբաժանումներից, իսկ տարբեր հրետանային համակարգերի զինամթերքը տարբեր է, և որ խոցման օբյեկտները նույնպես միատարր չեն: Այս ամենը բարդացնում է խնդրի լուծումը՝ անգամ հաշվողական տեխնիկայի կիրառման դեպքում:

Տվյալ խնդիրը լուծելու համար Ռուսաստանի Դաշնության, ինչպես նաև ՆԱՏՕ-ի զինված ուժերում գործողության մեջ դրվեցին տարբեր հրահանգագրեր,

* Ռեսուրսները նպատակահարմար կերպով բաշխել նշանակում է որոշել, թե ինչ կրակային միջոցով, որքան զինամթերքով, ինչ հերթականությամբ պետք է խոցել թիրախները, որպեսզի հակառակորդին հասցվի առավելագույն վնաս: Սա հրթիռային զորքերի և հրետանու մարտական կիրառման հետ կապված հիմնական խնդիրն է:

մեթոդիկաներ և ուղեցույց փաստաթղթեր: ՀՀ ԶՈՒ-ում հրթիռային հարվածների և հրետանային կրակի պլանավորման համար գործածության մեջ են դրվել միասնական մեթոդիկա և միասնական տերմիններ՝ «օբյեկտի խոցման արդյունավետություն», «խմբավորման խոցման արդյունավետություն», «կրակային խոցման խնդիրների ընդհանուր ծավալ», «հաշվարկային կրակային միջոց», «հաշվարկային զինամթերք», «հրթիռային զորքերի և հրետանու կրակային հնարավորություններ», «հրետանային համակարգի կրակի միջին տեմպ», «զինամթերքի ծախսի նորմայի մասնաբաժին», «հրետանու բեռնվածության գործակից» և «կրակային խոցման կարգ»: Այս տերմինների սահմանումների և համապատասխան թվային ցուցիչների հաշվարկումների մեթոդների միասնականացման շնորհիվ պարզեցվել է հրթիռային հարվածների և հրետանու կրակի պլանավորման գործը:

Հակառակորդի խմբավորումներին առկա ուժերով և միջոցներով առավելագույն վնաս հասցնելու խնդիրը մաթեմատիկական մեթոդներով լուծելու համար Յու. Վ. Չուդակովն առաջարկել է կիրառել Լագրանժի անորոշ բազմապատիկների մեթոդը[1]: Խնդիրը ձևակերպվում է հետևյալ կերպ. գտնել կրակի պլանավորման այնպիսի տարբերակ, ըստ որի՝ միատարր ռեսուրսի[*] բաշխման դեպքում նպատակային ֆունկցիան[2] կունենա առավելագույն արժեք:

Լագրանժի ֆունկցիայի կիրառմամբ կարելի է գտնել հակառակորդի խմբավորման կազմում հայտնաբերված օբյեկտներն ըստ յուրային կրակային միջոցների բաշխելու այնպիսի տարբերակ, որը հնարավորություն տա տվյալ առկա հաշվարկային կրակային միջոցներով և քանակությամբ հաշվարկային զինամթերքով հակառակորդի խմբավորմանը հասցնելու առավելագույն չափով վնաս:

Մարտի մաթեմատիկական մոդելում, որում հնարավոր է հաշվի առնել ցանկացած մարտական իրադրություն և տեղանքի պայմաններ, որպես ելակետային տվյալ ընդունում ենք նպատակային ֆունկցիայի թվային արժեքը, և համակարգչային ծրագրի կիրառմամբ շատ կարճ ժամկետներում ստանում ենք հակառակորդին հրետանային կրակային խոցման համար անհրաժեշտ, գիտականորեն հիմնավորված տվյալներ: Այս և նմանատիպ համակարգչային ծրագրերի հենքի վրա ստեղծված մաթեմատիկական մոդելների շնորհիվ դյուրանում են հրթիռային զորքերի ու հրետանու մարտական կարողությունների պլանավորումը և դրանց առավելագույնս արդյունավետ կիրառումը:

---

[1] Տես «Оценка эффективности огневого поражения ударами ракет и огнем артиллерии». Под ред. А. А. Бобрикова. СПб., 2006:

[*] Ինչպես վերը նշել ենք, գործնականում հարկ է լինում բաշխել ոչ թե միատարր, այլ բազմատարր ռեսուրսը: Քանի որ բազմատարր ռեսուրսի նպատակահարմար բաշխման խնդիրը չափազանց բարդ է, Չուդակովն առաջարկել է հաշվարկումներում հրետանու իրական (տարասեռ) խմբավորումը փոխարինել (դրա համար անհրաժեշտ հաշվարկումների մեթոդիկան մշակված է) նույն ծավալի կրակային խնդիրներ լուծելու ունակ, այսինքն՝ մարտական կարողությունների նույն արժեքն ունեցող, երևակայական համասեռ խմբավորումով: Լագրանժի անորոշ բազմապատիկների մեթոդը կիրառելի է համասեռ խմբավորման համար, որի ռեսուրսը միատարր է:

[2] Տես *И. Н. Бронштейн, К. А. Семендяев.* Справочник по математике для инженеров и учащихся втузов. Изд. 13. М., 1986:

Վերջին տարիներին Իրաքում, ՈՒկրաինայում և Սիրիայում տեղի ունեցած մարտական գործողությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ կրակային խոցման արդյունավետության մեծացման առավել արդիական և նախընտրելի ուղղություններն են՝ համազորային զորամիավորումների (միավորումների, ստորաբաժանումների) համակողմանի ապահովումը՝ դրա բոլոր տեսակների ինտեգրմամբ, նրանց համագործակցության մակարդակի բարձրացումն ու կառավարման, կապի, հետախուզության ու խոցման միասնական համակարգերի կիրառումը:

Հրթիռային զորքերի և հրետանու սպառազինության հեռանկարային համալրումը պետք է նպատակաուղղված լինի այնպիսի հետախուզական միջոցների և գերճշգրիտ զինատեսակների արտադրությանն ու ձեռքբերմանը, որոնք ունակ լինեն ժամանակին ապահովելու անխափան և հուսալի տեղեկությունների փոխանցում հրետանու կրակային դիրքեր: Նման համակարգերի և միջոցների ներդրման շնորհիվ կձևավորվի միասնական *հետախուզատեղեկատվական կրակային համակարգ*, որը կրակային խոցման համար պատասխանատու բոլոր հրամանատարներին (պետերին) հնարավորություն կտա հակառակորդի հայտնաբերված օբյեկտների (նշանակետերի) վրա կրակ բացելու շատ կարճ ժամկետներում: Հետևաբար, հետախուզակրակային համակարգի արդյունավետ գործունեության համար զորամիավորմանն անհրաժեշտ է ունենալ *միասնական տեղեկութային դաշտ,* որը լինի *ցանցակենտրոն պատերազմի* ենթահամակարգերից մեկը: Այդ դաշտով պետք է անցնեն բազմաթիվ *տեղեկութային հոսքեր*, որոնց համադրմամբ, ժամանակի իրական մասշտաբներում, ներկա ռեժիմում պարզվում են կոնկրետ օբյեկտի լիարժեք բնութագիրը և չափերը: Նման դաշտ կարող է ստեղծվել միևնույն ժամանակ մի քանի իրարից անկախ հետախուզական աղբյուրներից ստացվող տվյալների համադրմամբ, ինչի շնորհիվ էլ կձևավորվի հետախուզության միասնական համակարգ:

ՀՀ ԶՈՒ-ի սպառազինության զարգացման, սպառազինության մեջ գերճշգրիտ հեռահար հրթիռների և զինամթերքի առկայության, հրթիռային և հրետանային զորքերում կապի և հետախուզական միջոցներով միասնական տեղեկատվական համակարգի ներդրման հեռանկարի հաշվառմամբ ապագայում հակառակորդին անմիջական կրակային խոցման պլանավորման ժամանակ առաջնահերթությունը պետք է տրվի *համակարգված կրակային ներգործությանը*:

Այսպիսով՝ ՀՀ ԶՈՒ-ի հրթիռային զորքերի և հրետանու մարտական կարողությունների մեծացման հիմնական միջոցներն են՝ հրթիռային հարվածների և հրետանային կրակի արդյունավետ պլանավորումը, խոցման միջոցների կատարելագործումն ու միասնական տեղեկութային դաշտի ստեղծումը:

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ РАКЕТНЫХ ВОЙСК И АРТИЛЛЕРИИ В КОНТЕКСТЕ ПОВЫШЕНИЯ ИХ БОЕВЫХ ВОЗМОЖНОСТЕЙ

А. Г. МАРДОЯН, генерал-майор, Начальник ракетных войск и артиллерии – Начальник Управления ВС РА, А. А. КОСТАНЯН, подполковник, кандидат военных наук, старший преподаватель цикла артиллерийской разведки и топогеодезического обеспечения кафедры тактики и боевого применения артиллерии факультета артиллерии Военного института имени В. Саргсяна МО РА

РЕЗЮМЕ

Совершенствование боевых возможностей РВ и А напрямую зависит от эффективного использования огневых возможностей и маневренности формирований РВ и А.

Задача максимизации боевых возможностей и эффективности применения РВ и А, т. е. нанесения максимального ущерба противнику имеющимися силами и средствами, решается путем привлечения математического аппарата на основе метода неопределенных множителей Лагранжа. Кроме того, темпы развития вооружений и военной техники, наличие высокоточных боеприпасов, внедрение объединенной информационной системы требуют создания единой разведывательно-информационной огневой системы, обеспечивающей своевременное огневое поражение вскрытых объектов противника.

Таким образом, эффективное планирование огневого поражения противника, совершенствование средств поражения и наличие единого информационного поля являются одними из главных путей повышения боевых возможностей РВ и А.

THE PERSPECTIVES OF DEVELOPING ROCKET FORCES AND ARTILLERY IN THE CONTEXT OF INCREASING THEIR COMBAT CAPABILITIES

A. G. MARDOYAN, Major General, Chief of Rocket Forces and Artillery – Chief of the Department, RA Armed Forces, A. A. KOSTANYAN, Lieutenant Colonel, PhD in Military Sciences, Senior Lecturer, Cycle of Artillery Reconnaissance and Survey Support, Chair of Artillery Tactics and Combat Employment, Artillery Department, V. Sargsyan Military Institute, MOD, RA

SUMMARY

The improvement of the combat capabilities of the Rocket Forces (RF) and Artillery (A) directly depends on the effective use of fire capabilities and maneuverability of the RF and A formations.

The challenge of maximizing combat capabilities and the effectiveness of employing the RF and A, i. e. causing maximum damage to the enemy by the

available forces and means, is met through the involvement of mathematical apparatus based on the Lagrange multiplier method. In addition, the rate of the development of weapons and military equipment, the availability of precision-guided munitions, the introduction of a unified information system require the establishment of an integrated reconnaissance and information fire system ensuring timely fire destruction of the enemy's revealed objects.

Thus, the effective planning of the fire destruction of the enemy, the improvement of means of destruction and the availability of a single information field are one of the main ways of increasing the combat capabilities of the RF and A.

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տեր ՄՈՎՍԵՍ աբեղա ՍԱՐԳՍՅԱՆ, ՀՀ ԶՈՒ-ի հոգևոր փոխառաջնորդ

Պատերազմի և զինվորական ծառայության վերաբերյալ Եկեղեցու դիրքորոշման հարցը հաճախ է բարձրացվում տարբեր բանավեճերում, քայքայիչ կրոնական կազմակերպությունների ուսմունքներում, զինծառայողների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ հոգևորականների շփման ժամանակ և այլն: Այս խնդիրների ավելի ամբողջական լուսաբանման համար հարկ ենք համարում առաջին հերթին դիմել Սուրբ գրքի վիճահարույց հատվածներին և դրանց մեկնությանը:

Սուրբ գրքում և եկեղեցու Սուրբ հայրերի գրվածքներում կան սպառիչ պատասխաններ բանակի հոգևոր խնդիրների հետ կապված հիմնական հարցերին: Այդ պատասխանները կարող են ուղեցույց ծառայել սպաների, զինվորների, բանակի հոգևոր սպասավորների և այն բոլոր մարդկանց համար, որոնք այս կամ այն կերպ առնչվում են զինվորական ծառայության հետ:

Գիտակցել, թե զինվորական ծառայության մասին ինչ է ասում Աստվածաշունչը, հատկապես կարևոր է մեր ժամանակներում, երբ որոշ կրոնական խմբեր տարածում են այն միտքը, թե քրիստոնյային իբր արգելվում է մասնակցել պատերազմի, ծառայել բանակում և նույնիսկ զենք վերցնել: Միևնույն ժամանակ, փորձեր են արվում արդարացնելու նման պատկերացումները աստվածաշնչյան մեջբերումներով:

Ավետարանում կարդում ենք, որ երբ Հիսուսին ձերբակալեցին, աշակերտներից մեկը սրով հարվածեց և կտրեց քահանայապետի ծառայի ականջը, իսկ Հիսուսն ասաց նրան. *«Քո սուրը եւ դիր իր տեղը, որովհետեւ, ովքեր սուր են վերցնում, սրով կ՛ընկնեն»* (Մատթ. 26:52)*:

Այս մեջբերումը ոմանց հանգեցնում է այն մտքին, որ քրիստոնյաներին չի կարելի ծառայել բանակում և մասնակցել պատերազմի, թեև պատերազմի մասին այստեղ խոսք չկա, և Փրկչի ասածը չի վերաբերում ո՛չ պատերազմին, ո՛չ էլ զինվորականին, այլ քաղաքացիական մարդուն, ինչպիսին էր Պետրոս Առաքյալը: Սակայն *«ով սուր է վերցնում»* արտահայտությունը որոշ իմաստով կարելի է վե-

* Հոդվածում Աստվածաշնչից բոլոր մեջբերումներն արված են ըստ հետևյալ հրատարակության՝ «Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանների», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ Հայաստանի աստուածաշնչային ընկերութիւն: Ե., 1994 (http://www.armenianchurchlibrary.com/files/easternarmenianbible/):

րագրել բոլոր զինվորներին: Բայց արդյոք այդպե՞ս էին հասկանում այս խոսքը սուրբ հայրերը:

Ըստ սուրբ Հովհան Ոսկեբերանի՝ Տերը երկու պատճառով էր ուզում հանգրստացնել աշակերտներին: Առաջին. սպառնում էր պատժել նրանց, ովքեր հանիրավի հարձակում են գործում և, երկրորդ՝ Նա կամավոր էր համբերում այդ ամենին[1]: Հետևաբար, այդ խոսքերը վերաբերում են ոչ թե նրանց, ովքեր ստիպված են պաշտպանվել, այլ նրանց, ովքեր սկսում են արյունահեղություն:

Եթե նույնիսկ այս արտահայտությունը հասկանանք բառացի, ապա դարձյալ կսխալվենք, քանզի գիտենք, որ զենք վերցնողներից ոչ բոլորն են սպանվել զենքով[2]: Հետևաբար, կարևոր է իմանալ, թե ինչ սրից է մեռնում հարձակում նախաձեռնողը, ինչպես բացատրում է Երանելի Հերոնիմոս Ստրիդոնացին. «*այն հրե սրից, որը վերաբերում է դրախտին* (տես Ծննդ. 3:24), *և հոգևոր սրից, որը նկարագրված է որպես Աստծո զրահ* (տես Եփես. 6:11-17)»[3]:

Թեև սուրբ հայրերը իրենց մեկնաբանություններում արյունահեղություն սկսելը ընդունելի չեն համարում, ինչը միանգամայն բնական է, բայց և այնպես, նրանցից ոչ ոք այս խոսքերը չի հասկանում որպես ընդհանրապես արգելք քրիստոնյաների զինվորական ծառայության համար: Այսպիսի մեկնաբանություն ունի միայն Տերտուղիանոսը, որը բացահայտորեն դեմ էր, որ քրիստոնյաները ծառայեն բանակում[4], բայց նա ոչ միայն սուրբ չէր, այլև հերետիկոս էր, և այդ կարծիքը բնորոշ չէր վաղ եկեղեցուն:

Իսկ բոլոր նրանք, ովքեր (բողոքականություն և դրանից առաջացած շարժումներ) չեն ճանաչում սուրբ հայրերի հեղինակությունը և Մատթեոսի Ավետարանի *«սուր վերցնողը սրով կմեռնի»* արտահայտությունը հասկանում են բառացիորեն, ապա թող բառացիորեն հասկանան նաև Փրկչի հետևյալ խոսքերը. *«Մի՛ կարծէք, թէ եկայ խաղաղութիւն հասուցանելու երկրի վրայ. չեկայ հասուցանելու խաղաղութիւն, այլ՝ սուր»* (Մատթ. 10:34) և, հատկապես՝ Ավետարանի հետևյալ հատվածը. *«Իսկ այժմ՝ ով որ քսակ ունի, թող վերցնի այն, նոյնպէս եւ՝ մախաղ. իսկ ով որ չունի, թող վաճառի իր վերարկուն եւ իր համար սուր գնի»* (Ղուկ. 22:36): Իսկ եթե նրանք հրաժարվում են այս խոսքերը բառացի հասկանալուց ու գերադասում են մեկնաբանել հոգևոր իմաստով, ապա տրամաբանական է նաև Պետրոս Առաքյալին ուղղված խոսքը, որը նույնպես պետք է հասկանալ հոգևոր իմաստով:

Երբեմն փորձ է արվում արդարացնելու խաղաղապաշտական (պացիֆիստական) ուսմունքները՝ վկայակոչելով *«մի՛ սպանիր»* (Ելք 20:13) պատվիրանը:

---

[1] Տես *Иоанн Златоуст.* Толкование на святого Матфея Евангелиста, т. 7. СПб., 1901, с. 838, беседа 84.1:

[2] Տես *Протоиерей Александр Григорьев*. Священное писание о войне и воинском служении, 06.05.2008 (http://www.pravoslavie.ru/jurnal/1324.htm):

[3] *Иероним Стридонский, блаженный.* Толкование на Евангелие от Матфея (http://www.magister.msk.ru/library/bible/comment/ieronim/ierons02.htm):

[4] Տես *Իոհան Ավագերեց Մեյենդորֆ*, Ներածություն հայրախոսական աստվածաբանության: Էջմիածին, 2013, էջ 89:

Սակայն, *«մի՛ սպանիր»* պատվիրանը վկայակոչելով, չի կարելի համարել, որ պատերազմը երբեք և ոչ մի դեպքում թույլատրելի չէ, քանի որ նման պնդումը հակասում է Սուրբ գրքին: Աստված տվեց Մովսեսին ոչ միայն *«մի՛ սպանիր»* պատվիրանը, այլև ցուցում, թե ինչպես պետք է պատերազմի, որ կարողանա հաղթել թշնամիներին[5]: Սուրբ գրքում տեսնում ենք, որ հաճախ Աստված Ինքն է հրամայել իսրայելացիներին այլ ժողովուրդների դեմ պատերազմ սկսել (տես Ա Թագ. 15:3, Յեսու 4:13), և Աստված էլ մահապատիժ է սահմանել շատ հանցագործությունների համար (տես Ելք 21:12, 21:15; Ղեւտ. 20:11 և այլն):

Հին ժամանակներում Աստծո ընտրյալ ժողովուրդը հաճախակի պատերազմներ էր մղում հարևան ժողովուրդների դեմ: Ըստ Մովսեսի օրենքի՝ ամեն իսրայելացի, բացառությամբ ղևտացիներից, պետք է զենք կրեր (տես Թուեր 1:3, 2:33, 26:2): Աստվածաշունչը պարունակում է բազմաթիվ հատվածներ, որոնցում խոսվում է այն մասին, որ Ինքը՝ Տերը, օրհնել է զինվորական ծառայությունը, սովորեցրել է Մովսես մարգարեին, թե ինչ զինվորական միավորումներ պետք է ունենա Իսրայելի ժողովուրդը, ինչ կազմով, ում վերահսկողությամբ: Օրինակ՝ Հին Կտակարանում կան բազմաթիվ հանձնարարականներ այն մասին, որ անհրաժեշտ է սովորել պատերազմել (տես Դատ. 3:2), և թե ինչպես գնալ պատերազմ (տես Թուեր 10:9): Այս պատերազմները Սուրբ գրքում կոչվում են Տիրոջ պատերազմներ (տես Ա Թագ. 17:47, Բ Մնաց. 20:15): Հետևաբար, Աստված պատվիրեց Իր ժողովրդին. *«Ձեր միջից մարդկանց զինեցէ՛ք, որ պատերազմեն մադիանացիների դէմ Տիրոջ առաջ, որպէսզի լուծուի մադիանացիների դէմ Տիրոջ վրէժը»* (Թուեր 31:3), *«Քո Տէր Աստծու քեզ իբրեւ սեփականութիւն տուած երկրի քաղաքների բնակիչներից ոչ մէկին կենդանի չթողնէք, ամբողջապէս ոչնչացրէ՛ք նրանց՝ քեւրացիներին, ամորհացիներին, քանանացիներին, փերեզացիներին, խեւացիներին, յեբուսացիներին եւ գերգեսացիներին, ինչպէս պատուիրել է քո Տէր Աստուածը»* (Երկր. Օր. 20:16-17), *«Տէրը քեզ ճանապարհ դրեց՝ ասելով. «Գնա՛ եւ ինձ դէմ մեղանչած Ամաղէկի ժողովրդին կոտորի՛ր, պատերա՛զմ մղիր, մինչեւ որ բնաջնջես նրանց»»* (Ա Թագ. 15:18):

Հին Կտակարանի «Ժողովող» գրքում ասվում է, որ աշխարհում ամեն բան իր ժամանակն ունի՝ *«սիրելու ժամանակը եւ ատելու ժամանակը, պատերազմի ժամանակը եւ խաղաղութեան ժամանակը»* (Ժող. 3:8): Բայց, վերադառնալով Սուրբ հայրերի մեկնաբանություններին, տեսնում ենք, որ Սբ. Գրիգոր Նյուսացին մեկնաբանում է այս հատվածը՝ վկայակոչելով հոգևոր պատերազմը, որը յուրաքանչյուր հավատացյալ պետք է մղի կրքերի և մեղքերի դեմ[6]: Մինչդեռ Ինքը՝ Հիսուս Քրիստոսն ասել է, որ պատերազմները ուղեկցելու են մարդկությանը երկրային գոյության բոլոր ժամանակներում. *«Լսելու էք պատերազմների ձայներ եւ պատերազմների լուրեր. զգո՛յշ եղէք, չխռովուէք, որովհետեւ պէտք է, որ այդ ամէնը լինի, բայց դա դեռ վախճանը չէ»* (Մատթ. 24:6):

[5] Տես *А. Байдуков.* Христианское вероучение о войне и воинской службе. «Журнал Московской Патриархии», 1999, № 8 (http://www.voskres.ru/army/church/bajdukov.htm):

[6] Տես *Ս. Գրիգոր Նյուսացի*, Մեկնություն Ժողովողի: Էջմիածին, 2007, էջ 211:

Սուրբ Հովհան Ոսկեբերանը գրում է, թե Նա խոսում է այն պատերազմների մասին, որոնք տեղի են ունեցել Երուսաղեմում[7], այսինքն՝ նկատի ունի հռոմեական արշավանքները Հուդայի երկիր՝ առաջին դարում ապստամբած հրեաներին խաղաղեցնելու համար[8]: Մինչդեռ ըստ այլ մեկնիչների՝ Տիրոջ այս խոսքը վերաբերում է ընդհանրապես ամբողջ աշխարհում տեղի ունենալիք պատերազմներին[9]:

Սակայն պետք է հիշեցնել, որ Հին Կտակարանում կա խոստում ապագա պատերազմների հաղթահարման մասին. *«Այն օրը ուիւր կը կնքեմ նրանց հետ՝ անապատի գազաններով, երկնքի թռչուններով եւ երկրի սողուններով հանդերձ. եւ աղեղը, սուրն ու ճակատամարտը կը վերացնեմ երկրից եւ կը բնակեցնեմ քեզ յոյսով»* (Օսէէ 2:19):

Սուրբ գրքի շատ տեղերում հավատացյալների դեմ ծագող պատերազմների գլխավոր պատճառ են համարվում Աստծո առաջ նրանց ծանր մեղքերը և անհավատարմության դրսևորումները: Պատերազմը համարվում է հատուցում ժողովրդին բոլորի մեղքերի դիմաց: Դատավորաց գրքում նկարագրված է մարգարեուհի Դեբորայի երգը. *«...փաւիագեցին օտար, սնուրի ասպուածների. Այն ժամանակ դեռեւս անյայտ նոր գեղարդներով պատերազմեցին իշխանների քաղաքները...»* (Դատ. 5:8), և նույնն էլ ասում է Սուրբ Հոգին Հուդիթի միջոցով. *«Քանի դեռ նրանք իրենց Աստծու առջեւ չէին մեղանչել, նրանց հետ էր բարիքը, որովհետեւ Աստուած, որ ատում է անիրաւութիւնը, նրանց հետ էր։ Եւ երբ իրենք հեռացան Աստծու պատուիրած ճանապարհից, կոտորուեցին բազմաթիւ պատերազմների մէջ եւ գերուեցին օտար երկիր, որ իրենցը չէր։ Իրենց Աստծու տաճարը կործանուեց ու իրենց քաղաքները մատնուեցին իրենց թշնամիների ձեռքը»* (Յուդիթ 5:16-17):

Եսայի մարգարեի գրքում կարդում ենք. *«...չկամեցան ընթանալ նրա ճանապարհներով եւ չլսեցին նրա օրէնքները։ Նա նրանց վրայ թափեց իր զայրոյթն ու բարկութիւնը, պատերազմի դատապարտեց նրանց, բոլոր կողմերից կրակի մէջ առաւ նրանց, բայց նրանցից ոչ մէկը չգիտակցեց, խելքի չեկաւ»* (Ես. 42:24-25):

Թե՛ Սուրբ գրքում, թե՛ եկեղեցու Սուրբ հայրերի ու պատմիչների գրվածքներում բազմաթիվ են վկայությունները, որ եթե ժողովուրդը հավատարիմ է Աստծուն, և նրա դեմ դուրս են եկել թշնամիները, ապա այդ դեպքում Աստված միշտ օգնում է հաղթանակ տանել, նույնիսկ եթե թշնամին քանակապես առավելություն ունի[10]: Այս դեպքում պատերազմը դառնում է Աստծո ուժի արտահայտման միջոց և Աստծո նկատմամբ իրական հավատքի փառաբանություն թշնամիների ու այլադավանների առաջ:

Այս միտքը վառ կերպով արտահայտվել է Դավթի և Գողիաթի կռվի ժամա-

[7] Տես *Իոհան Զլատոուստ,* Նշ. աշխ., էջ 753, զրույց 75.1:

[8] Տես *Մաղաքիա Արք. Օրմանյան*, Համապատում, Գ հրատարակություն: Էջմիածին, 1997:

[9] Տես, օրինակ, *Հովհաննէս Ծորոնորեցի*, Մեկնութիւն Աւետարանին որ ըստ Մատթէի: Էջմիածին, 2008, էջ 566:

[10] Տես *Պարգեւ եպս. Մարտիրոսեան*, Երկնային օգնություն քրիստոնեայ զինուորին: Ե., 1995, էջ 4:

նակ. երբ այլազգին անիծում է Իսրայելի ապագա թագավորին իր չաստվածների անունով, Դավիթը պատասխանում է. *«Դու ինձ վրայ ես յարձակւում սրով, գեղարդով եւ վահանով, իսկ ես քեզ վրայ եմ յարձակւում Իսրայէլի զօրքի զօրութիւնների Տիրոջ անունով, Իսրայէլի, որին դու այսօր նախատեցիր։ Տէրը քեզ այսօր իմ ձեռքը կը մատնի, ես կը սպանեմ քեզ, քո գլուխը կը կտրեմ, քո լէշն ու այլազգիների բանակի դիակները այսօր երկնքի թռչուններին ու երկրի գազաններին կը տամ։ Ամբողջ երկիրը կ՚իմանայ, թէ Աստուած գոյութիւն ունի Իսրայէլի մէջ, այս ամբողջ բազմութիւնը կ՚իմանայ, թէ Տէրը սրով ու գեղարդով չէ, որ փրկում է, քանզի սա Տիրոջ պատերազմն է, եւ Տէրը ձեզ մեր ձեռքը պիտի մատնի»* (Ա Թագ. 17:45-47): Այդպես էլ եղավ, և Դավիթ թագավորը դրա համար օրհներգում էր Աստծուն՝ ասելով. *«Դու ինձ պատերազմելու զօրութիւն տուիր, դէմս ելնողներին ոտքերիս տակ գցեցիր»* (Սաղմ. 17:40):

Հրաշալի օրինակ է նաև Ղևտացիների գրքում նկարագրված՝ Աստծո խոստումը. *«Եթէ ըստ իմ հրամանի ընթանաք, իմ պատուիրանները պահպանէք ու կատարէք դրանք, ապա .... Ձեր երկրին խաղաղութիւն կը պարգեւեմ, եւ ձեր երկրում պատերազմ չի լինի։ .... Դուք հալածական կ՚անէք ձեր թշնամիներին, եւ նրանք սպանուած կ՚ընկնեն ձեր առաջ։ Ձեր հինգ հոգին հալածական կ՚անի հարիւր հոգու, իսկ ձեր հարիւրը՝ բիւրաւորների, ձեր թշնամիները սրի հարուածներից կ՚ընկնեն ձեր առաջ»* (Ղեւտ. 26:3-8):

Իսկ Զաքարիա մարգարեն արդար պատերազմում աստվածապաշտ ռազմիկների մասին ասում է. *«Նրանք պիտի լինեն այնպիսի պատերազմողներ, որոնք պատերազմում, ճակատամարտի մէջ, ոտնակոխ պիտի անեն թշնամիներին այնպէս, ինչպէս տրորում են ճանապարհի կաւը, որովհետեւ Տէրը նրանց հետ է ...»* (Զաք. 10:5):

Հաղթանակի գործում Աստծո օգնության կարևորությունն ու նրան ապավինելու անհրաժեշտությունը Սուրբ գրքի մեջ մատուցվում են որպես հավատացյալ ռազմիկի համար միակ ճշմարտությունը, *«... որովհետեւ յաղթանակը ձեռք է բերւում ոչ թէ շատ զօրքով, այլ այն զօրութեամբ, որ երկնքից է գալիս»* (Ա Մակ. 3:19):

Իսկ Հոբի գրքի հետևյալ հատվածը ցույց է տալիս, որ պատերազմական գործողության վերաբերյալ ամբողջ զորքի համար ասվածը վերաբերում է նաև յուրաքանչյուր զինվորի: Աստված պատերազմի ժամանակ պահպանում է Իրեն հավատարիմներին. *«Սովի ժամանակ քեզ մահից է փրկելու, պատերազմի ժամանակ կապանքներից է ազատելու քեզ»* (Յոբ 5:20):

Աստվածաշնչում չկա ոչ մի խոսք այն մասին, թե Աստված արգելում է քրիստոնյաներին մասնակցել պատերազմի և նույնիսկ ծառայել բանակում: Փոխարենը որոշ դրվագներում գովեստով է խոսվում զինվորական սխրագործությունների մասին:

Օրինակ՝ Նոր Կտակարանում խոսվում է հարյուրապետի մասին, որը խնդրում էր Աստծուն՝ բուժել իր ծառային, Փրկչի կողմից նա արժանացավ ամենամեծ գովաբանությանը. *«Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ Իսրայէլի մէջ անգամ այսչափ հաւատ չգտայ»* (Ղուկ. 7:9): Սուրբ գրքում բերվում է այլ օրինակ ևս. *«Կեսարիայում Կոռնելիոս անունով մի մարդ կար, մի հարիւրապետ «Իտալա-*

կան» կոչուող գնդից. նա իր ամբողջ ընտանիքով բարեպաշտ եւ աստուածավախ լինելով՝ շատ ողորմութիւններ էր անում ժողովրդի մէջ եւ միշտ Աստծուն աղօթում էր։ Կէսօրից յետոյ ժամը երեքի մօտ տեսիլքի մէջ նա յայտնապէս տեսաւ Աստծու հրեշտակին, որ մտաւ իր մօտ ու իրեն ասաց՝ Կոռնելիո՛ս» (Գործ. 10:1-3):

Հարյուրապետներից ոչ մեկին ո՛չ Աստված, ո՛չ առաքյալները չասացին որևէ բառ ի քննադատություն նրանց զինծառայությանը և չպատգամեցին թողնել այն: Ճիշտ այդպես էլ, երբ զինվորականները եկան սուրբ Հովհաննես Մկրտչի մոտ և հարցրին. *«Իսկ մե՛նք ինչ անենք»*, ի պատասխան լսեցին ոչ թե դասալքության հրաման, այլ կոչ՝ ծառայության ժամանակ ձեռնպահ մնալու մեղքից. *«Ոչ ոքի մի՛ նեղէք, ոչ ոքի մի՛ զրպարտէք, ֆեր ռոճիկը թող ֆեզ բաւարար լինի»* (Ղուկ. 3:12): Այս առիթով սուրբ Ներսես Շնորհալին զինվորների դասերին ուղղած իր խոսքում մասնավորապես նշում է. *«Եթե ֆեր տերերը ֆեզ որեւէ գործի վերակացու կարգեն կամ որևէ բան տնօրինելու ուղարկեն, արդարութեամբ եւ իրաւունքո՛վ վարուէք հպատակների հետ, անխղճորեն եւ անիրաւաբար որեւէ մէկին մի՛ նեղէք, անկարեկից հոգով մի՛ զրպարտէ՛ք որեւէ մէկին՝ դահիճների օրէնքով հանդես գալով նրանց առաջ, եւ ֆեզ հրամայուածից աւելի մի՛ վերցրէք՝ ըստ սուրբ Մկրտչի խրատի, այլ գոհացէ՛ք ֆեր թոշակով»*[11]: Այլ խոսքով՝ Հովհաննես Մկրտիչը նրանց պատվիրեց շարունակել զենքով ծառայությունը, սակայն՝ պարկեշտորեն, ապրելով աշխատավարձի սահմաններում, առանց թալանի:

Վերջապես, Պողոս առաքյալը, խոսելով հավատքից, թվարկում է Հին կտակարանի հավատացյալներին և գովում նրանց զինվորական սխրագործությունների համար. *«Եւ արդ, դեռ ի՞նչ ասեմ, քանի որ ժամանակը բաւական չէր լինի պատմելու Գեդէոնի, Բարակի, Սամսոնի, Յեփթայէի, Դաւթի եւ Սամուէլի ու միւս մարգարէների մասին, որոնք հաւատո՛վ պարտութեան մատնեցին թագաւորութիւններ, գործեցին արդարութիւն, հասան խոստմանը, ... կտրիճներ եղան պատերազմի մէջ, յաղթեցին օտար բանակների»* (Եբր. 11:32-34):

Սուրբ Եփրեմ Ասորին հանգամանորեն նկարագրում է այն բոլոր դեպքերը, որոնց մասին նշում է առաքյալը. *«Բայց որպեսզի առանֆին և մանրամասն կերպով չթվարկի Հին կտակարանի հավատացյալների՝ հավատքի բոլոր գործերը, նա հետո միայն համառոտ անդրադառնում է դրանց: Եվ էլ ի՞նչ շարունակեմ, ասում է նա, չէ՞ որ իմ ժամանակը չի հերիքի պատմել Գեդեոնի մասին, այսինքն՝ Գեդեոնի հավատքի մասին, որ երեք հարյուր մարդկանցով հարվածեց տասը հազար մադիամացիներին (Դատ. 7:1-ից), և Բարակի մասին, որ իր հավատքով հաղթեց Սիսարայի զորքին (Դատ. 4:4-ից), և Սամսոնի մասին, որ իր հավատքի շնորհիվ ավանակի ծնոտով հազար մարդ սպանեց (Դատ.15:15), և Հեփթայեի մասին, որ իր հավատքով ավերեց Ամոնացիների քսան քաղաք (Դատ.11:33), և Դավիթի մասին, որ իր հավատքի շնորհիվ հաղթեց Գողիաթին (Ա Թագ. 17:4), և Սամուելի մասին, որ իր հավատքով հաղթեց այլազգիներին* (Ա Թագ. 7:10), *ինչպես նաև այլ մարգարեների մասին»*[12]:

[11] *Ս. Ներսես Շնորհալի*, Թուղթ ընդհանրական: «Գանձասար» հանդես, 1991, էջ 115:

[12] Հմմտ. *Ефремь Сиринь.* Творения, т. 7, Послание к Евреям. Издание Свято Троицкой Сергиевой Лавры. Издательство «Отчий дом», 1995, с. 304:

Այս բացատրությունից երևում է, որ «առաքյալի աչքում զինվորական սխրագործությունները մեղավոր և Աստծուն ոչ վայել գործողություններ չեն, ընդհակառակը՝ հավատքի գործեր են, որոնց կատարման համար Աստված Ինքն էր ուժ տալիս մարդկանց, որոնք վստահում էին Իրեն և հաղթանակները կապում էին Իր անվան հետ»[13]:

Ինչպես տեսնում ենք, Նոր Կտակարանում ևս ոչ մի տեղ չկա զինվորական կոչմանն ուղղված կշտամբանք, ինչը, անկասկած, կլիներ, եթե զինվորական ծառայությունը հակասեր քրիստոնյայի բարոյական արժեքներին: Իսկ Պողոս առաքյալի հետևյալ հրահանգի՝ *«Բայց իւրաքանչիւր որ, ինչ կոչման մէջ որ էր, երբ կանչուեց, թող նրանում էլ մնայ»* (1 Կորն. 7:20), մեկնությունը ցույց է տալիս, որ ամեն ոք, եթե ընդունում է Քրիստոսի հավատքը, ոչ միայն իր կոչումը չպիտի փոխի, այլև պիտի զորանա դրանում: Իսկ կոչում ասելով՝ նկատի ունի կյանքի այն վիճակը կամ հանգամանքը, որում գտնվում է տվյալ անձը: Սուրբ գրքի բազմաթիվ օրինակներ և պատմությունը ապացուցում են, որ զինվորական ծառայությունը կյանքի մի այնպիսի վիճակ է, որտեղ առկա է Աստծու հովանավորությունը բոլոր իրեն հուսացող արդար մարտիկների վրա: Այդպիսի վիճակը օրինավոր է և հակառակ չէ քրիստոնեությանը, որովհետև Աստված հենց այդ վիճակից է կանչում մարդուն, «իսկ անարժան վիճակները, որ հակառակ են Աստծո կամքին, իրենց նախախնամող ու կանչող ունեն ոչ թե Աստծուն, այլ մարդկային չարությանը կամ ունայնությանը»[14]:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ այն պնդումները, թե Աստվածաշունչը մերժում է զինվորական ծառայությունն ընդհանրապես և հավատացյալներին արգելում է ծառայել, անհիմն են:

---

[13] *Ա. Բայդուկով,* Նշ. աշխ.:

[14] *Գաբրիել վրդ. Աւետիքեան,* Մեկնութիւն չորեքտասան թղթոց երանելոյն Պօղոսի առաքելոյ, հ. 1: Վենետիկ, 1806, էջ 755:

ДУХОВНАЯ БЕЗОПАСНОСТЬ

СВЯЩЕННОЕ ПИСАНИЕ О ВОЙНЕ И ВОЕННОЙ СЛУЖБЕ

Иеромонах МОВСЕС САРГСЯН, заместитель Духовного предводителя ВС РА

РЕЗЮМЕ

Утверждения о том, что христианину запрещается брать в руки оружие и защищать родину, часто пытаются обосновать цитатами из Библии. В частности, ссылаются на слова Иисуса: «Поднявший меч, от меча и погибнет». Однако эти слова, согласно толкованию Иоанна Златоуста, относятся не к тем, кто вынужден защищаться, а к тем, кто начинает кровопролитие. Ссылаются и на заповедь «Не убий», но, в то же время, Бог дал наставления Моисею, как воевать, чтобы победить врагов.

В Библии неоднократно подчеркивается, что главная причина войн против Божьего народа и его поражений – это его грехи и неверность Богу. И наоборот, если верующие соблюдают каноны Божьи, то Он дарует им победу.

Так, Апостол Павел в Послании к Евреям говорит: «Недостанет мне времени, чтобы повествовать о Гедеоне, о Вараке, о Самсоне и Иеффае, о Давиде, Самуиле и (других) пророках, которые верою побеждали царства, … были крепки на войне, прогоняли полки чужих».

Таким образом, утверждения о том, что Библия якобы отвергает военную службу и вообще войну, беспочвенны и являются отговорками, не имеющими ничего общего с Библейскими откровениями.

SPIRITUAL SECURITY

THE HOLY WRIT ABOUT WAR AND MILITARY SERVICE

Celibate Priest MOVSES SARGSYAN, Deputy Ecclesiastical Leader, RA Armed Forces

SUMMARY

Attempts to prove the statements that it is forbidden for a Christian to take arms and defend their Motherland, are often made by means of excerpts from the Bible. The words by Jesus that “for all who draw the sword will die by the sword” are particularly cited. Although, according to the interpretation by John Chrysostom, those words refer not to those who have to defend themselves, but to those who initiate the slaughter. They also refer to the Commandment “Thou shalt do no murder”, but at the same time God gave Moses precepts how to make war in order to conquer the enemy.

The idea that the wars against God’s chosen people and their defeats are due to their sins and disloyalty to God, is many times underlined in the Bible. And, on the contrary, God grants victory to those who observe the Law of God.

Thus, Paul the Apostle in his Epistle to the Hebrews says “For time would fail me to tell of Gedeon, Barac, Samson, Jephthe, of David and Samuel and the prophets, who by faith conquered kingdoms, ... became valiant in battle, put to flight the armies of foreigners”.

Thus, the statements as if the Bible denies the military service and war in general are baseless and are of pretence which has nothing to do with the Bible Revelations.

ՀՀ–ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍՈՎ. 1991–1994 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Գ. Մ. ԱՐՇԱԿՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի հայրենադարձության և հեղազուտությունների վարչության պետ

ԽՍՀՄ փլուզումը և Հարավային Կովկասում ինքնիշխան պետությունների ստեղծումը առաջացրին Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր տարածաշրջանային բաղադրիչի մշակման ու իրականացման անհրաժեշտություն: Անկարան նոր հնարավորություն էր ստացել «վերադառնալու» Հարավային Կովկաս և Կենտրոնական Ասիա[1]: Նա առաջինը ճանաչեց Հարավային Կովկասի երկրների անկախությունը և ձեռնամուխ եղավ Ադրբեջանի ու Վրաստանի հետ բարեկամական հարաբերությունների հաստատմանը: Ունենալով Ադրբեջանի հետ լեզվական, պատմամշակութային և քաղաքական սերտ առնչություններ՝ Թուրքիան նախապատվությունը տվեց Ադրբեջանին:

1991 թ. դեկտեմբերի 16-ի որոշումով Թուրքիայի կառավարությունը ճանաչեց ի թիվս նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների նաև ՀՀ անկախությունը: 1991 թ. դեկտեմբերի 24-ին Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելն ուղերձով դիմեց ՀՀ Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին՝ ՀՀ-ին կոչ անելով Թուրքիայի և մյուս հարևանների հետ հարաբերություններում հավատարիմ մնալ միջազգային իրավունքի հիմնական և, հատկապես, տարածքային ամբողջականության ու սահմանների անձեռնմխելիության սկզբունքներին[2]: Թուրքիան թեև ճանաչեց ՀՀ անկախությունը, այնուամենայնիվ, չշտապեց ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Վկայակոչելով ՀՀ Անկախության հռչակագիրը՝ նա իր այդ քայլը պատճառաբանեց Հայաստանի հողային պահանջներով[3]:

Դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար հետագայում Թուրքիան Հայաստանին ներկայացրեց մի քանի նախապայման. այն է՝ չհիշատակել 1915 թ. Հայոց ցեղասպանությունը, ճնշում գործադրել Լեռնային Ղա-

[1] Տես *M. G. Winrow.* Turkey's Relations With the Transcaucasus and the Central Asian Republics. «Perceptions», Journal of International Affairs, March-May, 1996:

[2] Տես Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 326, ց. 9, գ. 192, թ. 1–2:

[3] Ավելի հանգամանորեն տես *Ա. Անանյան*, Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում: «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր»: Ե., 2004, էջ 6:

բաբաղի վրա՝ պայքարը դադարեցնելու նպատակով, ճանաչել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը[4]: Հայաստանի ղեկավարությունը մերժեց միջազգային պրակտիկային անհարիր այս նախապայմանները[5]:

Ա. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԼՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Արդեն 1992 թ. փետրվարին ԼՂ հիմնահարցը ՀՀ-ի հետ Թուրքիայի հարաբերություններում դարձավ կարևոր քաղաքական գործոն: Առաջին անգամ դա իր դրսևորումն ստացավ Խոջալուի դեպքերից հետո: 1992 թ. փետրվարին Արցախի պաշտպանական ուժերը ճնշեցին Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների կարևոր ռազմական հենակետերից մեկը՝ Խոջալուն, ինչը և առիթ դարձավ Թուրքիայի համար՝ իսկույն հրաժարվելու Ալաթոնի ծրագրից[6]:

ՀՀ-ի հետ Թուրքիայի մերձեցման միտումները շուտով վերաճեցին հակահայկական տրամադրությունների: Հայկական ուժերի կողմից Խոջալուի ազատագրման կապակցությամբ մարտի 4-ին ելույթ ունենալով Իզմիրում՝ Թուրքիայի Նախագահ Թ. Օզալը կառավարությունից պահանջեց «վճռական միջոցների դիմել հայերի ոճրագործությունների դեմ»: Այնուհետև նա սպառնաց թուրքական ռազմական ուժերով կանգնեցնել հայերի առաջխաղացումը[7]: Խոջալուի ռազմական հենակետի կորուստը լայն արձագանք ստացավ Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջաններում:

Թուրքիայի ղեկավարությունը, օգտվելով Խոջալուի իրադարձությունների կապակցությամբ երկրում առաջացած դժգոհություններից, սկսեց Հայաստանի նկատմամբ վարել ճնշում գործադրելու քաղաքականություն: Դրա օրինակն էր

---

[4] Տես *C. Migdalovitz.* Armenia-Azerbaijan conflict. «CRS Issue Brief». Congressional Research Service. The Library of Congress. Updated August 17, 1995, P. 11; *A. Görgülü.* Turkey-Armenia Relations: A Vicious Circle. Foreign Policy Analysis Series - 8. TESEV Publications, P. 8 (http://edoc.bibliothek.uni-halle.de/servlets/MCRFileNodeServlet/HALCoRe_derivate_00002710/Turkey-Armenia%20Relations.pdf;jsessionid=m4sk5a7ps60h?hosts=):

[5] Տես *Ն. Հովհաննիսյան*, Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը: «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 16: Ե., 1996, էջ 15:

[6] Տես *Հ. Չաքրյան*, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում: Ե., 1998, էջ 21: Համաձայն Ալաթոնի ծրագրի՝ միջինասիական հանրապետությունների (ՈՒզբեկստան, Ղրղզստան, Տաջիկստան, Ղազախստան և Թուրքմենստան) հումքը, այդ թվում՝ բնական գազն ու նավթը, Հայաստանի տարածքով պետք է փոխադրվեր Տրապիզոն, իսկ այնտեղից պետք է կազմակերպվեր դրա դուրսբերումն արևմտյան շուկաներ: Տրապիզոնի նավահանգիստը Հայաստանի համար դառնում էր ազատ առևտրի հատուկ գոտի, որի շնորհիվ նա ոչ միայն ճեղքում էր շրջափակումը, այլև Միջին Ասիա–Արևմուտք առևտրատնտեսական կապերում վերածվում էր միջազգային տարանցիկ կետի: Ծրագրով նախատեսվում էր նաև բացել Մարգարա–Ալիջան սահմանային կետը և ձեռնամուխ լինել Էրզրում–Տրապիզոն երկաթգծի կառուցմանը, որպեսզի հնարավոր լիներ ապահովել Գյումրիի երկաթուղային հաղորդակցությունը Տրապիզոնի նավահանգստի հետ (տես նույն տեղում, էջ 14–16):

[7] Տես «Hürriyet», 05.03.1992:

հենց այդ օրերին հայ-թուրքական սահմանի մոտ՝ Կարս–Սարիղամիշ–Իգդիր երկաթգծի երկայնքով, թուրքական երրորդ կորպուսի «Ձմեռ-92» զորավարժությունների անցկացումը, ինչը ՀՀ-ում առաջացրեց անհանգստություն: Թուրքական «Միլլիյեթ» թերթն այդ կապակցությամբ հարցազրույց վարեց ՀՀ Նախագահի օգնական Լևոն Զուրաբյանի հետ: Վերջինս նշեց, որ Թուրքիան զորավարժությունների մասին, հակառակ բոլոր միջազգային իրավական նորմերի, չի տեղեկացրել ՀՀ Կառավարությանը, նույնիսկ ԱՊՀ զինվորական հրամանատարությունը տեղեկացվել է միայն դրանց սկսվելուց հետո[8]:

Հատկանշական է, որ այն ժամանակ, երբ Թուրքիան Հայաստանին մեղադրում էր Խոջալուում «ոճրագործություն» կատարելու մեջ, հենց ադրբեջանական աղբյուրներով ապացուցվում է, որ Խոջալուի դեպքերը, որոնք խաղաղ բնակչության շրջանում զոհերի պատճառ դարձան, Ադրբեջանում իշխանության համար պայքարի և քաղաքական բանսարկությունների հետևանք են[*]:

Խոջալուից հետո ազատագրվեց Շուշին, ապա նաև Լաչինի միջանցքը: Շուշիի ազատագրման և Լաչինի միջանցքի բացման հետևանքով հայ-թուրքական հարաբերություններում լարվածությունն աճեց, ինչի դրսևորումներն էին Թուրքիայի ղեկավարների կոշտ հայտարարություններն ու զգուշացումները Հայաստանին:

Բ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ «ԳՈՐԾՈՆԻ» ՇԱՀԱՐԿՈՒՄԸ

1992 թ. մայիսին լուրեր տարածվեցին, թե իբր հայկական ուժերը գրոհել են Նախիջևանի Սադարակ քաղաքի շրջակայքի բարձունքների վրա[9]: Ի պատասխան՝ Անկարայում սկսեցին ակտիվորեն քննարկել թուրքական ռազմական ներխուժման հնարավորությունը, որի իրավական հիմք Թուրքիան համարում էր Կարսի 1921 թ. պայմանագիրը: Այդ կապակցությամբ Թուրքիայի ցամաքային ուժերի հրամանատար ՖիսոունՕղլուն հայտարարեց, որ «բոլոր անհրաժեշտ պատրաստություններն արված են, և բանակն սպասում է Անկարայի հրամանին, որպեսզի հարձակվի»[10]:

Իր հերթին, Թուրքիայի ռազմական ուժերի գլխավոր շտաբի պետ գեներալ Դողան Գյուրեշը հայտարարեց, որ պատրաստ է Ղարաբաղյան հակամարտութ-

[8] Տես «Milliyet», 21.02.1992:

[*] Ճշմարտությունը բացահայտել ձգտող ադրբեջանցիներից շատերը գնդակահարվել են, բանտարկվել, ծեծվել, հալածվել, մահացել չպարզված հանգամանքներում: Նրանց թվում են Ադրբեջանի նախկին նախագահ Ա. Մութալիբովի անձնական օպերատոր Չինգիզ Մուստաֆաևը, դաշտային հրամանատար Ալ Յակուբը, անկախ լրագրողներ Էյնուլա Ֆատուլաևը և Էլմար Հուսեյնովը, իրավապաշտպան Արիֆ Յունուսովը, ԱՊՀ նախկին Գերագույն խորհրդի նախագահ Թամեռլան Կարաևը և ուրիշներ (տես, օրինակ, *В. А. Пономарев*. Трагические события, которые можно было предотвратить. «ՀԲ», 2012, հմ. 3):

[9] Տես *H. Witt.* War's Ebb and Flow a Cycle of Revenge. «Chicago Tribune», 27.05.1992, P. 1:

[10] Տես *W. Hale.* Turkey, the Black Sea and Transcaucasia. «Transcaucasian Boundaries». New York, St. Martin's Press, 1996, P. 64:

յան գոտի ուղարկել այնքան զինվոր, որքան կխնդրի Ադրբեջանի կառավարությունը[11]:

Թուրքիայի այս ռազմատենչ հայտարարությունները լուրջ մտահոգություն առաջացրին Ռուսաստանի ղեկավար շրջաններում, որոնք հասկանում էին, որ Թուրքիան ձգտում է օգտագործելու նպաստավոր առիթը՝ Հարավկովկասյան տարածաշրջանի հակամարտություններում իր դերը մեծացնելու համար:

ՈՒստի Ռուսաստանի պատասխանն իրեն երկար սպասել չտվեց: ԱՊՀ Հավաքական Զինված ուժերի գլխավոր հրամանատար մարշալ Եվգենի Շապոշնիկովը հայտարարեց, որ «Թուրքիայի ներխուժումը (Հայաստան - *Գ.Ա.*) կարող է հանգեցնել երրորդ համաշխարհային պատերազմի»[12]: Այս նախազգուշացումը լուրջ արձագանք ստացավ Թուրքիայում: Թուրքիան անհանգստացավ ռուս-թուրքական բախման հեռանկարից, ուստի և ձեռնպահ մնաց իրավիճակի հետագա լարումից:

Թուրքիայի վրա լուրջ ազդեցություն գործեց նաև ԱՄՆ-ի ճնշումը, մասնավորապես՝ վերջինիս հայտարարությունը, թե այդ դեպքում ՆԱՏՕ-ի պայմանագրի 5-րդ հոդվածը չի գործի, քանի որ նախահարձակը Թուրքիան է լինելու[13]:

Գ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

Թեև Ռուսաստանի կողմից հստակ սպառնալից ակնարկներ էին արվում Թուրքիային, վերջինս շարունակում էր լայնածավալ օգնություն ցուցաբերել Ադրբեջանին: Մասնավորապես, 1991–1992 թթ. ԼՂ-ում Ադրբեջանի ծավալած ռազմական գործողություններին աջակցելու նպատակով Թուրքիան երկու գաղտնի գործողություն իրականացրեց:

Նախ՝ 1991 թ. կեսերին Թուրքիայից օդային ճանապարհով՝ Նախիջևանի վրայով, Ադրբեջան փոխադրվեցին 5000 ավտոմատ, նռնականետներ և ռազմական հանդերձանք[14]: Իսկ 1992 թ. մարտ–ապրիլ ամիսներին Ադրբեջանի Գաբալա քաղաքի մոտակայքում գտնվող ՆԳՆ զորակայանում թուրք զինվորականները պատրաստեցին 450 ադրբեջանցի կամավորների, որոնց Ադրբեջանում անվանեցին «Համալսարանական գումարտակ», քանի որ կամավորները հավաքագրվել էին Բաքվի համալսարանի ուսանողներից: 1992 թ. մայիսին այս գումարտակն ուղարկվեց Շուշին պաշտպանելու, սակայն հաջողություն չունեցավ[15]: 1992 թ.

[11] Տես «Turkish Daily News», 27.05.1992:

[12] Տես *A. Zaman.* Azerbaijan Looks to Ankara. «The Middle East», 11.07.1992, N 213, P. 8; *E. G. Fuller.* Turkey faces East: New Orientations Toward the Middle East and the Old Soviet Union. Santa Monica, Rand Study, 1992, P. 50; *M. Aydın.* New Geopolitics of Central Asia and the Caucasus: Causes of Instability and Predicament, P. 17 (http://www.sam.gov.tr/sampapers.php); *Nazmi Çora.* Birleşik Türk Devletleri. Istanbul, 2004, s. 40:

[13] Տես *Yavuz Gökmen.* Özal Yaşasaydı. Ankara, Verso Yayıncılık, 1994, s. 227:

[14] Տես *R. Bronson, R. Bhatty.* NATO's Mixed Signals in the Caucasus and Central Asia. «Survival», Autumn 2000, Vol. 42, N 3, PP. 134–135:

[15] Տես նույն տեղում:

հուլիսի 5-ին թուրքական «Ջումհուրիյեթ» օրաթերթը գրեց, որ թուրքական 10 գեներալներ գտնվում են Ադրբեջանում և վարժեցնում են նրա ռազմական ուժերը[16]: Բացի այդ, ըստ ռուսական ռազմական հետախուզության տվյալների, 1992 թ. սեպտեմբերի դրությամբ ադրբեջանական բանակում կար 670 թուրք զինծառայող, այդ թվում՝ 550 զինվոր, 112 սպա և 8 գեներալ[17]:

Թուրք-ադրբեջանական հարաբերությունների ընդլայնման և ամրապնդման համար առանձնակի կարևոր գործոն էր Ա. Էլչիբեյի գլխավորած Ժողովրդական ճակատի իշխանության գալը: ՈՒստի պատահական չէ, որ տվյալ ժամանակաշրջանում Ադրբեջանի նորընտիր նախագահ Ա. Էլչիբեյի ռազմական խորհրդական նշանակվեց թուրք գեներալ Յ. Դեմիրբուլակը, որը շուտով դարձավ նաև Ադրբեջանի Անվտանգության խորհրդի անդամ[18]:

Սակայն Թուրքիան, հաշվի առնելով միջազգային իրավիճակը և իր հնարավորությունները, խուսափում էր Ղարաբաղյան հակամարտությանն անմիջականորեն միջամտելուց: ՈՒստի Թուրքիայի ղեկավար շրջանները ոչ պաշտոնական, անուղղակի օգնություն էին ցույց տալիս Ադրբեջանին «Ազգայնական շարժում» կուսակցության (ԱՇԿ) և նրա առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշի միջոցով: Դրա օրինակներից է նաև ԱՇԿ-ի և Ադրբեջանի նախագահ Ա. Էլչիբեյի միջև ձեռք բերված պայմանավորվածությունը, որի համաձայն՝ Բաքվի մերձակայքում կառուցվեց «Գորշ գայլերի» «Ռուզգար» ճամբարը, որտեղ, բացի զինավարժությունների անցկացումից, դասավանդվում էր նաև դիվերսիայի մարտավարություն[19]:

Շուտով, Ա. Էլչիբեյի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ճամբարում վարժվող ազգայնամոլներին զինելու նպատակով մի գիշերվա ընթացքում Թուրքիայից Ադրբեջան տեղափոխվեց երկու ինքնաթիռ զենք ու զինամթերք, որոնք Բաքվի օդանավակայանում հանձնվեցին Ա. Էլչիբեյի թիկնազորի հրամանատարին[20]:

«Գորշ գայլերը», որոնք Ա. Թյուրքեշի գլխավորած «Ազգայնական շարժում» կուսակցության մի մասն էին, «Ազերի եղբայրներին օգնելու» կարգախոսով զենքի կոչեցին թուրք ազգայնականներին: «Գերչեք» շաբաթաթերթի տվյալներով, մինչև 1992 թ. հունիսը Նախիջևանի և Ադրբեջանի տարածքում տեղակայված էր մոտ 3 հազար թուրք կամավորական[21]: Թուրք կամավորների մասին էր գրում նաև թուրքական «Հյուրիյեթ» թերթը՝ նշելով, որ հայերի դեմ կռվելու նպատակով Թուրքիայից Բաքու են ժամանել մի խումբ կամավորներ: Թերթը մեջբերում է թուրք կամավոր Քեմալ Չաքրի խոսքերը. «Մենք չկարողացանք համակերպվել այն մտքի հետ, որ մեր պապենական հողերն անցնում են հայերի ձեռքը:

[16] Տես *L. Chorbajian, P. Donabedian and C. Mutafian.* The Caucasian Knot: The History and Geopolitics of Nagorno-Karabagh. London, 1994, P. 34:

[17] Տես *Արսեն Ավագյան*, Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990–1994 թթ.: «ՀԲ», 2006, հմ. 3:

[18] Տես *Г. Демоян.* Турция и Карабахский конфликт. Е., 2006, с. 111:

[19] Տես *Արսեն Ավագյան*, Նշ. աշխ.:

[20] Տես նույն տեղում:

[21] Տես «Gerçek». Haftalık Haber Dergisi, 14.06.1992, N 1, S. 12:

Մենք չէինք կարող տանը նստել, երբ մեր ազերի եղբայրները զոհվում էին ռազմաճակատում»[22]:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ Թուրքիան բավական մեծ ռազմական աջակցություն էր ցուցաբերում Ադրբեջանին: Մինչև 1992 թ. վերջը Թուրքիայից Ադրբեջան են ժամանել ավելի քան 5-6 հազար թուրք զինվոր և սպա:

Դ. ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Թուրքիան ԼՂ հակամարտությունում Ադրբեջանին, բացի ռազմական ու ֆինանսական աջակցությունից, ցուցաբերել է նաև զգալի դիվանագիտական աջակցություն:

Թուրքիան 1991 թվականից ի վեր պատրաստակամություն է հայտնում որպես միջնորդ հանդես գալու ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման գործում: Սկզբնական շրջանում նա կարծես փորձում էր Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ չվարել ակնհայտորեն ադրբեջանամետ քաղաքականություն: Այսպես. երբ 1991 թ. նոյեմբերի 26-ին Ադրբեջանը վերացրեց ԼՂԻՄ-ի ինքնավարության կարգավիճակը[23], Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը դիմեց իր ադրբեջանցի գործընկերոջը՝ Հասան Հասանովին՝ ադրբեջանական կողմին կոչ անելով ձեռնպահ մնալ կտրուկ քայլերից, «չենթարկվել սադրանքների» և չբարդացնել իրավիճակը[24]: Սակայն Խոջալուի ազատագրումից հետո Թուրքիան հանդես եկավ կտրուկ հայտարարություններով և սկսեց ծավալել ակտիվ հակահայկական դիվանագիտական գործունեություն: 1992 թ. փետրվարին Վաշինգտոնում ԱՄՆ-ի Նախագահ Ջորջ Բուշի հետ հանդիպման ժամանակ Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը ամերիկյան կողմին կոչ արեց ձեռնպահ մնալ ԼՂ հարցում Հայաստանին աջակցելուց: Ավելի ուշ անդրադառնալով այդ հարցին՝ Ս. Դեմիրելը նշեց, որ Լեռնային Ղարաբաղի հարցում Հայաստանին աջակցելը հղի է տարածաշրջանային պատերազմով, որի ընդարձակման պարագայում Թուրքիան չի կարող չեզոքություն պահպանել[25]:

Թուրքիայի հակահայկական քայլերից էր նրա փորձը՝ 1992 թ. սկզբներին խոչընդոտելու Եվրոպայի Անվտանգության և համագործակցության խորհրդին (ԵԱՀԽ) Հայաստանի անդամակցությանը[26], երբ նա նույնիսկ սպառնաց արգելք (վետո) դնել ԵԱՀԽ-ին Հայաստանի անդամակցության որոշման վրա[27], քանի որ Հայաստանն իբր տարածքային պահանջներ ունի Թուրքիայից: Սակայն, ի վերջո, Թուրքիան ստիպված էր հրաժարվել իր նախնական դիրքորոշումից:

---

[22] Տես «Hürriyet», 26.07.1993:

[23] Տես *B. Akdeniz.* The Karabagh Conflict and Its Effects on Turkey's Role in the Caucasus. Naval Postgraduate School. Monterey, California, 2001, P. 34:

[24] Տես «Ազգ», 1991 թ. դեկտեմբերի 11:

[25] Տես *N. Hovhannisyan.* The Karabakh Problem. Factors, Criteria, Variants of Solution. Yerevan, 1999, P. 53:

[26] Տես «Ազգ», 1992 թ. ապրիլի 25:

[27] Տես *Հ. Դեմոյան*, Նշ. աշխ., էջ 71:

Թուրքիան ակտիվացրեց իր դիվանագիտական գործունեությունը միջազգային ասպարեզում հատկապես 1993 թ. ապրիլից, երբ հայկական ուժերը ազատագրեցին Քարվաճառը: Անկարան նախազգուշացրեց համաշխարհային հանրությանը, որ եթե Ադրբեջանի վրա հայերի հարձակումները չդադարեցվեն, Թուրքիան պատասխանատու չէ հնարավոր հետևանքների համար:

Անկարան նաև հանդես եկավ մի շարք դիվանագիտական նախաձեռնություններով, հատկապես՝ ՄԱԿ-ում և ԵԱՀԿ-ում: Այսպես. 1993 թ. ապրիլի 30-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց ԼՂ հակամարտությանն առնչվող իր առաջին՝ հմ. 822 բանաձևը, որով պահանջում էր անհապաղ դադարեցնել ռազմական գործողություններն ու բռնությունները, հաստատել հրադադար և տեղական հայկական ուժերը դուրս բերել Քարվաճառի շրջանից, ինչպես նաև կոչ էր անում անհապաղ վերսկսել ԵԱՀԽ Մինսկի խմբի ձեռնարկած խաղաղ գործընթացի շրջանակներում հակամարտության կարգավորման բանակցությունները[28]:

Բանաձևի ընդունումից հետո Թուրքիան ՄԱԿ-ի հինգ մշտական անդամներին հայտնեց իր մտահոգությունը՝ հայտարարելով, թե Հայաստանը չի կատարում ՄԱԿ-ի բանաձևից բխող պահանջները և նրա «նվաճողական» քաղաքականությունն անընդունելի է[29]: Իսկ 1993 թ. մայիսի 3-ին ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Թուրքիայի ներկայացուցիչների կողմից կազմված խաղաղարարական նախաձեռնության փաստաթուղթը ներկայացվեց հակամարտող կողմերին: Ըստ այս եռակողմ նախաձեռնության՝ հայկական ուժերը պետք է դուրս բերվեին Քարվաճառից, այնուհետև հաստատվելու էր զինադադար, որին հաջորդելու էր ԵԱՀԽ շրջանակներում հակամարտության կարգավորմանն ուղղված համապարփակ նախագծի մշակումը: Սակայն այս նախաձեռնությունը չարժանացավ հակամարտող կողմերի հավանությանը[30]:

Ֆիզուլիի, Ջաբրայիլի և Աղդամի մոտակա շրջանների վրա հայերի հարձակումներից հետո Թուրքիան հայկական զորքերի դուրսբերման հարցը 1993 թ. օգոստոսին մտցրեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի օրակարգ: Դրան նախորդել էին 1993 թ. հուլիսի 24-ին Ադրբեջանի և Թուրքիայի ներկայացուցիչների՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահին ուղղված նամակները, որոնցում պահանջվում էր այս հարցը քննարկելու համար գումարել ԱԽ նիստ:

Ռուսաստանի բացառիկ միջնորդության շնորհիվ 1994 թ. մայիսի 12-ին Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունները դադարեցվեցին և հաս-

[28] Տես «UN Security Council resolution 822 (1993)». Adopted by the Security Council at its 3205th meeting, on 30 April 1993 (http://karabakhfacts.com/wp-content/uploads/1993/04/N9324771.pdf):

[29] Տես *F. De Pauw.* Turkey's Policies in Transcaucasia. «Contested borders in the Caucasus». VUB University Press, 1996, PP. 118–119 (http://poli.vub.ac.be/publi/ContBorders/eng/ch0801.htm):

[30] Տես *C. Migdalovitz.* Armenia-Azerbaijan Conflict. «CRS Issue Brief». Updated December 4, 2015, P. 7:

տատվեց զինադադար[31]: Հատկանշական է, որ նույնիսկ 1994 թ. Բիշկեկյան զինադադարի համաձայնագրի ստորագրումից հետո Թուրքիան փորձում էր ակտիվ մասնակցություն ունենալ բանակցային գործընթացին, մասնավորապես ձգտելով թուրքական ստորաբաժանում ընդգրկելու ԼՂ-ում «տեղակայվելիք» միջազգային խաղաղապահ ուժերում, ինչի հիմնական նպատակն էր ապահովել իր ռազմական ներկայությունը Հարավկովկասյան տարածաշրջանում[32]: Սակայն Թուրքիայի բոլոր այդ ջանքերը հաջողություն չունեցան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի անկախության սկզբնական շրջանում նրա նկատմամբ վարած քաղաքականության մեջ թուրքական կողմը առանձնակի կարևորություն էր տալիս Արցախյան հիմնահարցի կարգավորման ու հայ-թուրքական փաստացի սահմանի ճանաչման հարցերին:

2. 1990-ական թվականների սկզբներին պաշտոնական Անկարան ձգտում էր որոշակի հարաբերություններ հաստատելու Հայաստանի հետ, մասնավորապես տնտեսական բնագավառում՝ հավանություն տալով Ալաթոնի ծրագրին:

3. Միևնույն ժամանակ, Թուրքիան փորձում էր հայ-թուրքական հարաբերությունները տնտեսական հարթությունից տեղափոխել քաղաքական՝ ջանալով ԼՂ հակամարտությունում միջնորդի դեր ստանձնել:

4. Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերություններում ԼՂ հիմնահարցը 1992 թ. փետրվարից դարձավ կարևոր քաղաքական գործոն: Այդ գործոնի ազդեցությամբ Թուրքիան Հայաստանի հանդեպ որդեգրեց թշնամական վերաբերմունք՝ առաջ քաշելով նախապայմաններ:

5. Ղարաբաղյան հակամարտության ընթացքում Թուրքիան Ադրբեջանին ցուցաբերեց մեծ քաղաքական, ռազմական, ֆինանսական և դիվանագիտական աջակցություն:

6. ԼՂ հիմնահարցում ձգտելով հնարավոր աջակցություն ցուցաբերելու Ադրբեջանին՝ Թուրքիան Հայաստանի հանդեպ իր քաղաքականության շրջանակներում կիրառեց ճնշման բոլոր հնարավոր միջոցները, բացի ուղղակի ռազմական միջամտությունից:

---

[31] Տես *E. Herzing.* The New Caucasus, Armenia, Azerbaijan and Georgia. London, 1999, P. 67:

[32] Տես *Հ. Դեմոյան*, Նշ. աշխ., էջ 128:

ИСТОРИЯ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

ОТНОШЕНИЯ МЕЖДУ АРМЕНИЕЙ И ТУРЦИЕЙ В КОНТЕКСТЕ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА. 1991–1994 ГГ.

Г. М. АРШАКЯН, кандидат исторических наук, Начальник Управления репатриации и исследований аппарата Министерства диаспоры РА

РЕЗЮМЕ

В начальный период независимости Армении Турция придавала особую важность решению Арцахской проблемы и признанию армяно-турецкой фактической границы. В начале 1990-ых гг. официальная Анкара стремилась установить определенные, в частности, экономические отношения с Арменией. В то же время она пыталась взять на себя роль посредника в Нагорно-Карабахском конфликте, который с февраля 1992 г. стал важным политическим фактором в отношениях Турции и Армении: Турция предъявила Армении предусловия и заняла враждебную к ней позицию. Во время вооруженной фазы Карабахского конфликта Турция оказала Азербайджану большую политическую, военную, финансовую и дипломатическую помощь, а в отношении Армении использовала все возможные формы давления, кроме прямого военного вмешательства.

HISTORY OF INTERNATIONAL RELATIONS

RELATIONS BETWEEN ARMENIA AND TURKEY IN THE CONTEXT OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT. 1991–1994

G. M. ARSHAKYAN, PhD in History, Head, Department of Repatriation and Investigations, Staff of the Ministry of Diaspora of the Republic of Armenia

SUMMARY

In the initial period of Armenia's independence Turkey attached a particular significance to the solution of Artsakh problem and the recognition of the Turkish-Armenian de facto border. In the early 1990s Ankara sought to establish certain, particularly, economic relations with Armenia. At the same time, she tried to assume a mediating role in the Nagorno-Karabakh conflict, which became an important political factor in the relations between Turkey and Armenia from February, 1992: Turkey put forward preconditions for Armenia and there to adopted a hostile stance towards her. During the armed phase of the Karabakh conflict Turkey rendered a great political, military, financial and diplomatic assistance to Azerbaijan, applying all possible forms of pressure towards Armenia, except for direct military intervention.

ԲԼՈԳ-ԿԱՅՔԵՐԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Ա. Մ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, մայոր, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի
ավագ սպա – մեթոդիստ

Վերջին տարիներին աշխարհում նորագույն էլեկտրոնային միջոցների օգտագործման շնորհիվ տեղի են ունենում այնպիսի համընդհանուր և տարածաշրջանային սոցիալական շարժումներ, որոնց բնորոշ է ինքնաբերականությունը, դրանք հաճախ չեն ունենում ընդգծված առաջավարներ, հաղորդվող տեղեկույթը տարածվում է վիրուսի նման: Նոր տիպի սոցիալական շարժումների առանձնահատկություններից է նաև այն, որ դրանք ծագում ու զարգանում են հենց վիրտուալ տարածության մեջ:

Զանգվածային հաղորդակցության վիրտուալ միջոցները դառնում են սոցիալական համախմբման նոր, առաջատար և գործուն մեխանիզմ, ինչը կապված է այն տեխնիկական նորարարությունների հետ, որոնք ազդել են հաղորդակցության որակական փոփոխությունների վրա: Սա, իր հերթին, հանգեցնում է տեղեկատվական հասարակության զարգացման, ինչպես նաև որակապես նոր տիպի քաղաքացիական հասարակության ձևավորման, հատկապես՝ երիտասարդության շրջանում, որն էլ հիմնականում օգտվում է նորագույն էլեկտրոնային հաղորդակցական միջոցներից[1]:

Հատկանշական է, որ սոցիալական համախմբման գործընթացը հատկապես լայն թափ է ստանում իշխանության լեգիտիմության կորստի, իշխանության հանդեպ անվստահության աճման համեմատ. հասարակության դժգոհությունն առաջացնող որևէ քաղաքական գործընթաց, կառավարության ձեռնարկած որևէ քայլ կամ որևէ որոշում համացանցում անմիջապես ստանում են համարժեք արձագանք՝ դառնալով մարդկանց միավորման կատալիզատոր: Կարճ ժամանակ անց տեղի են ունենում զգալի փոփոխություններ ինչպես պետության ներսում, այնպես էլ հասարակական գիտակցության և հոգեբանության մեջ: Սակայն համացանցի միջոցով որևէ հարցի շուրջ սոցիալական համախմբումը կարող է ունենալ ինչպես բարերար, այնպես էլ կործանարար ազդեցություն, և աշխարհի մի շարք երկրներ արդեն զգացել են դրա հետևանքները: Այսպիսով՝ այսօր դժվար է գերագնահատել համացանցի դերը հասարակության և պետության համախմբման (իսկ երբեմն՝ նաև պառակտման) գործում:

[1] Տես *Л. А. Бобова*. Механизмы социальной консолидации в сетевом обществе (http://www.vestnik.mgimo.ru/sites/default/files/pdf/bobova.pdf):

Շահերի բախման տիրույթում սոցիալական մեդիայի միջոցով համախմբումն սկսվում է սոցիալական ցանցերում համակիրների միջև շփումների մակարդակում և վերաճում փոքր ու մեծ առցանց խմբերի ձևավորման գործընթացի: Ընդ որում, այդ խմբերի թիվը արագորեն աճում է, և նրանց հնարավոր գործողությունները առցանց տիրույթից անմիջապես տեղափոխվում են իրական կյանք[2]:

Համացանցում պայմանավորվելը, համախմբվելը և դրանից հետո իրական կյանքում գործողություններ կատարելը լայն տարածում են ստացել նաև հայ հասարակության մեջ:

Ժամանակակից աշխարհում համացանցային տեխնոլոգիաների անընդհատ կատարելագործման և արագ ընդլայնվող հնարավորությունների շնորհիվ մեծանում է համացանցից (հատկապես՝ բջջային հեռախոսների միջոցով) օգտվողների թիվը[3]:

Վերջին տարիներին զարգացել է սոցիալական մեդիան[*], որն առանձնանում է նոր բովանդակությամբ, ինտերակտիվությամբ (օգտվողի հետ ակտիվ փոխազդեցությամբ), գովազդային թիրախային տեխնոլոգիաների կիրառմամբ, տեղեկույթի հասանելիությամբ, օպերատիվությամբ, տարածական սահմանափակումների վերացմամբ: Այսօր այն հաղորդակցության ճկուն և արագորեն փոփոխվող ոլորտներից է և պարունակում է բազմաթիվ համացանցային գործիքներ[4]:

Սոցիալական մեդիան ներառում է սոցիալական ցանցերը, բլոգոլորտը, միկրոբլոգային (կարճ խոսքի համար նախատեսված) և «խառնուրդ» («միքս») (տարբեր գործիքների հատկությունները համատեղող) հարթակները, առցանց համաժողովները (ֆորումներ), տեղեկույթի փոխանակման սոցիալական համակարգերը, լուսա- (ֆոտո-) և տեսա- (վիդեո-) հոստինգները (համացանցից օգտվողներին սկավառակային տարածքի տրամադրում՝ համացանցում տեղեկույթ տեղադրելու համար), ծանոթության կայքերը, սոցիալական էջանշումների համա-

[2] Տես *Marie Dollé.* Social Media in the Era of Consolidation, 28 May 2015 (http://www.socialmediatoday.com/social-networks/mariedolle/2015-05-28/social-media-era-consolidation-infographic):

[3] Հայաստանում, օրինակ, ինտերնետ կապի բաժանորդների թիվը շարունակում է աճել: Ըստ ինտերնետ կապի մատակարարների (ISP) տվյալների՝ 2013 թ. չորրորդ եռամսյակում ընդհանուր բաժանորդագրությունների թիվը հասնում է 465153-ի, իսկ հեռախոսի միջոցով օգտվողներինը՝ 1,55 միլիոնի (տես *Ս. Մարտիրոսյան*, Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտը 2014 թ. առաջին կիսամյակում, 04.09.2014 (http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12870&sphrase_id=44070)): Օրինակ՝ Երևանի 25-34 տարեկան բնակիչներից յուրաքանչյուր չորրորդը բջջային ինտերնետից օգտվում է օրական 1 ժամից ավելի (տես «Հեռահաղորդակցության ոլորտը Հայաստանում. բացահայտումներ, խնդիրներ, կանխատեսումներ», 11.04.2014 (http://www.tert.am/am/news/2014/ 04/11/ameria/1056678)):

[*] Սոցիալական մեդիա (անգլերեն՝ *«social media», «social networking services»*), զանգվածային հաղորդակցության տեսակ, որն իրականացվում է համացանցի միջոցով, զգալիորեն տարբերվում է ավանդական ԶԼՄ-ներից (տես, օրինակ, «Social media». «Oxford Dictionaries» (http://www.oxforddictionaries.com/definition/english/social-media?q=social+media&searchDictCode=all)):

[4] Տես «Ի՞նչ է սոցիալական մեդիան» (http://www.neomedia.am/publishing/):

կարգերը *(«social bookmarking services»)*, երկրասոցիալական ծառայությունները (օրինակ՝ օգտատիրոջ գտնվելու վայրի որոշումը), բջջային տիրույթը (բջջային սոցիալական մեդիա, բջջային համայնք). Սոցիալական մեդիայի համար որպես հարթակ են ծառայում նաև «Վիկին» (համացանցային ազատ հանրագիտարանը), էլեկտրոնային փոստը, սոցիալական ագրեգատորները (տարբեր աղբյուրների տեղեկույթը միաբերող ծառայություններ) և այլն: Սոցիալական մեդիայի, հատկապես՝ դրա կարևոր մաս կազմող սոցիալական ցանցերի (*«Facebook»*, *«Twitter»*) ամենամեծ առավելություններից է այն, որ համացանցից օգտվող մարդիկ ներգրավված են բովանդակության ստեղծման և տարածման գործում: Դրա շնորհիվ ձևավորվել է մեդիա բովանդակություն ստեղծողների հասարակություն: Սոցիալական մեդիա ոլորտի յուրաքանչյուր տիրույթ մշտապես առաջարկում է բազմաթիվ, բազմազան, գրավիչ հնարավորություններով նորանոր գործիքներ և, հիմնականում՝ անվճար հիմունքով:

Վերջին տարիներին տեղեկատվական-հեռահաղորդակցային ոլորտում կարևոր տեղ ունի սոցիալական մեդիա գործիքներից մեկը՝ բլոգ-կայքը: Այս համոզմանն ենք եկել ոչ միայն ուսումնասիրությունների շնորհիվ, այլև գործնականում՝ մեր փորձով*: Իր էությամբ լինելով օրագիր՝ բլոգը համացանցային միջավայր է, որում տեղադրված նյութը դառնում է մատչելի ամբողջ ինտերնետային հանրությանը: Բլոգի ընթերցողների համար կա մեկնաբանություններ, կարծիքներ տեղադրելու հնարավորություն, ինչի շնորհիվ հաճախ ծավալվում են մտքերի փոխանակում, բանավեճեր, քննարկումներ, որոնք արժանանում են հասարակության լայն շրջանների ուշադրությանը[5]: Բլոգներում հնարավոր է տեղադրել այլ կայքեր տանող հղումներ՝ ձևավորելով առցանց բլոգ համայնք (մասնավորապես՝ *«blogroll»* գործիքի օգտագործմամբ):

Բովանդակային, տեսակային բազմազանությամբ, ոլորտային մեծ ընդգրկմամբ, թեմատիկ դասակարգմամբ, ոճային առանձնահատկություններով, գործածության լայն ու բազմազան սպեկտրով աչքի ընկնող բլոգ գործիքը դրա հեղինակի (կամ հեղինակների խմբի) մտքերը, կարծիքները, նյութերը, փորձը արտահայտելու և դրանք հասարակությանը ներկայացնելու հնարավորություն է, ինքնարտահայտման ուրույն, անկախ, հիմնականում՝ անվճար հարթակ: Այս գործիքն այսօր օգտագործում են բազմաթիվ անհատներ ու պետական, հասարակական, քաղաքական և այլ կազմակերպություններ:

---

* Հեղինակը գործող բլոգեր է շուրջ 5 տարի: Բացի իր գրական բլոգ-կայքից (http://arlen shah.wordpress.com), նա ստեղծել և վարում է նաև մոտ մեկ տասնյակ այլ բլոգներ, այդ թվում՝ ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի «Ռազմավարագետ» պաշտոնական բլոգը (http://razmavaraget.wordpress.com), «Տարածաշրջանային անվտանգության դինամիկան Հարավային Կովկասում» միջազգային ֆորումի «Անվտանգ Կովկաս» բլոգը և այլն: Նրա բլոգն արժանացել է ավելի քան 100 մրցանակների, իսկ 2012 և 2013 թվականներին ճանաչվել է «Տարվա բլոգ»: Նա իր գրական-ստեղծագործական գործունեությունը ակտիվորեն լուսաբանում է նաև «*Facebook*» և «*Twitter*» սոցիալական կայքերում. – *Խմբ.*:

[5] Տես *Simon Gwyn Roberts*. Shades of Expression: Online Political Journalism in the Post-Colour Revolution Nations (http://www.bookdepository.com/Shades-Expression-Simon-Gwyn-Roberts/9781908258076):

Բլոգները կարող են ունենալ գրական, գեղարվեստական, քաղաքական, լրատվական, բնապահպանական, մարզական, ժամանցային կամ այլ ուղղվածություն: Բլոգներ են ստեղծում նաև ՁԼՄ-ները՝ փորձելով այդ կերպ իրենց վերաբերմունքն արտահայտել այս կամ այն իրադարձության նկատմամբ: Բլոգը երբեմն հանդես է գալիս որպես լրատվության այլընտրանքային միջոց:

Այսօր բլոգ վարելն ու ընթերցելն ընդունված են ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում: Բլոգերներն ակտիվորեն գործում են անգամ բռնատիրական պետություններում[6]: Շատ բլոգերների համար բլոգավարությունը (բլոգինգով զբաղվելը) ավելի շատ նախասիրություն և կոչում է, քան մասնագիտություն: Բլոգների զանգվածայնության աճը, մեր կարծիքով, պայմանավորված է այն հանգամանքով, որ բլոգում նաև հնարավոր է ապահովել անմիջական՝ կենդանի շփումը: Եթե լրատվամիջոցները պարտավոր են հետևել գրական լեզվի կանոններին, նախապատվություն տալ ոչ թե հույզերին ու կարծիքներին, այլ օբյեկտիվությանը, ինչը պաշտոնականություն է հաղորդում լրատվամիջոցին, ապա բլոգերներն իրենց բլոգ-օրագրում կարող են նյութերը մատուցել նաև խոսակցական ոճով, անկաշկանդ կերպով արտահայտել իրենց կարծիքը, տալ զգացմունքային գնահատականներ, արծարծել կենցաղային թեմաներ, ինչը ընթերցողների մեծ մասի համար, անկասկած, ավելի գրավիչ է: Եթե դրան ավելացնենք նաև բլոգում զանազան մեկնաբանություններ անելու հնարավորությունը, ապա ակնհայտ կդառնա, որ բլոգը, պահպանելով կենդանի շփման մի շարք առանձնահատկություններ, ունի այդ շփման համար տարածական ու ժամանակային արգելքը հաղթահարելու մեծ առավելություն[*]: Իսկ զանգվածայնություն վայելող ցանկացած տեղեկատվական միջոց կարևոր դեր ունի տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգում: Հետևաբար՝ նման դերակատարություն ունի նաև բլոգոլորտը: Դրանում կարելի է համոզվել 2008 թ. դեկտեմբերի 27-ի՝ Իսրայելի

[6] Տես *David Kline*. Blog!: How the Newest Media Revolution is Changing Politics, Business, and Culture. New York, 2005:

[*] Այդ զանգվածայնության վկայություն է նաև բլոգների աճող ազդեցությունն սպառողների վարքագծի վրա: «*Research Now*» տվյալների շտեմարանում 2014 թվականի վերջում կատարված մարկետինգային հետազոտությունների արդյունքներով՝ աշխարհում մարդկանց 84 տոկոսը գնել էր ապրանք՝ հիմնվելով բլոգներում դրանց նկարագրության վրա, չորսից մեկը ապրանք է գնում՝ հետևելով բլոգների բովանդակությանը, 25 տոկոսի (հիմնականում՝ 25 – 34 տարեկան) կարծիքով՝ բլոգը գնում կատարելու որոշման համար տեղեկույթի ամենակարևոր աղբյուրն է: Հարցման մասնակիցների երկու երրորդը պատասխանել է, որ շաբաթական մի քանի անգամ բլոգ է կարդում, և այն իրենց համար կոնկրետ ապրանք գնելու հստակ կողմնորոշիչ է, խորհրդատու: 30 %-ը բլոգ կարդում է, որպեսզի համոզվի, որ իր որոշումը ճիշտ է, 33 %-ի համար բլոգները տեղեկույթի հստակեցման ու զտման աղբյուր են, 43 %-ի համար բլոգը գնում կատարելու ներշնչանքի լավագույն աղբյուրն է, իսկ 46 %-ի համար՝ հետաքրքրող ապրանքի որոնման և ուսումնասիրման լավագույն հարթակը (տես «Blogging Power: The Growing Influence Of Blogs On Buying Behavior - #infographic», 29 November 2014 (http://www.digitalinformationworld.com/2014/11/the-role-of-bloggers-in-the-path-to-purchase-infographic.html); «Blogs Outrank Social Networks for Consumer Influence: New Research», 6 March 2013 (http://www.socialmediaexaminer.com/blogs-outrank-social-networks-for-consumer-influence-new-research/)):

Զինված ուժերի «Ձուլածո արճիճ» օպերացիային հրեա բլոգերների ցուցաբերած տեղեկատվական-քարոզչական գործուն աջակցության օրինակով[7]: Օպերացիան սկսվելուց երկու օր անց Իսրայելի կողմնակից բլոգերները առավել հաճախ այցելվող «*Livejournal.com*» բլոգային հարթակներից մեկում բացեցին «*gaza2009*» ընկերակցությունը, որին մի քանի օրվա ընթացքում միացան հազարից ավելի բլոգերներ: Նրանք տեղեկատվություն էին ապահովում Իսրայելի ձեռնարկած ռազմական օպերացիայի մասին, ստեղծում էին տվյալ թեմային վերաբերող նյութերի արխիվ, բանավիճում էին Իսրայելի հակառակորդների հետ, մերկացնում Իսրայելի հակառակորդների կողմից ԶԼՄ-ներում տարածվող կեղծիքները, աջակցում միմյանց:

Երկշաբաթյա ակտիվ գործունեությունից հետո իսրայելամետ բլոգերները հանդիպեցին Իսրայելի Պետության կառավարության ներկայացուցչի հետ, ճշտեցին մի շարք հարցերում Իսրայելի պաշտոնական դիրքորոշումը, որպեսզի այն հասցնեն ռուսալեզու ընթերցողներին: Գնահատելով տեղեկատվական պատերազմում բլոգերների ծանրակշիռ ներդրումը՝ Իսրայելի Պետությունը որոշեց օրինականացնել նրանց գործունեությունը և օտար լեզուների տիրապետող բոլոր բլոգերներին մամուլի միջոցով առաջարկեց դիմել կառավարությանը՝ զինվորագրվելու «բլոգերների բանակին», որը, ինչպես նշել էր Իսրայելի կառավարության անդամ Էլի Աֆլալոն, «տեղեկատվական ճակատում Իսրայելի նորագույն զենքն էր»:

Վերջին տարիներին աշխարհում տեղի ունեցած մի շարք քաղաքական զարգացումներում, այսպես կոչված «գունավոր հեղափոխություններում» (Վրաստան, ՈՒկրաինա, Ղրղզստան և այլն)[8], «Արաբական գարնան»[9] ընթացքում սոցիալական կայքերի հետ գործի դրվեցին նաև բլոգները, ակտիվորեն գործեցին առաջատար ու անվանի բլոգերները: Ընդ որում, հատկապես արաբական երկրներում իրար հաջորդող հեղափոխությունների ընթացքում աչքի ընկան ինչպես տղամարդ, այնպես էլ կին ընդդիմադիր ակտիվիստ բլոգերները[10]: Արաբա-

[7] Տես *Ս. Մարտիրոսյան*, Տեղեկատվական պատերազմում սոցիալական ցանցերի օգտագործումը Իսրայելի կողմից, 13.07.2009 (http://noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=2214):

[8] Տես *Lincoln A. Mitchell*. The Color Revolutions (http://www.foreignaffairs.com/articles/138648/lincoln-a-mitchell/the-color-revolutions):

[9] Տես *В. Карякин*. Геополитика третьей волны: трансформация мира в эпоху Постмодерна. «Кризис национальной государственности стран арабского мира». М., 2013, с. 320:

[10] Օրինակ՝ Թունիսում՝ Լինա Բեն Մհեննին (տես *Yasmine Ryan*. Tunisian blogger becomes Nobel Prize nominee. «Al Jazeera», 21 October 2011 (http://www.aljazeera.com/indepth/features/2011/10/2011106222117687872.html)), Ջեն Քրիմը (տես «Voices of the Arab Spring» (http://www.voicesofthearabspring.org/about.html)), Եգիպտոսում՝ Իսրա Աբդել Ֆաթահը (տես *Courtney C. Radsch*. Unveiling the Revolutionaries: Cyberactivism and the Role of Women in the Arab Uprisings. James A. Baker III Institute for Public Policy, 17 May 2012 (http://bakerinstitute.org/media/files/news/130a8d9a/ITP-pub-CyberactivismAndWomen-051712.pdf)), Դալիա Զլադան (տես *Mike Eckel*. Egypt's leading female voice for change warns that revolution is backsliding. «The Christian Science Monitor», 5 October 2012 (http://www.

կան աշխարհում առցանց ակտիվիստները հաջողությամբ ձևավորեցին նոր տեղեկատվական միջավայր՝ որպես հակակշիռ պետական մենաշնորհային մեդիա դաշտի՝ դրանով իսկ մի յուրահատուկ մարտահրավեր նետելով պետական քարոզչությանը[11]:

Բլոգների ակտիվությունը նկատելի է նաև ընտրությունների ժամանակ. հաճախ բլոգերը ներկայացնում է իր քաղաքական դիրքորոշումը և քաղաքական իրողությունների իր ուրույն գնահատականները[12]: Հատկապես քաղաքական գործընթացներում բլոգները հարստացնում են տեղեկույթի հոսքերը, իսկ բլոգերները թեմաներ են առաջարկում ԶԼՄ-ներին և դրանով իսկ պարարտ հող ստեղծում քննարկումների համար: Հեղափոխությունները ծագում են մարդկանց ուղեղներում, իսկ հետո կյանքի են կոչվում ու շարունակվում փողոցներում, և այս գործում յուրօրինակ «քսանյութ» են բլոգները[13]:

Բացի «*Facebook*»-ից և «*Twitter*»-ից, բլոգն այսօր այն ակտիվ և արդյունավետ գործիքն է[14], որի միջոցով հնարավոր է տարբեր միջոցառումների համար համախմբել համակիրներին: Այս գործիքը հաջողությամբ կիրառվում է նաև ֆլեշմոբների* կազմակերպման համար: Հաճախ առանձին բլոգներ հանդես են գալիս որպես ֆլեշմոբի նախաձեռնող կամ մտահղացման տարածող[15]:

Բլոգները օգտագործում են նաև ահաբեկիչները՝ ահաբեկչական գործողություններից առաջ և, հատկապես, հայտարարությունների տարածման համար:

Արևմտյան առաջատար պարբերականները («Ֆորբս» («*Forbes*»), «Գարդիեն» («*The Guardian*»)) պարբերաբար հրապարակում են աշխարհի ամենահայտնի, ամենահաճախ այցելվող բլոգների ցուցակներ ու վարկանիշային աղյուսակներ, ուշադրության կենտրոնում են պահում հեղինակություն վայելող բլոգերներին, փորձում գնահատել տարբեր գործընթացների վրա նրանց ունեցած ազդեցությունը[16]:

---

csmonitor.com/World/Global-News/2012/1005/Egypt-s-leading-female-voice-for-change-warns-that-revolution-is-backsliding)) և այլք:

[11] Տես *Yasmine Ryan.* Bloggers say Arab Spring has gone global. «Al Jazeera», 4 October 2011 (http://www.aljazeera.com/news/africa/2011/10/201110322155284271.html):

[12] Տես «Color Revolutions and Geopolitics», 20 September 2014 (http://colorrevolutions andgeopolitics.blogspot.com/):

[13] Տես «Блогер: работа или призвание?» (http://www.goethe.de/ins/ru/lp/kul/dur/dig/zus/ru8554434.htm):

[14] Տես «The Impact of Blogging and Online Influencers» (http://www.verticalresponse.com/blog/the-impact-of-blogging-and-online-influencers/):

* Ֆլեշմոբ (անգլ. «flash mob»՝ «ակնթարթային ամբոխ»)՝ նախօրոք ծրագրված զանգվածային ձեռնարկում, երբ մեծ կամ փոքր խումբ մարդիկ հայտնվում են հասարակական վայրում, կատարում նախապես համաձայնեցված ուշադրություն գրավող գործողություններ և ցրվում:

[15] Տես «30 blogs featuring flash mob ideas» (http://www.kenneymyers.com/blog/30-blogs-featuring-flash-mob-ideas/):

[16] Տես «The world's 50 most powerful blogs» (http://www.theguardian.com/technology/2008/mar/09/blogs); «The 10 Best Venture Capitalist Blogs For Entrepreneurs», 30.07.2013 (http://www.forbes.com/sites/jjcolao/2013/07/30/the-10-best-venture-capitalist-blogs-for-entrepreneurs/); «Рейтинг: самые популярные блогеры в мире», 25.12.2007 (http://bishelp.

Տեղեկատվական դաշտում բլոգների ազդեցիկությունն է պատճառը, որ ոչ ժողովրդավարական պետություններում քաղաքական ակտիվությամբ աչքի ընկնող բլոգերները երբեմն դառնում են հետապնդումների թիրախ: Օրինակ՝ հարևան Ադրբեջանը հայտնի է լրագրողների և բլոգերների նկատմամբ կիրառած բռնաճնշումներով[17]: Բաքուն փորձում է խոսքի ազատության սահմանափակման և հետապնդումների միջոցով վերահսկել տեղեկատվական ոլորտը: Որոշ պետություններ էլ փորձել են այդ խնդիրը լուծել՝ հիմնովին արգելափակելով համացանցը, կամ ստեղծելով ներքին սպառման համար դրա համարժեք տարբերակը: Սակայն հաճախ սոցիալական կայքերի, բլոգի արգելափակումը կամ բլոգերի ազատության սահմանափակումը տալիս են հակառակ արդյունքը. բլոգերն սկսում է ավելի ակտիվ գործունեություն վարել այլ վիրտուալ տիրույթներում (որպես կանոն՝ իր երկրի տարածքից դուրս)՝ ոչ միայն ստանալով պայքարի ելած համախոհների աջակցությունը, այլև արժանանալով հասարակության լայն շրջանների ուշադրությանն ու համակրանքին[18]:

Վերջին տարիներին Ադրբեջանն իր հակահայկական քարոզչության համար սկսել է ակտիվորեն օգտագործել սոցիալական ցանցերն ու բլոգոլորտը: Ընդսմին շարունակաբար աճում է հակահայկական ապատեղեկույթ տարածող հայալեզու ադրբեջանական կայքերի, անանուն կամ ծածկանունով բլոգների, սոցիալական ցանցերի «ֆեյք» (կեղծ անունով հանդես եկող) էջերի (*«fake account»*) թիվը: Այս համատեքստում, կարծում ենք, մեծ է հայ բլոգերների հակակշռող դերը:

---

ru/rich/uspeh-12518/reyting-samye-populyarnye-blogery-v-mire); «Топ 10 блогеров из США – 2014» (http://best-blogers-world.blogspot.com/2015/01/10-usa-2014.html); «Top 10 Most Inspirational Bloggers In The World» (http://www.lifehack.org/articles/communication/top-10-most-inspirational-bloggers-the-world.html):

[17] Տես *Ian Brown.* Azerbaijan is the wrong place to hold a forum on internet freedom (http://www.theguardian.com/commentisfree/2012/nov/13/azerbaijan-forum-internet-freedom-un), «Խոսքի և ինտերնետի ազատությունը հանգեցնում է ձերբակալությունների», 05.10.2011 (http://www.aysor.am/am/news/2011/10/05/azerbaijan1/342756), *Ս. Մարտիրոսյան,* Ադրբեջանական սոցիալական մեդիաները, 21.01.2013 (http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=6842):

[18] Տես «Blogging in Gaza a Casualty of Arab Spring» (http://www.al-monitor.com/pulse/originals/2013/09/blogs-twitter-facebook-palestine.html):

ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ

БЛОГИ КАК ИНСТРУМЕНТ СОЦИАЛЬНОГО СПЛОЧЕНИЯ

А. М. ШАХВЕРДЯН, майор, старший офицер – методист ИНСИ МО РА

РЕЗЮМЕ

В последние годы в Интернет-пространстве возросла роль блога как одного из средств социальной коммуникации. Блог может быть альтернативным средством информации и оказывать влияние на текущие события в мире, способствовать мобилизации населения в различных экономических, политических (благотворительные акции, «цветные революции» и т. д.) целях, т. е. выступает в качестве инструмента социального сплочения.

INFORMATION SECURITY

BLOGGING AS A TOOL OF SOCIAL COHESION

A. M. SHAHVERDYAN, Major, Senior Officer – Methodologist, INSS, MOD, RA

SUMMARY

In recent years the role of the blogs as one of the means of social communication in the Internet has increased. A blog can be an alternative means of information and exert influence on current events in the world, further the mobilization of the population for different economic, political (acts of charity, “color revolutions”, etc.) purposes, i. e. it acts as a tool of social cohesion.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

Հ. Յ. ՍԱՅԱԴՅԱՆ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հա. Յ. ՍԱՅԱԴՅԱՆ, աշխարհագրական գիտությունների թեկնածու,
Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում
ՀՀ դեսպանության ռազմական կցորդ

ԱՆՏԱՌՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երկրագնդի մակերեսը կազմում է 510 մլն կմ^2: Դրա մոտ 71 %-ը կամ 361 մլն կմ^2-ը՝ կազմում է օվկիանոսի մակերևույթը, իսկ մնացած 29 %-ը, կամ 149 մլն կմ^2-ը, ցամաքն է: Անտառային բնահամակարգերն զբաղեցնում են մեր մոլորակի ցամաքի 30 %-ը և կատարում են նրա «թոքերի» գործառույթ: Անտառը կենսոլորտի հավասարակշռության կարևոր գործոններից է, երկրագնդի թթվածնի աղբյուրներից մեկը, արեգակնային էներգիայի ու կենսազանգվածի կուտակիչը: Անտառը մաքրում է գետնամերձ մթնոլորտը, կանոնավորում ջերմաստիճանային ռեժիմը և մակերևութային ջրերի հոսքը, հողը պաշտպանում ողողամաշումից ու մարդկանց համար սննդի, բազմազան հումքի աղբյուր է:

1997 թ. Կոստանցայի և ուրիշների կատարած հայտնի ուսումնասիրության համաձայն՝ Երկրագնդի բոլոր բնահամակարգերը դասակարգվել են ըստ 16 խմբերի (բիոմների) և 17 բնահամակարգային ծառայությունների*, որոնց շարքում ուրույն տեղ ունի անտառը: Բոլոր բնահամակարգերի ծառայությունների

* «Բնահամակարգային ծառայություններ» նշանակում են այն օգուտները, որոնք մարդիկ ստանում են բնահամակարգից: Դրանք ներառում են մատակարարման ծառայություններ (սնունդ, ջուր, փայտանյութ և այլն) կարգավորող ծառայություններ, որոնք ազդում են կլիմայի, հեղեղումների, վարակների, թափոնների և ջրի որակի վրա, մշակութային ծառայություններ, որոնք տալիս են գեղագիտական և հոգևոր օգուտներ, և աջակցող ծառայություններ (հողի կազմավորում, ֆոտոսինթեզ և սննդանյութերի շրջանառություն) (տես, օրինակ, *J. Boyd, S. Banzhaf.* What Are Ecosystem Services? The Need for Standardized Environmental Accounting Units. Washington, 2006 (http://www.rff.org/Documents/RFF-DP-06-02.pdf)):

գումարային արժեքը գնահատվել է միջինը տարեկան 33 տրիլիոն ԱՄՆ-ի դոլար, իսկ անտառային բնահամակարգերինը՝ շուրջ 5 տրիլիոն ԱՄՆ-ի դոլար[1]: Անտառի մեկ հեկտարը, ըստ նույն աղբյուրի, ապահովում է 969 ԱՄՆ-ի դոլարին համարժեք ծառայություններ: Վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնահամակարգերի ծառայությունների այս արժեքները էականորեն թերագնահատված են[2]:

ԵՐԿՐԱԳՆԴԻ ԱՆՏԱՌԱԾԱԾԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Թեև անտառային բնահամակարգերի կարևորությունն ամբողջ աշխարհում ակնհայտ է, սակայն անտառահատումն ու անտառազրկումը հասնում են ահռելի չափերի: Երկրագնդի անտառածածկը միայն 1700 թվականից մինչև մեր օրերը կրճատվել է 19 %-ով: Նույն ժամանակամիջոցում մշակաբույսերի զբաղեցրած տարածություններն ավելացել են 4,5 անգամ. միայն 1950–1980 թթ. աճը կազմել է տարեկան 100000 կմ^2: Սկսած 20-րդ դարի 60-70-ական թվականներից յուրաքանչյուր րոպեում Երկիր մոլորակը կորցնում է շուրջ 30 հա անտառ, իսկ արևադարձային անտառների մակերեսը կրճատվում է տարեկան 1 % արագությամբ: Մարդկությունը իր կարիքների համար օգտագործում է անտառների փայտանյութի տարեկան աճի շուրջ 55 %-ը: 1992 թ. տվյալներով՝ Արևմտյան և Արևելյան Աֆրիկայում ոչնչացվել է անտառների 56 %-ը, իսկ առանձին շրջաններում՝ մինչև 70 %-ը: Հարավային Ամերիկայում (հիմնականում՝ Ամազոնի ավազանում) ոչնչացվել է առաջնային անտառատարածքի 37 %-ը, իսկ Հարավարևելյան Ասիայի երկրներում՝ 44 %-ը: 17-րդ դարում ռուսական դաշտավայրում անտառների մակերեսը կազմել է 5 մլն կմ^2, իսկ 1970 թ. այն կրճատվել ու հասել է 1,5 մլն կմ^2-ի: Ներկայումս Ռուսաստանի Դաշնությունում տարեկան հատվում է 2 մլն հա անտառ: 1985 թ. Չեռնոբիլի աղետի, Չելյաբինսկի մարզի ատոմակայանի վթարի և Սեմիպալատինսկում միջուկային փորձարկումների հետևանքով շուրջ 3,5 մլն հա անտառատարածք դարձել է ռադիոակտիվ աղտոտման պատճառով ոչ պիտանի[2]:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԱՆՏԱՌԱԾԱԾԿԸ

ՀՀ ներկայիս անտառազուրկ զգալի տարածությունները վաղ անցյալում ծածկված են եղել անտառներով: Այդ են վկայում հին պատմիչները և անտառների մնացորդները: Հայոց թագավորների հովանավորությամբ ու նախաձեռնությամբ արքունի կալվածք Այրարատ նահանգում տնկվել են արհեստական անտառներ: Պատմահայր Մովսես Խորենացին հիշատակում է Արմավիր մայրաքաղաքի մոտ հայ ազգապետ Արամանյակի տնկած Սոսյաց անտառը (մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կես):

[1] Տես *R. Costanza, R. d'Arge, R. de Groot et al.* The value of the world's ecosystem services and natural capital. «Nature», 15 May 1997, Vol. 387, PP. 253–260:

[2] Տես «Антропогенные действия на леса и остальные растительные общества» (refsurf.ru/1251246847.html):

Համաձայն Մովսես Խորենացու՝ հայ թագավոր Երվանդ Չորրորդը Ք.Ծ.ա. 5-րդ դարում Արարատյան դաշտի Բագարան հին քաղաքի շուրջ տնկել է անտառ, որը հայտնի էր «Ծննդոց անտառ» անունով: Ներկայումս այդ անտառատնկարկներից ոչ մի հետք չի մնացել, որովհետև դրանք գտնվել են Արարատյան դաշտի գրեթե կենտրոնում, հեշտ հասանելի հատվածներում և դեռ պատմական անցյալում օգտագործվել են գյուղատնտեսական նպատակներով: 4-րդ դարում հայոց Խոսրով Երկրորդ թագավորը (330–339 թթ.) Արտաշատ մայրաքաղաքի անբարենպաստ կլիմայական և դիրքային պայմանների պատճառով արքունական պալատներ է կառուցում քաղաքից դեպի հյուսիս գտնվող մի բարձրադիր տեղում, որի շուրջը հետագայում տարածվեց Դվին մայրաքաղաքը: Միևնույն ժամանակ, նրա հրամանով տնկվում է այն ժամանակվա չափանիշներով բավական մեծ մի անտառ, որտեղ գերակշռում էր կաղնին: Խոսրովի օրոք տնկված այդ անտառն սկսվում էր Գառնի բերդի մոտից, տարածվում էր Ազատ գետի երկայնքով՝ ձորով, մինչև Դվինի Տիկնունի ապարանքը, այնտեղից էլ՝ մինչև Արտաշատ և Արաքս: Այդ անտառի առաջին մասը կոչվեց «Տաճար մայրի», իսկ երկրորդը՝ «Խոսրովակերտ»: Այնտեղ թագավորական որսի համար պահվում էին զանազան կենդանիներ: Այդ անտառի մի հատվածը պահպանվել է մինչև մեր օրերը և 1958 թվականից հայտնի է Խոսրովի անտառ անունով՝ դառնալով Հայաստանի առաջին պետական արգելոցը:


Ողջի
Արեւելյան
Չորրորդ
Գառնի
Ամանոր
Ալիտակ
Ազատ
Գեղարդ
Գառնի
Դվին
Դարբնիս
Գայլան
Ալագյազ
Սարուխան
Վարդենիս
Արտաշատ
Վեդի
Արարատ
Արտաշատ
Գեղամա
Գեղամ
Գեղամա
Գեղամ
Գեղամ
Գեղամ

նահանգներին: Այդ տեսակետից հայտնի են եղել մանավանդ Արցախ, Գուգարք, Տայք նահանգները, ինչպես նաև Սյունիքի որոշ մասեր: Անտառները մեծ տարածություններ են զբաղեցնում նաև Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան և հարավային մասերում, հատկապես՝ Դերսիմում (հնում՝ Ծոփք) և Ռշտունիքում: Նշվածներից բացի, անտառը բավական մեծ տարածություն է գրավում Կարսա գետի վերնագավառում՝ Սարիղամիշի շրջակայքում, որտեղ ծառատեսակները մեծ մասամբ խեժատու են:

Հայաստանի անտառների մի զգալի մասը միջին դարերում ոչնչացվել է օտարերկրյա արշավանքների ժամանակ[3]:

ՀՀ ԱՆՏԱՌԱԾԱԾԿԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

Պաշտոնական տվյալներով՝ ՀՀ անտառային ֆոնդը կազմում է 459900 հա, որից անտառածածկ է 334100 հեկտարը, կամ երկրի ընդհանուր տարածքի 11,2 %-ը: Երկրագնդի մասշտաբով յուրաքանչյուր բնակչի բաժին է հասնում 0,67 հա միակցված անտառատարածք, այն դեպքում, երբ ՀՀ-ում այդ ցուցանիշը կազմում է 0,1 հա: ՀՀ անտառները տեղաբաշխված են անհավասարաչափ. ավանդաբար առանձնացվում են հյուսիսարևելյան (երկրի անտառների 62 %-ը), հարավարևելյան (36 %-ը) և կենտրոնական (2 %-ը) անտառազանգվածները:

ՀՀ անտառների հիմնական ծառատեսակներն են հաճարենին, կաղնին և բոխին, որոնք զբաղեցնում են անտառածածկ տարածքի 81,3 %-ը, սոճին՝ 5,3 %-ը, գիհին, հացենին, թեղին, լորենին, կաղամախին ու թփուտները՝ 13,4 %-ը:

Փայտանյութի պաշարով առաջին տեղում հաճարենին է, ապա՝ կաղնին և բոխին:

Ըստ տարիքային դասակարգման՝ ՀՀ անտառների 47 %-ը միջին հասակի է, 26,3 %-ը՝ հասուն և գերհասուն, 10,6 %-ը՝ մատղաշ: Մատղաշ հասակի սակավությունը վկայում է, որ անտառը ծերանում է, և բնական վերականգնման ընթացքը բավարար չէ: Ըստ բազմաթիվ հետազոտությունների՝ բնական սերմնային վերականգնման արդյունավետությունը խիստ անբավարար է կաղնուտներում, ինչի հետևանքով առանձին դեպքերում տեղի է ունենում անցանկալի տեսակափոխություն՝ կաղնուն փոխարինում է բոխին: Բնական սերմնային վերականգնումը համեմատաբար լավ արդյունք է տալիս բոխուտներում և հաճարուտներում: Անտառածածկ տարածքների կեսից ավելին՝ 54,7 %-ը, ունի փոքր (0,4-0,5), 41,5 %-ը՝ միջին (0,6-0,7) և 3,8 %-ը՝ բարձր մակարդակի (0,8-1,0) լրիվություն[*]: Փոքր

[3] Տես *Հ. Յ. Սայադյան,* Հայաստանի Հանրապետության անտառային գեոհամակարգերի տարածաժամանակային փոփոխությունները և կառավարման հիմնախնդիրները: Ե., 2010:

[*] Լրիվությունը անտառի գնահատման կարևոր ցուցանիշներից մեկն է, որն օգտագործվում է ծառուտի վիճակի, նրա պաշարի որոշման և անտառտնտեսական միջոցառումների կանխատեսման համար: Անտառի լրիվությունը որոշում են ծառերի բների՝ գետնից 1,3 մ բարձրության վրա հատույթների մակերեսների գումարով (անտառագնահատման լրիվություն) կամ ծառերի սաղարթի միակցվածության աստիճանով (անտառաբուծական լրիվություն): Տարբերում են անտառի բացարձակ լրիվություն և հարաբերական լրիվություն: Բացարձակ լրիվությունն արտահայտվում է 1 հա-ում բոլոր ծառերի բների հատույթների մակերեսների գումարով կամ բոլոր ծառերի սաղարթների պրոյեկցիաների մակերեսների գումարով (մ^2): Հարաբերական լրիվութ-

լրիվությամբ անտառածածկ տարածքների կամ ծառուտների մեծ տոկոսը վկայում է, որ հանրապետության անտառների մեծ մասը բնապահպանական և տնտեսական առումներով վատթար վիճակում է: Նույն պատկերն է նաև արտադրողականության ցուցանիշների պարագայում. IV, V, Vա, Vբ՝ ցածր արտադրողական բոնիտետային դասերին* պատկանող անտառների բաժնեմասը 53,1 % է, մինչդեռ բարձր արտադրողական 1-ին, 2-րդ բոնիտետային դասերին պատկանողներինը՝ ընդամենը 10 %: ՀՀ անտառները անցած երեք հազարամյակների ընթացքում կլիմայական և, հատկապես, մարդածին գործոնների բացասական ազդեցության հետևանքով կրճատվել, առանձին վայրերում վերացել են՝ իրենց տեղը զիջելով մերձալպյան, տափաստանային ու կիսաանապատային բուսականությանը:



ՀՀ անտառային բնահամակարգերը՝ ըստ 1986 –1989 թթ. գույքագրման արդյունքների

Այսպիսով՝ ՀՀ ներկայիս անտառածածկը աչքի է ընկնում որակական ցածր հատկանիշներով, նոսր է, արտադրողականությունը՝ ցածր, և առանց մարդու միջամտության չի կարող «ինքնուրույն» կերպով վերականգնվել: Մինչդեռ անտա-

---

յունն արտահայտվում է մեկ ամբողջի տասնորդական մասերով, ընդ որում, որպես միավոր ընդունվում է լրիվ միակցված տնկարկը: Բարդ և խառը ծառուտներում լրիվությունը որոշում են տարբեր շարահարկերի և տեսակների համար առանձին-առանձին (տես http://www.hayantar.am/glossary):

* Բոնիտետի դասը ծառուտի (անտառի) արդյունավետության գնահատման միավոր է: Բոնիտետային սանդղակը բաղկացած է 5 միավորից (բոնիտետից): Սանդղակի չափերը գերազանցող ծառերի համար կիրառվող սանդղակի լրացուցիչ չափանիշն է՝ 1ա, 5ա, 5բ, որոնք ցույց են տալիս, որ տվյալ ծառուտում ծառերի միջին բարձրությունն առաջին բոնիտետից բարձր (1ա) կամ 5-րդ բոնիտետի սահմանից ցածր է (5ա, 5բ) (տես նույն տեղում):

ռային բնահամակարգերը, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ համաշխարհային և տեղական օրինակներ, բացի զուտ տնտեսական և բնապահպանական նշանակությունից, ունեն նաև որոշակի ռազմական նշանակություն:

ԱՆՏԱՌԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Անցյալ դարի 90-ական թվականներին՝ Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, էներգետիկ հիմնախնդիրների լուծման հարցում մեծ դեր խաղացին ԽՍՀՄ տարիներին հիմնադրված անտառային ֆոնդերը, որոնք, սակայն, մինչև հիմա դեռ լիովին չեն վերականգնվել:

Մինչդեռ անտառապատ տարածքների նշանակությունը ռազմավարական է, քանի որ.

- ունեն քողարկիչ հատկություն՝ հատկապես հակառակորդի օդային հետախուզության միջոցներից, մասնավորապես՝ անհրաժեշտ վայրերում տնկված բազմահարկ և բազմաշերտ անտառները կարող են փակել հակառակորդի տեսադաշտը և ապահովել ՀՀ սահմանամերձ որոշ բնակավայրերի (օրինակ՝ Տավուշի մարզում) խաղաղ բնակչության անվտանգությունը,
- միջդաշտային անտառաշերտերը, բացի գյուղատնտեսական նշանակությունից, կարող են նաև խոչընդոտել հակառակորդի զրահատեխնիկայի շարժը հարձակման ուղղություններում,
- հնարավորություն են տալիս համեմատաբար փոքր խմբերով պայքարելու հակառակորդի գերակշռող ուժերի դեմ,
- էներգետիկ ճգնաժամի դեպքում կարող են օգտագործվել որպես վառելիք,
- հատապտուղների, սնկի, կանաչեղենի և այլ բնամթերքի հայթայթման աղբյուր են:

«Անտառում մարտ վարելիս հրամանատարը կարող է հեշտությամբ կորցնել ենթակա զորքերի նկատմամբ վերահսկողությունը… Սահմանափակ տեսադաշտը, կարճ հեռավորությունների վրա մարտ վարելու լարվածությունը և աղմուկի ուժեղացումը կարող են հասցնել այնպիսի իրավիճակի, որ հնարավոր չլինի տարբերել յուրային զորքը հակառակորդի զորքից»[4]:

Անտառային մարտը մարտի ամենաբարդ տեսակներից է: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Արևելյան Լեհաստանի, Բելառուսի և Ռուսաստանի համատարած անտառածածկը և հսկայական ճահճապատ տարածքները, ճանապարհներ գրեթե չլինելու հանգամանքը էապես դժվարացնում էին գերմանական զորքերի գործողությունները: Այդ պայմաններում գործելու համար զորքերի ոչ բավարար պատրաստությունը բացատրվում է խաղաղ ժամանակ անտառապատ տեղանքում զորավարժությունների անցկացման հազվադեպությամբ, ինչն էլ իր հերթին բացատրվում է տնկարկների պահպանության անհրաժեշտությամբ:

Խիտ բուսականությունը նվազագույնի է հասցնում դիտման և կրակի վար-

[4] Տես *Ф. Кохенгаузен.* Вождение войск. Тактический справочник для командира общевойскового соединения и его помощников. М., 1937:

ման սահմանները: Տեղանքում կողմնորոշումը խիստ դժվարանում է: Միևնույն ժամանակ, լայն հնարավորություններ են բացվում հակառակորդի հետապնդման, թաքստոցների և դարանների պատրաստման համար: Այս ամենը հատուկ պահանջներ է ներկայացնում սպառազինության ու սարքավորանքի մարտավարատեխնիկական բնութագրերին, հանդերձանքին և զինվորների մարտավարական պատրաստմանը: Օրինակ՝ բարեխառն գոտու անտառային տեղանքում մարտի արդյունավետ վարման համար անհրաժեշտ է վերադասավորել դասակը: Կախված առաջադրանքից և տեղանքից, որտեղ ծավալվում են մարտական գործողությունները, ստորաբաժանումների կազմը և սպառազինությունը կարող են փոխվել: Բայց, քանի որ խմբի համար հիմնական վտանգը դարանն է, ապա դասակի դասավորությունը պետք է այնպիսին լինի, որ ապահովի առավելագույն դիմադրողականություն և կորուստները հասցնի նվազագույնի[5]:

Անտառում տանկերը լայնորեն կիրառվում էին գլխավոր հարվածի ուղղությամբ հարձակման ժամանակ, հատկապես՝ ճանապարհների, արահետների երկայնքով և նոսրանտառներով շարժվելիս: Գործելով մարտաշարքերի կազմում՝ դրանք հարձակվում էին անմիջապես հետևակից հետո՝ ապահովելով նրա առաջխաղացումը, իսկ արահետներում ու բացատներում կատարում էին հրետանու խնդիրները՝ պայքար մղելով հակառակորդի տանկերի դեմ[6]:

Անտառային տեղանքում մարտի վարման հմտությունների վերաբերյալ կան բազմաթիվ պատմական հիշատակություններ: Բերենք դրանցից մեկը. հռոմեական Դոմիցիանոս կայսրը հրամայում է լեգեոնների տեղաշարժի համար անտառում բացել 120 մետր լայնությամբ անցուղի, որով «մերկացնում է» նաև գերմանական ցեղերի թաքստոցները և բնակատեղիները, որտեղից նրանք անսպասելի հարձակումներ էին գործում[7]:

Հարկ է նշել, որ ռազմավարական գերազանցություն ձեռք բերելու նպատակով նույն մարտավարությունը կիրառեց ԱՄՆ-ը դրանից մոտ 2000 տարի հետո՝ Վիետնամական պատերազմում: 1961 թ. օգոստոսին ԱՄՆ-ի Նախագահ Քենեդին թույլ տվեց Հարավային Վիետնամում կիրառել քիմիական նյութեր: Դրա հիմնական նպատակն էր ջունգլիների բուսականության ոչնչացումը, ինչը կհեշտացներ հյուսիսվիետնամական ստորաբաժանումների և պարտիզանական ջոկատների հայտնաբերումը: Վիետնամի դեմ այս բնապահպանական պատերազմը տևեց մինչև 1971 թ.: Այդ ընթացքում ԱՄՆ-ը Հարավային Վիետնամի տարածքում անտառների ոչնչացման նպատակով ինքնաթիռներով և ուղղաթիռներով փոշիացրեց 72 մլն լիտր դեֆոլիանտներ («*Agent Orange*»), այդ թվում՝ 44 մլն լիտրը՝ դիօքսինի պարունակությամբ, ինչի հետևանքով նույնիսկ պատերազմի ավարտից հետո տարբեր հիվանդություններից մահացավ մի քանի տասնյակ

[5] Տես «Война в лесу: выживание и тактика боя», 28.08.2012 (http://www.modernarmy.ru/article/215):

[6] Տես *Э. Миддельдорф.* Русская кампания: тактика и вооружение. Гл. 7: Боевые действия в особых условиях (http://militera.lib.ru/h/middeldorf/07.html):

[7] Տես *С. Ю. Фронтин.* Военные хитрости (Стратегемы). СПб., 1996, с. 11:

հազար մարդ[8]: Ընդհանուր առմամբ ոչնչացվեցին մոտ 1,6 մլն հա տարբեր տեսակի անտառներ: Ներկայումս էլ՝ 40 տարի անց, և՛ բնական համակարգերը, և՛ մարդիկ շարունակում են կրել այդ բնապահպանական աղետի հետևանքները:

Անտառապատ շրջանները ռազմական առումով երբեք «չեզոք» չեն լինում. դրանք «օժանդակում են» լավ նախապատրաստված զորքին և «պատժում» այն հրամանատարներին, որոնք հաշվի չեն առնում կամ չեն հասկանում այդ միջավայրի հետևյալ առանձնահատկությունները.

- առավելություն ունեն փոքր ստորաբաժանումները,
- անտառապատ տեղանքում տեղաշարժը միշտ դժվար է,
- մեքենայացված գումարտակները, նաև հեծելազորը միշտ ավելի դանդաղ են շարժվում, քան հետևակը,
- զորէջքի, վայրէջքի և վերթիռի համար բնական հարթակներ համարյա չկան,
- տեսանելիությունը և կրակակոծման հատվածը խիստ սահմանափակ են,
- տեղանքում կողմնորոշումը պահանջում է հատուկ տեխնոլոգիաների կիրառում,
- կան լուրջ խոչընդոտներ տանկերի, հրետանու, այլ ծանր զինատեսակների, ինչպես նաև ավիացիայի անմիջական աջակցության համար,
- ղեկավարումը, կառավարումը, կապը և թիկունքային ապահովումը կապված են լուրջ բարդությունների հետ,
- զորէջքային-դիվերսիոն զորամասերն ու ստորաբաժանումները և պաշտպանվող ուժերը ունեն որոշակի առավելություններ,
- քանակական և տեխնիկական գերազանցությունը սակավ նշանակություն ունի, քան հարմարվողականությունը[9]:

ՀՀ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ անտառածածկի ընդարձակմանը և կառավարման բարելավմանը էապես կարող են նպաստել ՀՀ Կառավարության «ՀՀ անտառի ազգային քաղաքականությունը և ռազմավարությունը» (2004 թ.), ՀՀ անտառային նոր օրենսդրությունը (2005 թ.), ՀՀ անտառային ազգային ծրագիրը (2005 թ.) և ՀՀ Կառավարության 2004 թ. ընդունած «Ապօրինի անտառահատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների ծրագիր» հմ. 38 արձանագրային որոշումը: Այս փաստաթղթերում կարևորվում են անտառների արդյունավետ պահպանությունը, կայուն օգտագործումը և վերարտադրությունը:

Ավելին. 2007 թ. ընդունված «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» համաձայն՝ ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործոններից են՝

[8] Տես *Г. Хозин.* Необъявленная война природе. «Вокруг света», 1977, № 10 (2625) (http://www.vokrugsveta.ru/vs/article/5554/):

[9] Տես *Дж. М. Колинз.* Военная география для профессионалов и непрофессионалов. М., 2005, с. 166:

«բնական պաշարների պահպանումն ու արդյունավետ օգտագործումը, բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը»:

Փաստաթղթում նշվում է, որ «Հայաստանի Հանրապետությունը կարևորում է լեռնահանքային արդյունաբերության, բնական, հատկապես՝ անտառային և ջրային պաշարների օգտագործման արդյունավետության մեծացումը»[10]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Անտառային ազգային ծրագրում նշվում է, որ ՀՀ անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, գիտական մեծ արժեք ու կենսաբազմազանություն: Հանրապետության անտառների մոտ 70 %-ը ներկայումս կազմալուծված ու ծերացած է, իսկ անտառազանգվածները հիմնականում գտնվում են կտրտված ռելիեֆով դժվար հասանելի վայրերում՝ բնակավայրերից և ճանապարհներից զգալի հեռավորության վրա: Եթե այս ամենին ավելացվի նաև ՀՀ անհավասարաչափ անտառապատվածության հանգամանքը, ապա պարզ կդառնա երկրի անտառների ռազմական նշանակության սահմանափակությունը: Այն մեծացնելու և ազգային անվտանգության մակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ է իրագործել անտառների մասին ազգային ծրագրից և օրենսգրքից բխող այն պահանջները, որոնք հատկապես վերաբերում են անտառների գիտականորեն հիմնավորված կառավարմանը, դրանց տարածքների պահպանմանն ու ընդարձակմանը:

Պրոֆեսոր Պ. Խուրշուդյանի[11] կարծիքով՝ ՀՀ օպտիմալ անտառապատվածությունը պետք է կազմի երկրի տարածքի 20,1 %-ը, ինչին կարելի է հասնել՝ գոյություն ունեցող անտառածածկ տարածքները ընդլայնելով շուրջ 266,5 հազար հեկտարով: Միայն այս պարագայում ՀՀ անտառազանգվածները, բացի տնտեսական և բնապահպանական գործառույթներից, ձեռք կբերեն նաև ռազմական նշանակություն և կնպաստեն ազգային անվտանգության մակարդակի բարձրացմանը:

---

[10] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 15, 22:

[11] *Պ. Ա. Խուրշուդյան,* Ջերմաստիճանը 2-3^0 բարձրանալու և տեղումները 10 % նվազելու դեպքում միջավայրի խոցելիության մեղմման ստրատեգիան անտառածածկ տարածքների ընդարձակման միջոցով: «Հայաստան. կլիմայի փոփոխության հիմնահարցերը» հոդվածների ժողովածու: Խմբ.՝ Ա. Հ. Գաբրիելյան: Ե., 1999, էջ 308–321:

ЭКОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

СОХРАНЕНИЕ И РАСШИРЕНИЕ ЛЕСНЫХ МАССИВОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ КАК ВАЖНЫЙ ФАКТОР ОБЕСПЕЧЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

О. Я. САЯДЯН, доктор географических наук, профессор, А. Я. САЯДЯН, кандидат географических наук, военный атташе Посольства РА в Китайской Народной Республике

РЕЗЮМЕ

Стратегическое значение лесов, помимо выброса в атмосферу кислорода и поглощения углекислого газа, заключается в том, что они обладают маскирующими свойствами, могут препятствовать передвижению бронетехники противника, дают возможность малым группам бороться с преобладающими силами противника, являются источником топлива, ягод, грибов, зелени и других натуральных продуктов.

За последние три тысячелетия под влиянием климатических и антропогенных факторов площадь лесных массивов в Армении существенно сократилась. Сегодня лесной покров РА низкого качества, около 70 % лесов стареют, большая часть лесных массивов находится в пересеченной местности, в труднодоступных местах, вдали от населенных пунктов и дорог, т. е. имеет ограниченное военное значение. Вместе с тем леса РА имеют большое значение для защиты почвы и водных ресурсов, регулирования климата, а также экономики и науки.

Для увеличения стратегического значения лесов РА необходимо осуществить меры, соответствующие требованиям Национальной лесной программы, в частности, научно обоснованное управление лесами, сохранение и расширение их территорий. Для обеспечения оптимальной лесистости РА леса должны составлять 20 % территории страны, т. е. должны увеличиться на 266 тыс. га. Только в этом случае лесные массивы РА приобретут военное значение и станут важным фактором национальной безопасности.

ECOLOGICAL SECURITY

THE PRESERVATION AND EXPANSION OF THE WOODLANDS OF THE REPUBLIC OF ARMENIA AS AN IMPORTANT FACTOR OF ENSURING NATIONAL SECURITY

Hov. Y. SAYADYAN, Doctor in Geography, Professor, Ham. Y. SAYADYAN, PhD in Geography, Military Attaché, Embassy of the RA in the People's Republic of China

SUMMARY

The strategic significance of forests, in addition to the oxygen discharge into the atmosphere and absorption of carbon dioxide, is that they have masking properties, may hinder the movement of enemy's armored vehicles, enable small groups to combat the enemy's prevailing forces, and are a source of fuel, berries, mushrooms, herbs and other natural products.

The woodland area in Armenia has significantly decreased under the influence of climatic and anthropogenic factors over the past three millennia. Today the RA forest cover is poor, about 70 % of forests age, a large part of the forestry is in the rugged terrain, in hard-to-reach places, far from human settlements and roads, i. e. it has limited military significance. In addition to that, forests in the RA are of great importance for the protection of soil and water resources, climate regulation, as well as the economy and science.

To increase the strategic significance of the RA forests it is necessary to take measures corresponding to the requirements of the RA National Forest Program, markedly, the science-based forest management, preservation and expansion of their territories. For ensuring the optimal forest cover of the Republic of Armenia the forests should make 20% of the country's territory, i. e. they should increase in 266 thousand ha. Only in this case the RA woodlands will acquire military significance and become an important factor of national security.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԷԹՆՈՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐ

Ա. Կ. ՅԱԼԱՆՈՒԶՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ,
Ս. Գ. ՍԱՐԴԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

Զանգվածային մահացությունները՝ լինի դա բնական աղետների (երկրաշարժ, ջրհեղեղ, փոթորիկ և այլն), տեխնոլոգիական վթարների (արտադրական օբյեկտների մեծ վթարներ, զանգվածային թունավորումներ և այլն), թե ցեղասպանության հետևանքով, առաջացնում են բնակչության հոգեբանական ցնցում: Հայոց ցեղասպանությունը ևս լուրջ հետևանքներ է թողել «հայ ազգի կենսագործունեության, հոգևոր կերտվածքի ու բնավորության, սերունդների հետագա ողջ սոցիալական գործունեության, նրա իղձերի ու ձգտումների վրա»[1]: Այդպիսի հետևանքներից են ֆիզիկապես բնաջնջվելու հավաքական վախը, ջարդարարների ու դահիճների նկատմամբ վրեժխնդրության զգացումը, պատմական հիշողության նոր շերտի առաջացումը, շերտի, որում նստվածք են տվել ու արմատներ ձգել ցեղասպանության հետ կապված բոլոր երևույթները, և այլն[2]:

Ցեղասպանության էքզոհոգեբանական հետևանքներից է նաև այն հանգամանքը, որ ահա արդեն մեկ դար է, ինչ հայերի նորանոր սերունդներ իրենց ժողովրդի նկատմամբ կատարված հրեշավոր ոճիրը բացատրելու, դրա պատճառները հասկանալու և այդպիսով ազգային հոգեբանական ցնցումը հաղթահարելու նպատակով կատարվածի համար մեղավորներ են փնտրում, մեղադրում են նաև իրենց նահատակ հայրենակիցներին (ավագ սերնդին), որ «գառան նման մորթվել են», չեն դիմել ինքնապաշտպանության: Հետաքրքիր է, որ նույն մեղադրանքը հնչեցրել են նաև օտարները. օրինակ՝ ցեղասպանության ականատես Ռաֆայել դը Նոգալես Մենդեսը, մի կողմից, հարգանքով է խոսել Վանի ինքնապաշտպանության հերոսների մասին, մյուս կողմից՝ ոչ մի կերպ չի կարողացել հասկանալ բռնի տեղահանված հայ տղամարդու թուլությունը և իր հուշերում գրել է. «Ո՞վ կա-

[1] Տես «Ցեղասպանության հոգեբանական հետևանքները»: «Հայկական հարց» հանրագիտարան: Ե., 1996, էջ 447:

[2] Տես նույն տեղում: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ Ցեղասպանության հետևանքները բավարար չափով ուսումնասիրված չեն:

րող էր իմանալ, թե ինչ գազանությունների նրանք կհանդիպեին, բայց խիզախություն չունեին դիմադրելու ոչ ավելի, քան հինգ ժանդարմի, որոնք ուղեկցում էին յուրաքանչյուր շարքին և հաճախ նույնիսկ զինված չէին»[3]: Խորհելով օսմանյան հայերի համար հնարավոր այլընտրանքի մասին՝ Նոգալեսը մեղադրել է հայերին, որ նրանք, լեռներում և անտառներում «ազգային ինքնավարությանը արժանի ազգերի օրինակով» պարտիզանական պատերազմ վարելու փոխարեն, իրենց ժամանակը վատնել են միջանձնային գժտություններով զբաղվելու և Անտանտի հետ կապված ապարդյուն հույսեր տածելու վրա[4]:

Մեր հայրենակիցներից շատերը համամիտ են այսպես մտածողների հետ և փորձում են Ցեղասպանության զոհերի «գառան նման մորթվելու» երևույթը բացատրել նրանց քրիստոնեական հավատով՝ «թշնամուն ապտակի համար երեսը դեմ տալով», «չարին չարով չպատասխանելով», «թշնամուն սիրելով», և որպես այդ ամենի տրամաբանական հետևանք հանգում են քրիստոնեության՝ որպես «թույլերի կրոնի» ժխտմանը: Ոմանք էլ, ընդհանրացնելով այս պնդումը, քրիստոնեության ընդունումից ի վեր հայ ժողովրդի կրած բոլոր աղետների պատճառը փնտրում են քրիստոնեական գաղափարախոսության մեջ: Մյուսներն էլ, առաջ քաշելով «զուտ կրոնական» փաստարկ, այն է՝ «եթե Աստված գոյություն ունենար, ապա թույլ չէր տա, որ իրեն հավատացող ժողովուրդն այդպիսի արհավիրքի ենթարկվի», նույնպես հանգում են քրիստոնեության ժխտմանը:

Այս ամենն արտացոլվել է նաև հայ գրականության մեջ: Որպես ասվածի վկայություն՝ բերենք մի քանի ակնառու օրինակ:

Արևմտահայ բանաստեղծ Վահան Թեքեյանը 1917 թ. գրված «Պիտի ըսենք Աստուծոյ» բանաստեղծության մեջ այն միտքն է արծարծում, որ Հայը, հասնելով հանդերձյալ կյանքին, պիտի Աստծուն դիմի հետևյալ խոսքերով. «Մեզ դժոխք, դժոխք ղրկե անգամ մ'ալ, Չէ՞ որ զայն լավ կճանչնանք, զայն ճանչցուցիր մե՛զ շատ լավ, Եվ թուրքերուն հատկացուր արքայությունը դ անբավ»[5]: Իսկ ռումինահայ գրող Վարուժան Ոսկանյանի «Շշուկների մատյան» վեպի* հերոսուհին՝ Հերմինեն, որի ամուսնուն թուրքերը սպանել են, իսկ իրեն որդու և դստեր հետ քշել անապատ, դիմելով իր որդուն, որը ցնցված է մի նշանված զույգի՝ մահվանն ընդառաջ (ճամբարից՝ անապատ) գնալու որոշումից, ասում է. «Աստված մեռավ: Ձգե՛, թող առաջ երթան: Հոս, ուր վերջին անգամ տեսար իրենց, Դեյր Էզզորի ճամբարին եզերքը, Եդեմի պարտեզին սահմանն է.... Կարելի է իրենք աշխարհը սկիզբեն առնեն և ուրիշ Աստված մը ստեղծեն»[6]:

[3] Տես *Տ. Հոֆման*, Ինքնապաշտպանությունը եղեռնի ժամանակ. Վանը հիշատակելով և Նոգալես վերընթերցելով: «ՀԲ», 2015, հմ. 1–2:

[4] Տես նույն տեղում:

[5] *Վ. Թեքեյան*, Երկեր: Ե., 1958, էջ 287:

* Հրատարակվել է 2009 թ. Ռումինիայում, ճանաչվել Ռումինիայի տարվա լավագույն գրական ստեղծագործություն, ստացել Ռումինական ակադեմիայի 2009 թ. գլխավոր գրական մրցանակը:

[6] *Վ. Ոսկանյան*, Շշուկների մատյան: Ե., 2014, էջ 346:

Սփյուռքահայ գրող Շահան Շահնուրի «Նահանջ առանց երգի» վեպի հերոսներից մեկը՝ Սուրենը, մեղադրում է իր նախնիներին՝ մերժելով Գրիգոր Նարեկացու՝ ազգային սրբություն համարվող «Մատյան ողբերգության» երկում արտահայտված գաղափարները. «Հայերը գիրք մը ունին: Անոնց ամենագէշ, զզուելի, ամենասխալ, վատառողջ եւ ամէնէն աւելի անբարոյական գիրքն է ան՝ Նարեկը:… Ո՛չ մէկ սերունդ չխորհեցաւ զայն ջնջել, որովհետեւ անոր լեզուական եւ բանաստեղծական ինչ-ինչ յատկութիւններէն խաբուելով՝ ծածկուած թոյնը չնշմարեց…. Պարտուածներ ենք, որովհետեւ այդ վանականին հաշմանդամ հոգիին պէս արհամարհեցինք եւ անգիտացանք գոյութիւնը մեր եսին, մեր ուժին, կամքին, անհատականութեան. չկռուեցանք, չխածինք, չմաքառեցանք: Քրիստոնէական վարդապետութեան անոր սխալ ու թերի մեկնութիւնը ընդունելով՝ եղանք անմտօրէն կրաւորական, համակերպուող, աղերսարկու, անգիտակից»[7]: Եվ անմիջապես էլ հերոսը խոստովանում է, որ իր մեղադրանքը հոգեբանական ապրումների հետևանք է. «Նարեկացին սկզբնապատճառ նկատուի թէ ոչ, իրողութիւն է, որ շատ մը բաներ կուգան կարդարացնէն իմ հախուռն մտածումս, որ իր ազգասէրի տառապանքին մէջ կուզե անպայման մեկը նետել ամբաստանյալի աթոռին»[8]:

Կրած հոգեկան ու ֆիզիկական անլուր տառապանքների պատճառով աստվածամերժության մեջ ընկնելու հոգեբանական երևույթը բնորոշ է ոչ միայն Հայոց ցեղասպանության զոհերին ու վերապրածներին: Հավատի ազգային ճգնաժամ են ապրել նաև 1933–1945 թթ. Գերմանիայում և նրա զավթած տարածքներում նացիստների կողմից Ողջակիզմանը (եբրայերեն՝ Շոա, այսինքն՝ Աղետ) ենթարկված հրեաները. «Ինչպե՞ս կարելի է պահպանել հավատը մի Աստծու նկատմամբ, որը թույլ տվեց, որ Իր ընտրյալ ժողովուրդն այդպիսի սոսկալի ճակատագրի արժանանա»[9]: Մի շարք հրեա մտածողներ Աղետը դիտում են չարի հավերժական հիմնահարցի համատեքստում՝ որպես համաշխարհային մասշտաբի ողբերգություններից հերթականը: Մյուսները փորձում են այն բացատրել հրեա ժողովրդի կատարած մեղքերով, որոնց պատճառով Աստծո և հրեա ժողովրդի միջև գոյացել է վիհ, իսկ Իսրայելի Պետության ստեղծումն այդ վիհի հաղթահարման առաջին քայլն է[*]: Շատերի համար էլ Աղետն ապացույց է այն բանի, որ Աստված մեռել է, իսկ մարդու գոյությունն անիմաստ է ու աննպատակ[10]:

Տարբերվում են նաև հրեական Հականացիստական դիմադրության շարժմանը հրեաների տված բարոյական գնահատականները. կան պնդումներ, թե բոլոր զոհվածները մահին ընդառաջ էին գնում առանց պայքարի, ինչպես գառները՝ մորթվելու, և կան հրեա պարտիզանների դերը գերագնահատող հայտարարութ-

[7] Տես *Շ. Շահնուր*, Նահանջ առանց երգի: Ե., 1994, էջ 148:

[8] Տես նույն տեղում:

[9] Տես «Катастрофа. Катастрофа в новейшей истории». «Краткая Еврейская Энциклопедия» («КЕЭ»), т. 4, кол. 173 (http://eleven.co.il/article/15343#03):

[*] Այս ուսմունքը հակասում է ուղղափառ հուդայականությանը, ըստ որի՝ Աստծո և հրեա ժողովրդի միջև վիհ չկա:

[10] Տես նույն տեղում:

յուններ: Պահանջվել է պատմաբանների երկարատև աշխատանք, որպեսզի անաչառ գնահատական տրվի ինչպես Դիմաղրության շարժման մարտիկների հերոսությանը, այնպես էլ անօգնական զոհերի հեզությանը[11]:

Առաջիններից մեկը, որ գիտակցեց, թե հայ ժողովուրդը Ցեղասպանության հետևանքով ծանր հոգեխոցվածք է ստացել, և նրան անհրաժեշտ է նախևառաջ հոգեբանական օգնություն, և ինքն էլ գործնական քայլեր արեց այդ օգնությունը ցույց տալու համար, Գարեգին Նժդեհն էր: Նա նույնպես այն կարծիքին էր, որ «մեր ժողովրդի անօրինակ ողբերգության պատճառ է դարձել» քրիստոնեությունը, ավելի ճիշտ՝ «քրիստոնեական սիրո նրա սխալ ըմբռնումը», որը պետք է «վերագնահատումի ենթարկէ», «որպէսզի դաղարի թուլութիւնը առաքինութիւն համարել եւ սպանել մեր ժողովրդի կամքը»[12]:

Արդեն բանտում՝ 1946–1948 թթ., նա, պատասխանելով «Ինչո՞ւ ստեղծվեց ցեղակրոն շարժումը» հարցին, գրում է. «Սփյուռքի մեր գաղթօջախներում ստեղծվել էր մի մթնոլորտ, որում մեկ միլիոնի հասնող գաղութահայերը, հուրախություն թուրքերի, փորձում էին ինքնասպան լինել…. Սակայն տասնամյակների ուսումնասիրություններն ու մտորումներն ինձ հանգեցրին մի այլ ճշմարտության ևս. պարտվողականությամբ տառապող ժողովուրդներն անբուժելի չեն, կյանքը հարափոփոխ վերածնունդ է, հնարավոր է և մեր գաղթօջախների հայության առողջացումը: Իսկ դա կարող է տեղի ունենալ միայն վերանորոգմամբ, որն էլ հնարավոր է միայն սեփական պատմության իրական արժեքները վերապրելու ճանապարհով»[13]:

1927 թ. «Որդիների պայքարը հայրերի դեմ» աշխատության մեջ նա շեշտեց հայ ժողովրդի հոգեբանությունը փոխելու անհրաժեշտությունը. «Սարսափի և պարտուողականութեան հոգեբանութիւնից սրբագրուելու համար – հետեւանք՝ դարեր տեւող օտար տիրապետութեանց մեր հայրենիքում, եւ մասնաւորապես, տաճիկների՝ Հայաստանում պարբերաբար սարքած կոտորածների եւ ունեցած զէնքի յաջողութեան – հայութիւնը, մենակ թէ զինակցաբար, պիտ կազմակերպի իր փոխվրեժի պատմական գործը, հրամայականօրէն պարտութեան պիտ մատնի Տաճկաստանը, որպէսզի հոգեփոխի ու ապահովի իր ֆիզիքական եւ հոգեւոր գոյութիւնը»[14]: Հայի նոր սերունդների համար նրա առաջարկած գաղափարախոսությունը՝ տարոնականությունը (որը, իր կարծիքով, նույն ցեղակրոնությունն է), «այլ բան չէ, եթե ոչ մեր ցեղի ոգու դրականը, նրա դրական գծերը»[15] և, գլխավորապես՝ Մամիկոնյանների օրինակով «Հայրենիքի համար քաջաբար կռվելու և մեռնելու ուխտվածությունը»[16]: Եվ այդ ամենը՝ հանուն ապրելու, այս աշխարհում գոյություն ունենալու իրավունքի:

[11] Տես նույն տեղում:

[12] *Գարեգին Նժդեհ*, Հատընտիր: Ե., 2006, էջ 65:

[13] Նույն տեղում, էջ 475:

[14] Նույն տեղում, էջ 129:

[15] Նույն տեղում, էջ 546:

[16] Նույն տեղում, էջ 537:

Ստացվում է, որ պատմության ընթացքում հայ ժողովուրդը (ըստ Նժդեհի՝ Հայ եկեղեցին) շեղվել է քրիստոնեության ճիշտ ըմբռնումից, և քրիստոնյա Վարդանանք, որոնք արիության չափանիշ են, 1500 տարի անց վերածվել են ցեղասպանության՝ «տկար հոգեբանությամբ» զոհերի: Նժդեհն առաջարկում է վերադառնալ արիության ճշմարիտ ակունքներին, որոնք, ըստ նրա, երկուսն են՝ Վարդանանք (Մամիկոնյանները) և հայերի նախաքրիստոնեական հեթանոսությունը: Ըստ էության, սա քրիստոնեության և հեթանոսության համադրման մի յուրօրինակ փորձ է, որի արգասիքը հենց տարոնականության (ցեղակրոնության) գաղափարախոսությունն է:

Այդուհանդերձ, Նժդեհը ձեռնպահ է մնացել ցեղասպանության զոհերին թուլության համար բացահայտորեն մեղադրելուց (միգուցե գիտակցելով, որ առանց այն էլ ծանր հոգեխոցվածք ստացած ժողովրդին այդ քննադատությունը կարող է պարզապես զգետնել): Ավելին. նա փորձել է արդարացնել, վեհացնել նրանց մահը, ինչը հայ ժողովրդին էթնոհոգեբանական օգնություն ցույց տալու տեսանկյունից արդարացված քայլ էր: 1941 թ. «Ռազմիկ» թերթի 17-րդ համարում նա գրել է. «Պատմութեան ծանօթ որոշ ժողովուրդներին յատուկ տկարութեամբ – ցեղուրացութեամբ – հայն էլ կարող էր փրկել իր ֆիզիքականը, բայց բիւրիցս փա՞ռք իրեն, նա չունեցավ այդ տկարութիւնը: Գիտակցօրեն, շատ տեղերում, թէկուզ կրաւորական հերոսացումով, նա զոհեց կէսն իր մարմինէն՝ իր ցեղային էութեան դէմ չմեղանչելու համար: Նա դարձավ իր սեփական Զոհը եւ Զոհարարը միաժամանակ: Եւ փրկուեց ցեղը»[17]:

Փորձելով սփոփել իր ժողովրդին, օգնել նրան, բուժել հոգու վերքերը՝ Գարեգին Նժդեհը բավական թանկ գին վճարեց՝ հակասական գնահատական տալով Ցեղասպանության զոհերին:

Նժդեհից հետո այս հակասությունը չվերացավ: Խորհրդահայ պատմագիտության ու գրականության մեջ Հայոց ցեղասպանության փիլիսոփայական իմաստավորման շրջանակներում արտահայտվող հիմնական գաղափարներն էին հայ ազգային-ազատագրական պայքարի առաջադիմական բնույթի շեշտումը, հայ քաղաքական կուսակցությունների անմիաբանության ու անհեռատեսության, «քաղաքակիրթ աշխարհի անբարոյականության», հայ ժողովրդին իրենց քաղաքական շահերին զոհաբերելու քննադատությունը, հայ ժողովրդի տոկունության, փյունիկի նման մոխիրներից հառնելու հատկության փառաբանումը, վրեժի կոչը, հավատը արդարության վերջնական հաղթանակի նկատմամբ[18]:

ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի անկախացումից հետո հայ ժողովրդի քաղաքական օրակարգի գլխավոր հարցը դարձավ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը, որը կարծես երկրորդ պլան մղեց Հայոց ցեղասպանության հետ կապված աշխարհայացքային ու կրոնաբարոյական հարցերի իմաստավորումը[*]:

[17] Նույն տեղում, էջ 614:

[18] Տես «Հայկական հարց» հանրագիտարան, էջ 242:

[*] Արցախյան պատերազմում հայ ժողովրդի տարած հաղթանակը, անշուշտ, նպաստեց ազգային հոգեբանության մեջ արմատացած զոհի բարդույթից ազատվելուն: Սակայն այդ հաղ-

Կարելի է ասել, որ վերոնշյալ հակասությունը բնորոշ է կոնկրետ մտածողի՝ Նժդեհի աշխարհայացքին, այսինքն՝ սուբյեկտիվ է: Սակայն այսօր, երբ Հայ եկեղեցին կատարել է Ցեղասպանության զոհերի հավաքական սրբադասում[19] և ապրիլի 24-ը սահմանել հիշատակի օր «սրբոց նահատակաց, որք կատարեցան յընթացս Ցեղասպանութեանն Հայոց վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց[*]»[20], այդ հակասությունը, հավաքական սրբադասման որոշ մեկնաբանությունների պատճառով (որոնց համաձայն՝ սրբեր են հռչակվում Ցեղասպանության անխտիր բոլոր զոհերը) ձեռք է բերում օբյեկտիվ բնույթ: Իսկապես, Հայ եկեղեցու սրբեր են թե՛ Վարդանանք, թե՛ Ցեղասպանության զոհերը, բայց առաջինները կռվել են ու նահատակվել սուրը ձեռքներին, իսկ երկրորդներից շատերն իսկապես «գառան նման մորթվել են»: ՈՒրեմն նրանցից ո՞վ պետք է օրինակ ծառայի հայերի սերունդների համար, Հայ եկեղեցին նրանցից որի՞ն է օրինակ բերում իր հավատացյալ հոտի համար:

Այս հարցերի պատասխանը կարող է էապես ազդել հայ ժողովրդի ազգային հոգեբանության վրա, որովհետև անմիջականորեն առնչվում է ազգային հերոսի կերպարի ձևավորման խնդրին:

Կարելի է փաստել, որ Ցեղասպանության զոհերի հերոսացումը ոչ միայն Հայ Առաքելական եկեղեցու, այլև մեր պետության պաշտոնական դիրքորոշումն է: Այսպես, Հայոց ցեղասպանության 100-ամյակի Համահայկական հռչակագրի 1-ին կետում ասվում է, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող «պետական հանձնաժողովը, համախորհուրդ Սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերի հետ, արտահայտելով հայ ժողովրդի միասնական կամքը,…. երախտագիտությամբ խոնարհվում է կյանքի ու մարդկային արժանապատվության համար պայքար մղած նահատակ և վերապրած հերոսների առջև»[21]:

Նկատենք, որ սխրանքը բնորոշված է որպես «կյանքի ու մարդկային արժանապատվության համար պայքար», որն իր իմաստով «գառան նման մորթվելու» ճիշտ հակառակն է:

թանակը հստակություն չմտցրեց Հայոց ցեղասպանության զոհերի վարքագծի գնահատման հարցում, թեպետ շատերն այն մեկնաբանեցին որպես «ուժի փիլիսոփայության» ճշմարտացիության, հետևաբար՝ «թշնամուն սիրելու» սկզբունքի ժխտման գործնական ապացույց:

[19] Տես «Սրբադասման կարգն ավարտվեց Տերունական աղոթքով. սրբապատկերը տեղափոխվեց Մայր տաճար»: «ARMENPRESS», 23.04.2015 (http://armenpress.am/arm/news/803061/srbadasman-kargn-avartvec-terunakan-axotqov-srbapatkery.html):

[*] Սա ընդհանուր ձևակերպում է, ըստ որի՝ սրբեր են Հայոց ցեղասպանության ընթացքում հանուն հավատի և հայրենիքի նահատակվածները: Այստեղից չի բխում, որ բոլոր զոհերը սրբեր են:

[20] Տես «Սրբադասումը Հայ Եկեղեցում» (http://www.armenianchurch.org/index.jsp?sid=1&id=30336&pid=29930):

[21] Տես «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի Համահայկական հռչակագիր» (http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/):

Անշուշտ, ցեղասպանության զոհերի թվում, ինչպես և ցանկացած զանգվածային աղետի զոհերի մեջ, եղել են ինչպես հերոսներ[22], այնպես էլ վախկոտներ, ինչպես սրբեր, այնպես էլ ուրացողներ: Ցեղասպանության զոհերի հավաքական սրբադասմամբ Հայ եկեղեցին հավաքում, առանձնացնում, ի մի է բերում բոլոր սրբերին, իսկ Հայոց ցեղասպանության 100-ամյակի Համահայկական հռչակագրի ձևակերպումը տալիս է հերոսության չափանիշը, որին զոհերի մի մասը համապատասխանում է, բայց մի մասն էլ չի համապատասխանում: Վերջիններից մենք չենք հրաժարվում, վառ ենք պահում նրանց հիշատակը, ուխտ ենք անում մեր կարողության չափով լուծելու նրանց վրեժը, սակայն նրանց հերոս չենք համարում, նրանց օրինակով չենք փորձում ձևավորել մեր սերունդների հայրենասիրական շարժառիթները: Ի վերջո, աշխարհի ոչ մի ժողովուրդ բաղկացած չէ և չի կարող բաղկացած լինել միայն հերոսներից ու սրբերից:

Ցեղասպանության հետևանքով առաջացած հոգեխոցվածքի ապաքինման համար ամենևին կարիք չկա, ճշմարտության դեմ մեղանչելով, հերոս ու սուրբ հռչակել անխտիր բոլոր զոհերին: Միևնույն ժամանակ, չենք կարծում, թե ճիշտ կլիներ (բարոյականության տեսակետից) խտրականություն դնել՝ հրապարակավ տարանջատել հերոսաբար զոհվածներին հեզաբարո զոհերից: Անշուշտ, Հայրենական մեծ պատերազմի ժամանակ եղել են հատուկենտ հայեր, որոնք անցել են թշնամու կողմը: Բայց մենք հիմա դրանց անունը չենք տալիս, չենք հիշում դրանց խայտառակ արարքը: ՈՒստի կարծում ենք, որ բոլոր պաշտոնական հայտարարություններում պետք է նշել իրենց պայքարով հերոսացած զոհերին, ինչպես դա խելամիտ կերպով արվում է Հռչակագրում, և պետք է խուսափել ավելորդ մեկնաբանություններից, որոնք ստվեր են գցում մեր ժողովրդի վրա, ոչ թե աղավաղելով իրողությունը կամ նորը հորինելով, այլ միայն դրա մի մասը լռության մատնելով:

Մեր կարծիքով, ցեղասպանության հոգեխոցվածքը բուժելու համար կարիք չկա նաև համատեղելու անհամատեղելին՝ քրիստոնեությունն ու հեթանոսությունը: Բավական է միայն չաղավաղել քրիստոնեության ուսմունքը: Քրիստոնեությունը և, առավել ևս, Հայ եկեղեցին չեն ուսուցանում «գառան նման մորթվել»: Հատկապես Հայաստանի անկախության հռչակումից հետո լույս են տեսել այս դրույթը հիմնավորող բազմաթիվ աշխատություններ, և մենք նպատակ չունենք անդրադառնալու վաղուց հայտնի փաստարկներին[23]: Բավարարվենք Աստվածաշնչից միայն մի մեջբերումով, որը, չգիտես ինչու, տվյալ թեմայով զբաղվող հեղինակներից համարյա ոչ ոք չի հիշատակում[*]: Ճակատամարտից հետո իր զոհ-

[22] Տես, օրինակ, *Վերժինե Սվազլյան*, Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ: Ե., 2011, էջ 92, 145, 204, 206, 216, 230, 239, 240, 246, 247, 353 և այլն:

[23] Այդ փաստարկներից մի քանիսը տես, օրինակ, *Եղիշե*, Վարդանի և հայոց պատերազմի մասին: Ե., 1989, էջ 219–221, *Շահե արքեպիսկոպոս Ամեմյան*, Սրտի խոսք հայ զինվորին, *Հ. Ա. Գևորգյան*, Քրիստոնեության ընդունումը Հայաստանում պատմության փիլիսոփայության տեսանկյունից, *Ս. Հ. Հարությունյան*, Քրիստոնեությունը՝ հայրենիքի պաշտպանության հոգևոր-բարոյական զորույթ: «ՀԲ», 2001, հմ. 1–2:

[*] Հատկապես Հայոց բանակի հոգևոր սպասավորները, կարծում ենք, պետք է ամենայն խորությամբ ուսումնասիրեն Մակաբայեցիների գրքերը, որոնք պատմում են Վարդանանց

ված զինվորների հոգիների փրկության համար աղոթող և զոհ մատուցող Հուդա Մակաբայեցու՝ հրեական զորքի առաջնորդի մասին ասվում է. «Նա ճիշտ էր հասկացել, որ գեղեցիկ մահով ընկածները շնորհների են արժանանում: Նա հավատում էր, որ քաջությամբ ընկածները մեղքերի թողություն կստանան» (Բ Մակաբայեցիներ, 12:45–46:):

Այս երկու նախադասությունը, որոնց վրա կարող է կառուցվել հոգևորռազմահայրենասիրական դաստիարակության ամբողջ համակարգը, բավական են՝ ցույց տալու համար, որ քրիստոնեությունը խրախուսում է հերոսությունը, և որ այն ուժեղների կրոն է: Հետևաբար՝ սկզբունքային ոչ մի տարբերություն, առավել ևս՝ հակասություն չկա Վարդանանց և Հայոց ցեղասպանության նահատակ սրբերի միջև, որովհետև նրանք գեղեցիկ մահով ընկածներ են:

Հարկ ենք համարում նկատել, որ հայ ժողովրդի էթնոհոգեբանական վերականգնման տեսանկյունից հույժ կարևոր են զոհերի մի մասի հեզության հոգեբանական պատճառների հետագա ուսումնասիրումը և պարզումը: Որպես ասվածի հիմնավորում՝ ևս մի օրինակ բերենք հրեաների պատմությունից:

Աստվածաշնչի (Հնգամատյանի) համաձայն՝ իրենց հայրենիքից արտաքսումը հրեաների համար ամենասոսկալի պատիժն էր աստվածուրացության մեղքի դիմաց[24]: Հրեաները հազարամյակների ընթացքում փորձել են բացատրել գալուտի[*]՝ ազգային այդ աղետի պատճառները: Ինչո՞ւ մեղավոր ժողովուրդները բարգավաճում են, իսկ ընտրյալ ժողովուրդը տառապում է և ստիպված է ապրել իր հայրենիքից դուրս: Հրեա մտածողները մեծ նշանակություն են տվել այս հարցի պարզմանը: Ի վերջո, նրանք հանգել են այն մեկնաբանությանը, որ գալուտի պատճառը միայն ազգային մեղքը չէ. գալուտն անհրաժեշտ փուլ է ազգային ազատագրման (գեուլլա) հասնելու համար: Դա ազգային վերածննդի նախադրյալ է, անհրաժեշտ պայման, հետևաբար՝ ժամանակավոր երևույթ: Կրոնական սիոնիզմի ներկայացուցիչներից մեկի՝ ռաբբի Կուկի ուսմունքի համաձայն՝ վերադարձի գաղափարը ուժ է տալիս գալուտի վիճակում գտնվող հրեա ժողովրդին:

Փաստորեն, հրեա մտածողները համառորեն ու հետևողականորեն ձգտել են սկզբում որպես ազգային աղետ ընկալվող երևույթը իրենց մեկնաբանությունների շնորհիվ դարձնելու հրեա ժողովրդի փրկության, վերածննդի, ազատագրման նախապայման, և հոգեպես ընկճվելու պատճառը դարձնելու հոգեկան զարթոնքի, լավատեսության պատճառ՝ սնելով ազատագրման նկատմամբ ժողովրդի հավատը: Այլ կերպ ասած՝ դեպի լավը փոխելու ազգային հոգեբանությունը, ինչը նրանց հաջողվել է[25]:

Կարծում ենք, նույն խնդիրն արդիական է նաև մեզ համար:

պատերազմի հրեական նախատիպի մասին, և որոնցում կան բազմաթիվ կրոնաբարոյական ու կրոնափիլիսոփայական հարցերի պատասխաններ:

[24] Տես «Галут». «КЕЭ», т. 2, кол. 28–32 (http://www.eleven.co.il/?mode=article&id=11035&query=%C3%C0%CB%D3%D2):

[*] Գալուտ (արտաքսում)՝ իրենց երկրից դուրս հրեաների ապրելու գաղափարը. մինչև Իսրայելի Պետության ստեղծումն այն համարժեք էր «սփյուռք» հասկացությանը:

[25] Տես նույն տեղում:

ПОЛИТИЧЕСКАЯ ПСИХОЛОГИЯ

НЕКОТОРЫЕ ЭТНОПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ ГЕНОЦИДА АРМЯН

А. К. ЯЛАНУЗЯН, полковник, заместитель главного редактора военно-научного журнала «Айкакан банак» ИНСИ МО РА,
С. Г. САРДАРЯН, аспирант Института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Геноцид, как и любое другое бедствие (как антропогенное, так и стихийное), связанное с массовой гибелью людей той же национальности, вызывает этнопсихологическое потрясение, оказывающее воздействие на психику нескольких поколений. Это потрясение может проявляться в различных формах: Богоотрицания, Богообвинения, Богоискания, обвинения в адрес не только палачей, но и самих жертв в их непротивлении насилию и т. д. Все эти феномены были свойственны и представителям различных поколений армян. В особенности противоречивые оценки давались жертвам: с одной стороны – восхищение их героической самообороной, с другой – покорная готовность «идти на заклание».

Важность проблемы моральной оценки поведения жертв Геноцида обусловлена тем, что связана с их двойственным поведением: героической самообороной и безропотной жертвенностью, т. е. с проблемами военно-патриотического воспитания новых поколений армян. Армянская Апостольская Церковь 24 апреля 2015 г. произвела канонизацию жертв Геноцида, а во Всеармянской декларации к 100-летней годовщине Геноцида армян они названы «мучениками и героями».

В этом аспекте, по мнению авторов, целесообразно в официальных документах не конкретизировать комментарии, а акцентировать внимание именно на героизме и святости жертв Геноцида.

SOME ETHNOPSYCHOLOGICAL ASPECTS OF THE ARMENIAN GENOCIDE

A. K. YALANUZYAN, Colonel, Deputy Editor-in-Chief, "Haikakan Banak" Defense-Academic Journal, INSS, MOD, RA,
S. G. SARDARYAN, PhD Student, Institute of Philosophy, Sociology and Law, NAS, RA

SUMMARY

Genocide, as any other disaster (both anthropogenic and natural), which relates to the mass mortality of people of the same nationality, causes ethno-psychological shock impacting on the psyche of some generations. This shock can manifest itself in different forms: denying the existence of God, God-blaming, God-seeking, accusing not only the torturers, but the victims of violence of their non-resistance, etc. All these phenomena have been characteristic of the representatives of various generations of Armenians as well. Particularly, controversial assessments were given to the victims: admiration for their heroic self-defense – on the one hand, and submissive readiness "to go like a lamb to the slaughter" – on the other.

The importance of the problem of moral assessment of the behavior of the Armenian Genocide victims is conditioned by the fact that it relates to their twofold behavior: heroic self-defense and uncomplaining self-sacrificingness, i. e. to the problems of military-patriotic education of Armenians' new generations. On 24 April, 2015 the Armenian Apostolic Church canonized the Genocide victims, and they were called "martyrs and heroes" in the Pan-Armenian Declaration on the Centennial of the Armenian Genocide.

In this aspect, according to the authors, it is expedient not to particularize the comments in the official documents, but to focus on the heroism and sanctity of the Genocide victims.

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Հ. Ի. ԳԵՎՈՐԳՅԱՆ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ, ՀՀ ՊՆ ՌԱՎ-ի ռազմատեխնիկական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ

Մի շարք դեպքերում բնակելի տարածություններին տիրապետման, դրանց օգտագործման և տնօրինման իրավազորությունների իրականացման հետ կապված հարաբերություններում բնակարանի սեփականատիրոջ հետ հանդես են գալիս այն քաղաքացիները, որոնք ունեն տվյալ բնակելի տարածությունն ինքնուրույն օգտագործելու իրավունք:

Ակնհայտ է, որ սեփականատերն իրեն պատկանող բնակելի տարածության նկատմամբ օժտված է առավելագույն իրավազորություններով, իսկ այլ իրային իրավունքներ ունեցողները՝ սակավ իրավազորություններով: Ուստի այլ իրային իրավունքներն ընդունված է անվանել սահմանափակ իրային իրավունքներ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում կա բնակելի տարածության նկատմամբ իրային իրավունքների կանոնակարգմանը վերաբերող հատուկ գլուխ (14-րդ)[1], որտեղ, սակայն, արտացոլված է քաղաքացիների այլ իրային իրավունքներին առնչվող հարցերի միայն չնչին մասը:

Այսպիսով՝ թեև օրենսդիրը պայմանականորեն իրային իրավունքների թվին է դասում նաև սեփականատեր չհանդիսացող անձանց բնակելի տարածության օգտագործման իրավունքը, քննարկվող իրավունքի բնույթը մինչ օրս մնում է անորոշ, որովհետև քաղաքացիական օրենսդրության մեջ հատուկ նշում չկա դրա՝ որպես սահմանափակ իրային իրավունքի մասին: Մինչդեռ դրա իրավական բնույթի որոշակիացումն ունի կարևոր նշանակություն, որովհետև այն բանից կախված, թե ինչ բնույթ ունի տվյալ իրավունքը՝ իրային, թե՞ պարտավորական, առաջանում են տարբեր իրավական հետևանքներ: Մասնավորապես՝ իրավունքը իրայինների շարքը դասելը ընձեռում է վինդիկացիոն* և նեգատոր** հայցերի միջոցով այդ

[1] Տես «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք», 28 հուլիսի 1998 թ., հմ. ՀՕ-239, գլուխ 14 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 1998, հմ. 17(50)):

* Վինդիկացիոն հայցը (լատ. *vindicatio*՝ «պաշտպանում եմ», «պահանջում եմ»)՝ գույքի ապօրինի տիրապետողից այն հետ պահանջելու հայցը, որով սեփականատերը դիմում է դատարան:

** Նեգատոր հայցը (լատ. *negatorius*՝ «մերժողական», «ժխտողական») գույքի տնօրինման և օգտագործման իրավունքի խախտումը վերացնելու սեփականատիրոջ պահանջն է, որով նա դիմում է դատարան:

իրավունքի իրային-իրավական պաշտպանության, ինչպես նաև իրային-իրավական պահանջների առաջնային (նախապատվությամբ) բավարարման հնարավորություն: Իրային իրավունքի բովանդակությունը, ի տարբերություն պարտավորականից, ենթադրում է իրավազորությունների ավելի ընդգրկուն շրջան, քանի որ իրային իրավունքը ենթադրում է իրի վրա անմիջական ներգործություն՝ առանց դրա սեփականատիրոջ մասնակցության:

Հետևաբար՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի իրավական բնույթի անորոշությունը իրավակիրառ պրակտիկայում կարող է հանգեցնել այն բանին, որ բնակելի տարածության օգտագործման իրավունքի իրականացման ընթացքում ծագած վեճերի ժամանակ կողմերը կիրառեն իրարամերժ իրավական մոտեցումներ, ինչը կդժվարացնի վեճերի լուծումը:

Ժամանակակից հետազոտողները նշում են, որ իրային իրավունքը «այնպիսի բացարձակ իրավունք է, որի օբյեկտը իրն է, և որը իրավատիրոջը ընձեռում է իրի վրա անմիջականորեն ներգործելու (ներազդելու) հնարավորություն»[2]: Մասնագիտական գրականության մեջ թվարկվում են իրային իրավունքի հետևյալ հատկանիշները. իրային իրավունքը անժամկետ է, դրա օբյեկտը իրն է, պարտավորական իրավունքներից բխող պահանջների համեմատությամբ իրային իրավունքներից բխող պահանջները ենթակա են առաջնային բավարարման (նախապատվության իրավունք), իրային իրավունքին բնորոշ է հետևելու իրավունք և, վերջապես, իրային իրավունքներն օժտված են բացարձակ պաշտպանությամբ[3]: Վերոնշյալ չափանիշները վկայում են իրային իրավունքներն առանձնացնելիս օրենսդիրի գրաված անկայուն դիրքորոշման մասին, քանի որ նշված հատկանիշները երբեմն բնորոշ են այնպիսի իրավունքների, որոնք միայն վերապահումով են համարվում իրային, իսկ երբեմն էլ ընդհանրապես չեն դասվում իրայինների շարքը[4]:

Տարբեր հեղինակներ իրային իրավունքների բնույթի որոշման համար առաջարկում են տարբեր չափանիշներ (հատկանիշներ): Ըստ մի շարք հեղինակների՝ իրային իրավունքների կարևոր հատկանիշներից է օրենքում իրային իրավունքների տեսակների և բովանդակության, ինչպես նաև դրանց առաջացման հիմքերի ուղղակի մատնանշումը[5]:

Լ. Վ. Շչեննիկովան իրային իրավունքի կարևոր հատկանիշներից է համարում բացառիկությունը: Նա առաջարկում է օրենսդրությամբ ամրագրել իրային իրավունքները բացառիկության հատկանիշով օժտող ընդհանուր կանոնը, որի համաձայն՝ տվյալ առարկայի նկատմամբ որոշակի իրային իրավունք սահմանելուց հետո նույն բովանդակությամբ որևէ այլ իրավունք չի կարող սահմանվել[6]:

---

[2] Տես *Л. Ю. Михеева.* Доверительное управление имуществом. М., 1999, с. 42:

[3] Տես «Гражданское право». Учебник, ч. 1. Под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого. М., 2011, с. 328:

[4] Տես նույն տեղում:

[5] Տես *И. А. Емелькина.* Вещные права на жилые и нежилые помещения: приобретение и защита. М., 2003, с 14; *К. И. Скловский.* Собственность в гражданском праве. М., 2002, сс. 155, 435:

[6] Տես *Л. В. Щенникова.* Вещное право. Учебное пособие. М., 2006, сс. 56–57:

Որպես իրային իրավունքների կամընտրական (ֆակուլտատիվ) հատկանիշ առանձնացվում է դրանց գոյության անժամկետայնությունը (ժամանակի անսահմանափակություն): Ընդհանուր կանոնի համաձայն՝ իրային իրավունքները չունեն իրականացման ժամկետներ, բայց, միևնույն ժամանակ, իրավունքի ժամանակային սահմանափակությունը բավարար չափանիշ չէ դրա իրային բնույթը ժխտելու համար:

Որոշ հետազոտողներ դասակարգման համար որպես չափանիշ առաջարկում են իրային իրավունքների այնպիսի հատկանիշը, ինչպիսին պարտավորաիրավական բնույթի պահանջների համեմատությամբ իրային-իրավական պահանջների առաջնային բավարարումն է[7], այսպես կոչված առաջնայնության, կամ նախապատվության, իրավունքը[8]: Լ. Վ. Շչեննիկովայի կարծիքով՝ միևնույն գույքի նկատմամբ իրային և պարտավորական իրավունքների միաժամանակյա գոյության դեպքում նախապատվությունը պետք է տրվի առաջինին: Ավելին. նա առաջարկում է քաղաքացիական օրենսգրքի բովանդակությունը լրացնել «Իրային իրավունքների առաջնահերթ գործողությունը» վերտառությամբ հատուկ հոդվածով, թեև չի բացառում նաև իրային իրավունքների նախապատվության սկզբունքից բացառությունների գոյության հնարավորությունը[9]:

Իրավունքը որպես իրային որակելու համար իրավաբանորեն սահմանված չափանիշներ չլինելը հանգեցրել է նաև իրային իրավունքների կարգախմբի (կատեգորիայի) գործնական նշանակության կորստի. «վերջին ժամանակներում սկսել են խուսափել իրավագիտությանը վաղուց հայտնի քաղաքացիական իրավահարաբերությունների՝ իրայինի և պարտավորականի դասակարգումից (տարանջատումից): Նման իրավիճակ ստեղծվեց այն պատճառով, որ քաղաքացիական իրավունքի գիտությունը չկարողացավ ցույց տալ նշված տարանջատման օգտակարությունը և գործնական կիրառության տեղը»[10]:

Այսպիսով՝ սուբյեկտիվ իրավունքը որպես իրային իրավունք բնորոշելու խնդիրը արդիական է նաև այսօր: Ակնհայտ է, որ անհրաժեշտ է օրենսդրորեն հստակ կերպով ամրագրել իրային իրավունքի իրական հատկանիշները: Ինչպես նշում է Ա. Ա. Իվանովը, «օրենքում իրային իրավունքների հատկանիշների հստակ ամրագրումը հնարավորություն կտար խուսափելու շատ վեճերից: Ավելին. քաղաքացիական օրենսգրքում իրային իրավունքների մանրամասն կանոնակարգումը հնարավորություն կընձեռեր ոչ թե չթվարկելու անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրային իրավունքները, այլ միայն սահմանելու, որ պետական գրանցման են ենթակա բոլոր իրային իրավունքները»[11]:

---

[7] Տես «Гражданское право». Учебник, ч. 1. Под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого. СПб., 1996, с. 286; *А. И. Масляев.* Понятие и виды вещных прав. «Закон», 2004, № 2:

[8] Տես *А. В. Власова.* К дискуссии о вещных и обязательственных правах. «Правоведение», 2001, № 1:

[9] Տես *Լ. Վ. Շչեննիկովա,* Նշ. աշխ., էջ 58–59:

[10] Տես *О. А. Красавчиков.* Юридические факты в советском гражданском праве. М., 1958, с. 175:

[11] Տես *А. А. Иванов.* О системе изложения гражданского права. «Преподавание граж-

Իրային իրավունքը, որպես կանոն, կրում է բացարձակ բնույթ, ինչից բխում է իրային-իրավական հայցերի միջոցով դրա քաղաքացիաիրավական պաշտպանության անհրաժեշտությունը, ընդսմին այդ իրավունքը կարող է պաշտպանվել ցանկացած անձից, այդ թվում՝ գույքի սեփականատիրոջից:

Վերը հիշատակված հետևելու իրավունքի էությունն այն է, որ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի (կամ այլ իրային իրավունքի) փոխանցումն այլ անձի դեռ հիմք չէ տվյալ գույքի նկատմամբ այլ իրային իրավունքների դադարման համար, այսինքն՝ իրավունքը հետևում է գույքին (իրին):

Ընդ որում, նախքան «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 04.10.2005 թ. ՀՕ-188-Ն օրենքի[12] ընդունումը, քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը ամրագրում էր մի դրույթ, որի համաձայն՝ «Բնակելի շենքի կամ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելը հիմք չէ բնակելի տարածության օգտագործման իրավունքի դադարման համար, բացառությամբ այն դեպքի, երբ բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձը մինչև սեփականության իրավունքը փոխանցելը նոտարական կարգով վավերացված պարտավորություն է ստանձնել այդ իրավունքից հրաժարվելու մասին»: Մինչդեռ վերոնշյալ օրենքով քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունից հետո նույն 225-րդ հոդվածը որևէ կերպ չի լուսաբանում այդ հարցը: Համեմատության համար նշենք, որ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 292-րդ հոդվածում կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելը հիմք է բնակելի տարածության օգտագործման իրավունքի դադարման համար, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Փաստորեն, ՌԴ-ում սեփականատիրոջ ընտանիքի անդամների բնակելի տարածության օգտագործման իրավունքը զրկվել է իրային իրավունքի կարևոր հատկանիշներից մեկից՝ հետևելու իրավունքից: Նման փոփոխությունը բացատրվում է այն բանով, որ նախկինում գործած նորմը, որը սեփականության իրավունքն այլ անձի փոխանցվելու դեպքում չէր նախատեսում օգտագործման իրավունքի դադարում, ստեղծում էր մի իրավիճակ, որում բնակելի տարածության նոր սեփականատիրոջ իրավունքը խիստ ծանրաբեռնվում և սահմանափակվում էր:

ՀՀ գործող օրենսդրության թերություններից է այն, որ չկա բնակելի տարածությունների նկատմամբ իրային իրավունքների սպառիչ թվարկումը բովանդակող նորմ, ինչն էլ հանգեցնում է իրային իրավունքների առկա տեսակների հարցում մասնագետների տարակարծության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածում, սեփականության իրավունքից բացի, որպես իրային իրավունքի տեսակներ նախատեսվում են կառու-

---

данского права в современных условиях». Материалы конференции 23-26 марта 1999 г. СПб., 1999, с. 21:

[12] Տես ՀՀ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2005 թ. հոկտեմբերի 4-ի հմ. ՀՕ-188-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2005, հմ. 71(443)):

ցապատման իրավունքը, գույքի օգտագործման իրավունքը, սերվիտուտը* և գրավի իրավունքը: Սակայն այս թվարկումը սպառիչ չէ: Իրականում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվում են 170-րդ հոդվածում չթվարկված այլ իրային իրավունքներ ևս: Մասնավորապես՝ այդպիսիք են բնակարանային, ամառանոցային, ավտոտնակային կամ այլ կոոպերատիվի անդամի և փայակուտակման իրավունք ունեցող այլ անձանց՝ հիշյալ օբյեկտների իրենց պատկանող մասի նկատմամբ մինչև փայավճարը լրիվ մարելը և սեփականատեր դառնալը ունեցած իրավունքը (Քաղ. օր. 172-րդ հոդված, 6-րդ կետ), ուզուֆրուկտից և ուրիշի տանը ցմահ ապրելու (բնակվելու) իրավունքից ածանցվող՝ սեփականատիրոջ ընտանիքի անդամների՝ բնակելի տարածությունից օգտվելու իրավունքը (Քաղ. օր. 225-րդ հոդված) և կտակային հանձնարարությամբ բնակելի տարածությունից օգտվելու իրավունքը (Քաղ. օր. 1213-րդ հոդված), մշտական անժամկետ հողօգտագործման իրավունքը (Քաղ. օր. 205–206-րդ հոդվածներ), անշարժ գույքին բարեխիղճ, բացահայտ և անընդմեջ տիրապետման իրավունքը (Քաղ. օր. 187-րդ հոդված), հիմնական պարտավորությունում պարտատիրոջ շահերն ապահովող պահումը (Քաղ. օր. 373-րդ հոդված)[13]:

Բնակելի տարածության օգտագործման իրավունքի իրավական բնույթի որոշակիացումն ու պարզաբանումը, անշուշտ, կարևոր նշանակություն ունեն նաև զինծառայողների բնակարանային պահանջմունքների բավարարման տեսանկյունից: Ինչպես գիտենք, զինծառայողների բնակարանային իրավունքները կարգավորվում են «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին»[14] և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության մասին»[15] ՀՀ Կառավարության՝ համապատասխանաբար, 2005 թ. հունիսի 9-ի հմ. 947 և 2007 թ. մարտի 7-ի հմ. 384 որոշումներով հաստատված կարգերով, որոնք հիմնվում են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի վրա: ՀՀ պաշտպանության նախարարության բնակարանային ֆոնդի այն բնակելի տարածությունների ցանկը, որոնք անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում են զինծառայողներին և ենթակա չեն սեփականության իրավունքով տրամադրման, հաստատում է ՀՀ պաշտպանության նախարարը:

ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող և ՀՀ պաշտպանության նախարարի հաստատած ցանկում ընդգրկված բնակելի տարածություններն անհատույց օգտագործման իրավունքով կարող են տրամադրվել բնակության վայրից (հաշվառման վայրից) 30 կիլոմետր և ավելի հեռավորությամբ

* Սերվիտուտ՝ ուրիշի հողամասից սահմանափակ օգտվելու իրավունք:

13 Տես «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք»:

14 Տես ՀՀ Կառավարության 2005 թ. հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» հմ. 947-Ն որոշումը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2005, հմ. 48 (420)):

15 Տես ՀՀ Կառավարության 2007 թ. մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության մասին» հմ. 384-Ն որոշումը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», հմ. 48 (546)):

ծառայության անցկացման վայրում մշտական բնակելի տարածություն չունեցող զինծառայողներին՝ անկախ բնակարանային հաշվառման մեջ գտնվելու հանգամանքից: ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող և պաշտպանության նախարարի հաստատած ցանկում չընդգրկված բնակելի տարածություններն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում են բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողներին*:

Անհատույց օգտագործման իրավունքով իրենց տրամադրված բնակարանները առանց այլ բնակելի տարածք տրամադրելու ազատում են՝

1) «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերով սահմանված հիմքերով զինվորական ծառայությունից արձակված զինծառայողները և օրենքով սահմանված՝ նրանց ընտանիքների անդամները,

2) «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված հիմքերով զինվորական ծառայությունից արձակված զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները, եթե զինծառայողը չունի 12 տարի 6 ամիս զինվորական ծառայության ստաժ կամ ունի առնվազն 12 տարի 6 ամիս զինվորական ծառայության ստաժ, սակայն չունի սույն կարգով նախատեսված բնակարանային պայմանների բարելավման կարիք,

3) առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողները, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքները, եթե ՀՀ տարածքում ապահովված են այլ բնակելի տարածությամբ:

Ստորև դիտարկենք հռոմեական իրավունքից հայտնի այնպիսի անձնական սերվիտուտներ, ինչպիսիք են ուզուֆրուկտը և ուրիշի տանը ցմահ բնակվելու իրավունքը (*habitatio*):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը չի հիշատակում անձնական սերվիտուտները: Ընդ որում, մեր կարծիքով, անձնական սերվիտուտների շարքն է դասվում, մասնավորապես, բնակելի տարածությունն օգտագործելու այն անձանց իրավունքը, որոնք սեփականատեր չեն: Որոշ հեղինակներ առաջարկում են այդ իրավունքն անվանել ուզուֆրուկտ[16]:

ՀՀ գործող օրենսդրությունը չի պարունակում «ուզուֆրուկտ» հասկացութ-

---

* Բնակարան տրամադրելիս հաշվի է առնվում բնակարանային հաշվառման վերցվելու ամսաթիվը: Առաջնահերթությունը տրվում է. 1) ՀՀ Զինված ուժերի հրամանատարական կազմին (մինչև առանձին գումարտակի հրամանատարը, շտաբի պետը և հրամանատարի տեղակալը ներառյալ), 2) 10 և ավելի տարի ծառայած զինծառայողներին, 3) ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակից զինծառայողներին, 4) Ազգային հերոսներին և 1-ին և 2-րդ աստիճանների «Մարտական խաչ» շքանշանների ասպետ զինծառայողներին, 5) 5 և ավելի տարի ծառայած և պաշտոնի առաջխաղացման հեռանկար ունեցող զինծառայողներին, 6) բազմանդամ ընտանիք ունեցող կամ այն զինծառայողներին, որոնց ընտանիքի անդամների թվում կա հաշմանդամ, 7) երկվորյակ, եռյակ և երեքից ավելի երեխաներ ունեցող զինծառայողներին:

[16] Տես *А. А. Иванов.* О проекте Концепции развития законодательства о вещном праве. «Вестник Высшего арбитражного суда Российской Федерации», 2009, № 4:

յունը: Մասնագիտական գրականության մեջ ուզուֆրուկտը բնորոշվում է որպես անձնական բնույթի սահմանափակ իրային իրավունք, որի ուժով օգտագործողը (ուզուֆրուկտարին) ձեռք է բերում գույքն իր նախանշանակմանը համապատասխան տիրապետելու և օգտագործելու իրավազորություն: Ընդհանուր կանոնի համաձայն՝ ուզուֆրուկտն առավել ամբողջական իրային իրավունք է, որի բովանդակությունն են կազմում գույքին տիրապետման և դրա օգտագործման իրավազորությունները: Այն գույքը, որի նկատմամբ սահմանված է ուզուֆրուկտ, օգտագործելու իրավազորությունը պատկանում է բացառապես ուզուֆրուկտարիին, որը ուզուֆրուկտի ուժով իրավասու է քաղելու ծանրաբեռնված գույքի օգտագործումից ստացված եկամուտը:

Բնակվելու իրավունքն իր բովանդակությամբ ավելի սահմանափակ իրային իրավունք է, քան ուզուֆրուկտը: Մեր կարծիքով՝ բնակելի տարածությունում բնակվելու իրավունքը ոչ թե ուզուֆրուկտի, այլ գերմանական իրավունքում հայտնի «սահմանափակ անձնական սերվիտուտի» տարատեսակ է[17]: Ցմահ բնակության իրավունքի համեմատությամբ ուզուֆրուկտն օժտված է ավելի լայն բովանդակությամբ, քանի որ ներառում է նաև գույքի պտուղները (օգտակար հատկությունները) քաղելու իրավազորությունը: ՈՒզուֆրուկտը հենց օգտատիրապետումն է: Ցմահ բնակության իրավունքը ներառում է բնակարանային պահանջմունքների բավարարմանն ուղղված իրավազորություն և՝ ոչ ավելի: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք սեփականատիրոջ ընտանիքի անդամների, կտակային հանձնարարության ուժով հրիտակառուի* և ապրուստը ցմահ հոգալու պայմանագրով ռենտա ստացողի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը դիտել որպես իրային իրավունքների այնպիսի տարատեսակ, ինչպիսին «սահմանափակ անձնական սերվիտուտն» է:

Այսպես. նշված իրավունքներին բնորոշ են սահմանափակ անձնական սերվիտուտի հետևյալ հատկանիշները. դրանք սահմանվում են կոնկրետ ֆիզիկական անձանց նկատմամբ, կրում են խիստ անձնական բնույթ (կապված են այն անձի հետ, որն օրենքի համաձայն ճանաչված է սեփականատիրոջ ընտանիքի անդամ կամ նշված է կտակում կամ պայմանագրում), ունեն նպատակային նշանակություն՝ ուրիշի բնակելի տարածության օգտագործում բացառապես անձնական բնակության համար, անփոխանցելի են, դրանց գործողության ժամկետը, որպես կանոն, սահմանվում է իրավազոր անձի կյանքի տևողությամբ (երբեմն՝ ստույգ ժամկետով), անօտարելի են, չեն կարող գրավադրվել, ժառանգությամբ չեն փոխանցվում, բռնագանձումը դրանց վրա չի տարածվում, կրում են անհատույց բնույթ, այսինքն՝ ո՛չ հրիտակառուն, ո՛չ ռենտա ստացողը, ո՛չ սեփականատիրոջ ընտանիքի անդամը սեփականատիրոջը չեն վճարում նրան պատկանող բնակելի տարածությունում իրենց բնակության համար (եթե տվյալ իրավունքը սահմանող ակտով կամ սեփականատիրոջ կամ իրավազոր անձի հետ կայացված համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ):

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ բնակելի տարածության օգտագործման

[17] Տես *В. Бергман.* Гражданское уложение Германии. М., 2006, сс. 295–296:

* Կտակով որպես ժառանգություն թողած ունեցվածքի՝ հրիտակի տեր դարձած անձ:

իրավունքի իրավական բնույթը հստակեցնելու համար առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ավելացնել «Սահմանափակ անձնական սերվիտուտ» վերտառությամբ նոր հոդված, որում սահմանվեն այդ սերվիտուտի առանձնահատկությունները:

ПРАВОВЕДЕНИЕ

ПРАВОВОЙ ХАРАКТЕР ПРАВА ПОЛЬЗОВАНИЯ ЖИЛЫМ ПОМЕЩЕНИЕМ

А. И. ГЕВОРГЯН, соискатель кафедры гражданского права юридического факультета ЕГУ, главный специалист отдела военно-технического сотрудничества военно-промышленного управления МО РА

РЕЗЮМЕ

Анализ действующего законодательства РА и правоприменительной (в том числе, международной) практики показывает, что право пользования жилым помещением, возникающее у членов семьи собственника на основе завещательного отказа и по договору пожизненного содержания с иждивением, по своей правовой сути, является вещно-правовым и имеет сходство с личными сервитутами. Однако действующим законодательством РА данный институт не предусмотрен. В связи с этим предлагается в целях усовершенствования законодательства в гражданский кодекс РА ввести новую статью под названием «Ограниченный личный сервитут».

JURISPRUDENCE

THE LEGAL NATURE OF THE RIGHT TO USE LIVING ACCOMMODATION

H. I. GEVORGYAN, Applicant at the Chair of Civil Law, Law Faculty, YSU, Senior Specialist at the Military-Technical Cooperation Branch, Defense-Industry Department, MOD, RA

SUMMARY

The analysis of the current Legislation of the Republic of Armenia and law enforcement (including international) practice showcases that the right to use living accommodation, which the members of the owner's family acquire based on the testamentary gift and the contract of lifelong support with maintenance, is proprietary, by its legal nature, and resembles personal servitudes. However, the current Legislation of the Republic of Armenia makes no provision for this institution. In these terms, it is proposed to introduce a new article entitled “Limited Personal Servitude” into the RA Civil Code for improving the Legislation.

ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԾԱՎԱԼԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ

Հ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, արդարադատության գնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՌԴ ՊՆ Ռազմական համալսարանի քրեագիտության ամբիոնի դոկտորանտ

Զինված հակամարտությունների՝ որպես իրավական կատեգորիայի երևույթն իրականում ավելի բարդ է, քան այն մոդելը, որը ներկայացված է միջազգային մարդասիրական իրավունքում (այսուհետև՝ ՄՄԻ): Այսօր գոյություն ունեն այնպիսի հակամարտություններ, որոնք, մեր կարծիքով, չեն կարող լիարժեք կերպով կարգավորվել միջազգային կամ ոչ միջազգային զինված հակամարտությունների իրավունքով: ՄՄԻ-ում ներառված հասկացություններից և ոչ մեկին չեն համապատասխանում, այսինքն՝ չեն տեղավորվում միջպետական կամ ներքին հակամարտությունների ավանդական մոդելի շրջանակներում, այնպիսի իրավիճակներ, ինչպիսիք են, օրինակ, «տարածքների նկատմամբ վերահսկողությունն առանց ռազմական ներկայության», «ոչ միջազգային զինված հակամարտությանը մեկ կամ մի քանի երրորդ պետությունների միջամտությունը՝ հակամարտության կողմերից մեկին ցույց տրվող աջակցությամբ», «ոչ միջազգային զինված հակամարտությանը բազմազգ ուժերի միջամտությունը խաղաղարարական օպերացիայի ընթացքում», «մի քանի պետությունների տարածքներում տեղի ունեցող ոչ միջազգային զինված հակամարտություն», կամ այսպես կոչված «վերազգային» («արտապետական») հակամարտություն, ««արտահանվող» ոչ միջազգային զինված հակամարտությունը», այսպես կոչված «ապատեղայնացված», կամ «արտատարածքային», զինված հակամարտությունը, «անդրսահմանային ոչ միջազգային զինված հակամարտությունը», «ահաբեկչության դեմ միջազգային պայքարը»: Ընդ որում, ո՛չ 1977 թ. Հաագայի կոնվենցիաները (ՀԿ-ներ), ո՛չ պատերազմի զոհերի պաշտպանության մասին 1949 թ. Ժնևյան կոնվենցիաները (ԺԿ-ներ), ո՛չ էլ 1977 թ. Լրացուցիչ արձանագրությունները (ԼԱ-եր) չեն բովանդակում որևէ հատուկ դրույթ այլ տեսակների հակամարտությունների վերաբերյալ: Այդ պատճառով նման զինված հակամարտությունների իրավական որակումն ստիպված հիմնվում է պետությունների պրակտիկայի և միջազգային

իրավունքի ուսմունքի վրա: Մինչդեռ զինված հակամարտության բնույթով ու նրա դասակարգմամբ պայմանավորված են լինում՝ այն իրավաբանական նորմերի ծավալն ու բովանդակությունը, որոնք պետք է կիրառեն զինված հակամարտության կողմերը, հովանավորյալ անձանց* կարգախմբերն ու կարգավիճակը և նրանց պաշտպանության ծավալն ու իրավական ռեժիմը, ՄՄԻ-ի նորմերի լուրջ խախտումների որակումը որպես պատերազմական հանցագործություն, իրավական ապահովման բովանդակությունը, զինված հակամարտության կողմերի կատարած պատերազմական հանցագործությունների քննության կազմակերպումը:

Ըստ էության, տարբեր բնույթի զինված հակամարտությունների դեպքում միևնույն գործողությունը կարող է որակվել որպես և՛ պատերազմական հանցագործություն (միջազգային բնույթի հակամարտության ժամանակ), և՛ ոչ այդպիսին (ոչ միջազգային բնույթի հակամարտության ժամանակ): Այսինքն՝ ՄՄԻ-ի նորմերի որոշ լուրջ խախտումներ պետք է կանխվեն միայն այն դեպքում, եթե դրանք կատարվել են միջազգային զինված հակամարտության ժամանակ, և պայմանով, որ այդ խախտումների զոհ են դարձել հովանավորյալ անձինք[1]: Ո՛չ 1949 թ. օգոստոսի 12-ին ընդունված բոլոր Ժնևյան կոնվենցիաների համար ընդհանուր 3-րդ հոդվածը, ո՛չ ԺԿ-ների 2-րդ Լրացուցիչ արձանագրությունը համապատասխան պարտավորություն չեն նախատեսում: ՄՄԻ-ի նորմերի վերլուծությունը վկայում է, որ դրանց մեծ մասը նախատեսված է պետությունների միջև զինված բախումների պայմաններում հարաբերությունների կարգավորման համար, և միայն փոքր մասն է վերաբերում ոչ միջազգային բնույթի զինված հակամարտություններին: Այսպես, օրինակ, ԺԿ-ն և ԼԱ-ն ունեն շուրջ 600 հոդված, որոնցից ոչ միջազգային զինված հակամարտությունների դեպքում կիրառվում են միայն ընդհանուր 3-րդ և 2-րդ ԼԱ-ի 28-րդ հոդվածները: Այսինքն՝ որոշակի աստիճանի ինտենսիվության հասած ոչ միջազգային զինված հակամարտության դեպքում

* Հովանավորյալ անձինք այն անձինք են, որոնք ռազմական գործողությունների ժամանակ գտնվում են պայմանագրային կամ սովորական մարդասիրական իրավունքի պաշտպանության տակ: Նրանց թվին դասվում են՝ վիրավորները, հիվանդները, նավաբեկյալները, ռազմագերիները, քաղաքացիական բնակչությունը և այն անձինք, որոնք չեն մասնակցում կամ դադարեցրել են մասնակցությունը մարտական գործողություններին, բժշկական անձնակազմը և հոգևորականները, մարդասիրական կազմակերպությունների և քաղաքացիական պաշտպանության կազմակերպությունների աշխատողները, ինչպես նաև միջնորդները:

[1] Տես «Конвенция (IV) о защите гражданского населения во время войны. Женева, 12 августа 1949 года», ст. 4 (https://www.icrc.org/rus/resources/documents/misc/geneva-convention-4.htm), նաև՝ «Конвенция (I) об улучшении участи раненых и больных в действующих армиях. Женева, 12 августа 1949 года», ст. 4, 5 (https://www.icrc.org/rus/resources/documents/misc/geneva-conventon-1.htm); «Конвенция (II) об улучшении участи раненых, больных и лиц, потерпевших кораблекрушение, из состава вооруженных сил на море. Женева, 12 августа 1949 года», ст. 6, 7, 10 (https://www.icrc.org/rus/resources/documents/misc/geneva-convention-4.htm); «Конвенция (III) об обращении с военнопленными. Женева, 12 августа 1949 года», ст. 4, 5 (https://www.icrc.org/rus/resources/documents/misc/geneva-conventon-2.htm):

կիրառվում են 2-րդ ԼԱ-ն, սովորութային միջազգային իրավունքի նորմերը և 3-րդ հոդվածը[2]: Ընդ որում, 3-րդ հոդվածը վերաբերում է այն անձանց, որոնք չեն մասնակցում ռազմական գործողություններին, և նրանց, ովքեր զենքը վայր են դրել, և միայն նվազ չափով՝ մարտական գործողությունների կարգավորմանը ու ռազմական գործողությունների հետևանքներից քաղաքացիական անձանց պաշտպանությանը[3], քանի որ չի բովանդակում իրավական նորմեր, որոնք պարտադրեին տարբերակել ռազմական և քաղաքացիական նշանակետերը, չի հիշատակում նշանակետի ընտրության ժամանակ համաչափության սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը[4] և չի սահմանում կոմբատանտների կարգավիճակը[*]: Փաստորեն, 2-րդ ԼԱ-ի՝ բավական մանրամասն կերպով մշակված նորմերի համալիրը իր ծավալով առաղրելի չէ 1-ին ԼԱ-ի այն նորմերի համախմբի հետ, որոնք արգելում են ոչ ընտրողական բնույթի հարձակումները[5], ինչպես նաև ավելորդ տանջանքներ պատճառող ռազմական գործողությունների վարման մեթոդների և միջոցների կիրառումը[6]:

Միջազգային և ոչ միջազգային բնույթի զինված հակամարտությունների ժամանակ կատարվող ռազմական հանցագործությունների միջև տարբերությունը նշվում է նաև Միջազգային քրեական դատարանի (այսուհետև՝ ՄՔԴ) Հռոմեական Կանոնադրությունում[7], որը միջազգային զինված հակամարտությունների դեպքում որպես պատերազմական հանցագործություններ սահմանում է ԺԿ 8 և պատերազմի օրենքների ու սովորույթների 26 լուրջ խախտումները, իսկ ոչ միջազգային բնույթի զինված հակամարտությունների դեպքում՝ 3-րդ հոդվածի 4 և պատերազմի օրենքների ու սովորույթների 15 լուրջ խախտումները: Կարմիր խա-

[2] Տես «Комментарий к Дополнительному протоколу II от 8 июня 1977 года, касающийся защиты жертв вооруженных конфликтов немеждународного характера». М., 2000, с. 52, пар. 4438:

[3] Տես «A Tentative Appraisal of the Old and New Humanitarian Law of Armed Conflict». «The New Humanitarian Law of Armed Conflict». Editorial scientific. Ed. by A. Cassese. Naples, 1971, PP. 492–493:

[4] Տես «Дополнительный протокол к Женевским конвенциям от 12 августа 1949 года, касающийся защиты жертв международных вооружённых конфликтов (Протокол I). Женева, 8 июня 1977 г.», ст. 51(5) (b), 57(2) (iii) и 85(3) (https://www.icrc.org/rus/assets/files/2013/ap_i_rus.pdf):

[*] «Ռազմագերի» տերմինը վերաբերում է հատուկ կարգավիճակին, որով երրորդ ԺԿ-ն օժտում է բացառապես միջազգային զինված հակամարտությունների ժամանակ գերի վերցված հակառակորդի զինծառայողներին: Ռազմագերիները չեն կարող քրեական հետապնդման ենթարկվել այն գործողությունների կատարման համար, որոնք ՄՄԻ-ի տեսանկյունից օրինական են (օրինակ՝ թշնամու վրա հարձակման համար): Ինչ վերաբերում է ոչ միջազգային զինված հակամարտություններին, ապա այս դեպքում ՄՄԻ-ն չի խոչընդոտում բռնված ապստամբների դատական հետապնդմանը զուտ այն բանի համար, որ մասնակցել են զինված պայքարին:

[5] Տես նույն տեղում, հոդ. 51:

[6] Տես նույն տեղում, հոդ. 35 (2):

[7] Տես «Римский статут Международного уголовного суда». Рим, 17 июля 1998 г., ст. 8 (2) (b) (http://www.un.org/ru/law/icc/rome_statute(r).pdf):

չի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ)՝ սովորութային իրավունքին նվիրված հիմնարար հետազոտությունը[8], ինչպես նաև ՄՔԴ Կանոնադրության 8-րդ հոդվածի վերլուծությունը[9] հանգեցնում են այն եզրակացության, որ միջազգային և ոչ միջազգային զինված հակամարտությունների հիմնական տարբերությունը պայմանավորված է ոչ թե ՄՄԻ-ի համապատասխան նորմերի էությամբ, այլ պատերազմողների կարգավիճակով և ենթադրում է դրանց կիրառում ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային զինված հակամարտությունների ժամանակ, թեև չի սահմանում դրանց կիրառման պայմանները: Սովորութային իրավունքի 161 նորմերից 140-ը կիրառելի են նաև ոչ միջազգային բնույթի զինված հակամարտությունների դեպքում:

Զինված հակամարտության նկատմամբ ՄՄԻ-ի նորմերի ամբողջ ծավալով կիրառման վերաբերյալ տարբեր գիտնականների ինչպես տեսական, այնպես էլ կիրառական մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց տեսակետները հաճախ չեն համընկնում, իսկ որոշ դեպքերում նույնիսկ հակադիր են[10]:

Մեր կարծիքով՝ պրոբլեմն այն է, որ միջազգային իրավունքի համակարգը շարունակում է կողմնորոշված մնալ դեպի միջպետական հարաբերություններ: Կարծում ենք, որ ՄՄԻ-ի նորմերի համահավասար կիրառման նկատմամբ որոշ պետությունների ցուցաբերած հակազդեցության պատճառը միջազգային հարաբերությունների և պետական ինքնիշխանության էությունների Վեստֆալյան համակարգով պայմանավորված փոխհարաբերության հարցն է, քանի որ ըստ այդ համակարգի՝ ինքնիշխանության հիմնական հատկանիշը ներքին պրոբլեմներն իր հայեցողությամբ, առանց դրսի միջամտության լուծելու պետության իրավունքն է: Դեռ 1949 թ. 3-րդ ընդհանուր հոդվածի մշակման ժամանակ նշվում էր, որ դրա կիրառումը «չի շոշափելու հակամարտության մեջ գտնվող կողմերի իրավաբանական կարգավիճակը», պետություններն էլ չէին ցանկանում ընդունել իրենց տարածքում ներքին զինված հակամարտության գոյության փաստը, քանի որ դա կարող էր դիտվել որպես քաղաքացիական պատերազմը կանխելու՝ կառավարության անկարողության ճանաչում[11]: Այս պատճառով պետությունները անտեսում են ազգային-ազատագրական շարժումների յուրահատկությունը, երբ հակամարտության կողմերից մեկը ոչ թե պետություն է, այլ իր պետականության համար զինված եղանակով պայքարող ուժ, ինչպես նաև միջազգային իրավունքի

[8] Տես *Ж.-М. Хенкертс, Л. Досвальд-Бек.* Обычное международное гуманитарное право. МККК, 2006: 1-ին և 2-րդ ԼԱ-երի նորմերը թվարկված են, համապատասխանաբար, Միջազգային և Ոչ միջազգային հակամարտություններ վերնագրերի տակ, իսկ ինչ վերաբերում է դրանց բովանդակությանը, ապա տարբերությունը մեծ չէ:

[9] Տես «The Handbook of International Humanitarian Law». Ed. by D. Fleck. Second edition. Oxford, 2008, Part 1204:

[10] Տես *Д. Г. Стюард*. К единому определению вооруженного конфликта в международном гуманитарном праве: анализ интернационализированного вооруженного конфликта. «Международный журнал Красного Креста» («МЖКК»), 2003, N 850:

[11] Տես *J. S. Pictet*. Commentary on the Geneva Conventions of 12 August 1949. International Committee of the Red Cross. Geneva, 1952, P. 395:

երկու հիմնարար սկզբունքների՝ ազգերի ինքնորոշման իրավունքի և պետական սահմանների անխախտելիության հակասականությունը[12]: Ընդ որում, միջազգային իրավունքի տառի համաձայն՝ ազգային-ազատագրական պատերազմների ժամանակ իրենց ազգային ազատագրման և անկախ պետության ստեղծման համար զենքը ձեռքներին պայքարի ելած գաղութացված կամ կախյալ ժողովուրդները կարող են ստանալ ապստամբած կամ պատերազմող կողմի կարգավիճակ[*] միայն այն դեպքում, երբ նրանց որպես այդպիսին ճանաչեն այլ պետություններ: Մեր կարծիքով՝ նման մոտեցումը ավելի շուտ զիջում է պետություններին, որպեսզի ոչ պետական խմբերը չկարողանան ՄՄԻ-ի կիրառելիությունն օգտագործել իրենց զինված պայքարն արդարացնելու համար: Այդ իսկ պատճառով մինչև այժմ պետություններն իրենց տարածքներում ապստամբական շարժումների անդամներին համարում են միջազգային զինված հակամարտությունների իրավունքով նախատեսված կարգավիճակի և պաշտպանության իրավունքներ չունեցող հանցագործներ, իսկ ոչ միջազգային բնույթի զինված հակամարտությունները դիտում են քրեական արդարադատության լույսով, ուստի այս դեպքում չկա «հովանավորյալ անձ» իրավաբանական հասկացությունը[13]:

Այսպիսով՝ զինված հակամարտություններին վերաբերող միջազգային-իրավական սահմանումների ոչ ճշգրտությունը, մեր կարծիքով, նաև նպատակ ունի ուժային կենտրոններին հնարավորություն տալ խաղարկելու այդ քարտը՝ տվյալ հակամարտության մասնակիցների վրա քաղաքական, ինչպես նաև այլ բնույթի ճնշումներ գործադրելու համար:

Ըստ այդմ անկախ զինված հակամարտության բնույթից՝ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը պետք է կիրառվեն ամբողջ ծավալով:

---

[12] Տես *Г. М. Григорян*. История возникновения и развития Нагорно-Карабахского конфликта. «Научные идеи С. Н. Трегубова и их влияние на развитие современной криминалистической науки в России». Сборник научных статей. М., 2007:

[*] Ապստամբներին՝ որպես «պատերազմող կողմի» ճանաչումը բացառում է նրանց հանդեպ զանգվածային անկարգությունների համար պատասխանատվության մասին պետության քրեական օրենսդրության կիրառումը, իսկ գերի վերցվածների վրա տարածվում է ռազմագերիների կարգավիճակը: Ապստամբները կարող են իրավական հարաբերությունների մեջ մտնել երրորդ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ, նրանցից ստանալ միջազգային իրավունքով թույլատրվող օգնություն: Ապստամբների իշխանությունները իրենց կողմից վերահսկվող տարածքներում կարող են ստեղծել կառավարման մարմիններ և հրապարակել նորմատիվ ակտեր: Այսպիսով՝ ապստամբներին «պատերազմող կողմ» ճանաչել, որպես կանոն, նշանակում է, որ հակամարտությունն ստացել է միջազգայինի որակ, ինչը նոր պետության ճանաչման առաջին քայլն է:

[13] Տես *Э. Дж. Карсуэлл*. Классификация конфликта: дилемма, стоящая перед военнослужащим. «МЖКК», 2009, N 873:

МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО

ХАРАКТЕР ВООРУЖЕННОГО КОНФЛИКТА И ЕГО ЗНАЧЕНИЕ ДЛЯ ОПРЕДЕЛЕНИЯ ОБЪЕМА ПРИМЕНЕНИЯ НОРМ МЕЖДУНАРОДНОГО ГУМАНИТАРНОГО ПРАВА

Г. М. ГРИГОРЯН, полковник юстиции, кандидат юридических наук, докторант кафедры криминалистики Военного Университета МО РФ

РЕЗЮМЕ

В современном мире существуют конфликты (например, такие ситуации, как «вмешательство одного или нескольких третьих государств в немеждународный вооруженный конфликт, поддерживая одну из сторон в конфликте», «вмешательство многонациональных сил в немеждународный вооруженный конфликт в ходе миротворческой операции», «международная борьба с терроризмом» и др.), которым не соответствуют определения вооруженных конфликтов, предусмотренных международным гуманитарным правом (МГП). Из-за этого в этих конфликтах большинство норм МГП не действует.

Необходимость четкой классификации конфликтов обусловлена тем, что в зависимости от характера вооруженного конфликта одно и то же деяние может квалифицироваться как военное преступление (при конфликте международного характера) или не квалифицироваться как таковое (при конфликте немеждународного характера).

В то же время многие государства не заинтересованы в уточнении данных определений. Проблема заключается в противоречии между природами международных отношений и государственного суверенитета, причем основным признаком суверенитета является право государства по своему усмотрению решать внутренние проблемы, поэтому государства не хотят признавать существования внутреннего вооруженного конфликта на своей территории и в полном объеме применять нормы МГП.

Нечеткость международно-правовых определений, касающихся вооруженных конфликтов, дает возможность силовым центрам порой оказывать в связи с этим политическое или иное давление на конфликтующие стороны. В связи с этим предлагается, чтобы нормы МГП применялись в полном объеме вне зависимости от характера конфликта.

INTERNATIONAL HUMANITARIAN LAW

THE NATURE OF ARMED CONFLICT AND ITS SIGNIFICANCE FOR DETERMINING THE SCOPE OF ADMINISTRATING THE NORMS OF THE INTERNATIONAL HUMANITARIAN LAW

H. M. GRIGORYAN, Colonel of Justice, PhD in Law, Doctoral Student in Criminalistics, Military University, Ministry of Defense, Russian Federation

SUMMARY

There are conflicts in the present-day world (e. g., such situations as “the intervention of one or some third powers in non-international armed conflict supporting one of the parties to the conflict”, “the intervention of multinational forces in non-international armed conflict in the course of peacekeeping operations,” “combating international terrorism” and others), which do not meet the definitions of armed conflicts specified in the International Humanitarian Law (IHL). In these terms, the majority of IHL norms has no real effect in these conflicts.

The need for a clear classification of conflicts is conditioned by the fact that depending on the nature of armed conflict, the same act may be qualified as a war crime (during the conflict of an international nature) or not (during the conflict of a non-international nature).

At the same time, many states are not interested in qualifying these definitions. The problem is in the contradiction between the natures of international relations and state sovereignty, though the main feature of sovereignty is the right of the state to settle discretionarily domestic problems, so the states do not want to recognize the existence of an internal armed conflict on their territory and to fully apply the IHL norms.

The vagueness of the international legal definitions relating to the armed conflicts enables power centers at times to exert in these terms political or other pressure upon the conflicting parties. Thus, it is suggested that the IHL norms should be fully applied, regardless of the nature of the conflict.

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Տ. Մ. Անտոնյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Ձևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*

Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի*

Տեքստերի թարգմանությունը՝
Ն. Ս. Մկրտչյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Լ. Հ. Պապիկյանի, Ք. Վ. Փիրոյանի

Համակարգչային ապահովումը՝ *Ա. Ա. Խաչատրյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Անգլերեն տեքստերի խմբագրում՝
Ա. Հ. Հակոբյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ուլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայք՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. փոստ՝ haykakanbanak@mil.am

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2015 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70×100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,25 մամուլ: Տպաքանակը՝ 500:
Տառատեսակները՝ «Arial», «Times» և «Baltika»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ խորհրդակցություն 2014 – 2015 թթ. Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքների ամփոփման հարցով

Երևան, պաշտպանության նախարարություն, 2015 թ. դեկտեմբերի 18

ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը մարտական հենակետերից մեկում

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 4 (86). 2015